

ՔՀԿ ՉԱՓԻՉ

Նպաստավոր միջավայրի և
ՔՀԿ-ների իրավագործման
կողմնացույց

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն 2021

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ





European Center for
Not-for-Profit Law



Funded by the European Union



ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ
ԻՆԹԵՐՆԵՇՆԸԼ
հակակոռուպցիոն կենտրոն

Հեղինակներ՝ Անուշ Հակոբյան, Տաթևիկ Մարգարյան (Թրանսփարենսի
Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն)

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի (ԹԻՀԿ)
առաքելությունն է կոռուպցիան նվազեցնելու ու ժողովրդավարությունն
ամրապնդելու ճանապարհով նպաստել լավ կառավարմանը Հայաստանում:

Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն (ECNL) հիմնադրամը
քաղաքացիական հասարակության վրա ազդող քաղաքականությունների և
օրենքների ոլորտում առաջատար ռեսուրսային և հետազոտական կենտրոն է
Եվրոպայում: ECNL-ն ստեղծում է գիտելիք, իրավագործում գործընկերներին և
օգնում ստանդարտներ սահմանել քաղաքացիական ազատությունների
ձևավորման, պաշպանության և ընդլայնման համար:

Հեղինակները շնորհակալություն են հայտնում զեկույցի մշակման
աշխատանքներին իրենց ներդրումն ունեցած բոլոր աջակիցներին, ներառյալ «ՔՀԿ
չափիչ» ծրագրի փորձագիտական խմբին, Խորհրդատվական խմբի անդամներին,
հարցազրույցներին մասնակցած փորձագետներին, ֆոկուս-խմբային
քննարկումների մասնակիցներին, ECNL-ի թիմին:

«ՔՀԿ չափիչ՝ նպաստավոր միջավայրի և ՔՀԿ-ների իրավագործման կողմնացույց»
ծրագիրն իրականացվում է «Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն»
(ECNL) հիմնադրամի և իր գործընկերների՝ Հայաստանում «Թրանսփարենսի
Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի», Ադրբեջանում «Էմ-Ջի Քընսալթինգ»
ՄՊԸ-ի, Վրաստանում «Քաղաքացիական հասարակության ինստիտուտի»,
Մոլդովայում «Պրոմո-Լեքս» ընկերակցության, իսկ Ուկրաինայում՝ «Անկախ
քաղաքական հետազոտությունների ուկրաինական կենտրոնի» (UCIPR) կողմից:

Այս փաստաթուղթը մշակվել է Եվրոպական Միության ֆինանսական
աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատու են միայն
հեղինակները, և այն պարտադիր չէ, որ արտացոլի Եվրոպական Միության
դիրքորոշումը:

© 2022, Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն և Թրանսփարենսի
Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, բոլոր հեղինակային իրավունքները
պաշտպանված են:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ	4
I. ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ	5
II. ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ԹՎԵՐՈՎ	10
III. ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ	11
3.1 ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ	11
3.2 ՀԱՎԱՍԱՐ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ	17
3.3 ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ	19
3.4 ԽԱՂԱՂ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ	22
3.5 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ	27
3.6 ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ	35
3.7 ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ	40
3.8 ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	43
3.9 ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ	47
3.10 ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՔՀԿ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ	53
3.11 ԹՎԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ	56
IV. ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	62
V. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	65
VI. ՀՂՈՒՄՆԵՐ	66
VII. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ	72

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԱՀ	Ավելացված արժեքի հարկ
ԱԱԾ	Ազգային անվտանգության ծառայություն
ԱԺ	Ազգային ժողով
ԱԼԳ	Արևելյան գործընկերություն
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՄՆ ՄԶԳ	ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալություն
ԱՊՀ	Անկախ Պետությունների Համագործակցություն
ԲՀՀ	Բաց հասարակության հիմնադրամներ
ԵՄ	Եվրոպական Միություն
ԶԼՄ	Զանգվածային լրատվամիջոց
ԹԻՀԿ	Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
ԼԳԲՏԻ	Լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր, ինտերսեքս համայնք
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՄԱԶԾ	Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր
ՊԵԿ	Պետական եկամուտների կոմիտե
ՍԴ	Սահմանադրական դատարան
ՍՊԸ	Սահմանափակ պատասխաստվությամբ ընկերություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն

I. ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Երկրի ընդհանուր իրավիճակը և քաղաքացիական հասարակության միջավայրին առնչվող հիմնական միտումները

Արցախում տեղի ունեցած 44-օրյա պատերազմը և դրա հետևանքները զգալի ազդեցություն թողեցին Հայաստանի ընդհանուր քաղաքական, սոցիալական, տնտեսական իրավիճակի վրա՝ բացասաբար ներգործելով քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) միջավայրի վրա: Պատերազմի առաջին օրը՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ին հայտարարված ռազմական դրությամբ սահմանափակվեց հավաքների և խոսքի ազատությունը, իսկ պատերազմի կործանարար հետևանքները՝ առաջ բերելով հումանիտար և սոցիալական ճգնաժամ, ազդեցություն թողեցին ՔՀԿ-ների գործունեության վրա: Բազմաթիվ կազմակերպություններ փոխեցին իրենց առաջնահերթությունները՝ միջոցներ հայթայթելով հրատապ հումանիտար կարիքները բավարարելու, նոր ծառայություններ մշակելու և շահառուների նոր խմբեր ներառելու համար: ՔՀԿ-ների գործակցությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ ակտիվացավ Արցախից տեղահանված կանանց և երեխաներին աջակցություն, այդ թվում՝ սնունդ, կացարան, կրթական և առողջապահական օգնություն տրամադրելու հարցերի շուրջ: ՔՀԿ-ների հետագա նախաձեռնություններն ուղղվեցին իրենց տները կորցրած արցախցի ընտանիքների և գոհված, վիրավոր ու անհետ կորած զինվորների ընտանիքների աջակցությանը: Ձևավորվեցին նաև նոր նախաձեռնություններ, որոնք ուղղված էին քաղաքացիների մոբիլիզացմանը՝ երկրում ստեղծված քաղաքական և սոցիալական ճգնաժամի լուծումներ գտնելու շուրջ:

2020 թվականի նոյեմբերի 9-ին հրադադարի մասին Հայաստանի, Ադրբեջանի և Ռուսաստանի միջև ստորագրված եռակողմ հայտարարությունը, որը Հայաստանի համար խիստ անբարենպաստ դրույթներ էր պարունակում, հազարավոր մարդկային կորուստների, հարյուրավոր ռազմագերիների և Ադրբեջանի կողմից շարունակվող ագրեսիայի հետ միասին հանրության շրջանում խորը ցնցում, հիասթափություն և հուսախաբություն առաջացրեցին՝ հանգեցնելով հակակառավարական տրամադրությունների և բողոքի հետագա ցույցերի: Իշխանության նախկին ներկայացուցիչները փորձեցին օգտագործել դժգոհությունների ալիքը և վերադառնալ քաղաքական ասպարեզ: Նրանց քաղաքական հռետորաբանությունն ուղեկցվում էր մարդու իրավունքների, կոռուպցիայի դեմ պայքարի և ժողովրդավարության խթանման ոլորտում աշխատող ՔՀԿ-ներին արատավորող արշավով: Լայնորեն տարածվեց մի խոսույթ՝ ենթադրաբար նախկին իշխանությունների և նրանց հարակից խմբերի ներկայացուցիչների կողմից, թե ժողովրդավարությունը և ազատական արժեքները սպառնում են պետական անվտանգությանը և հանգեցրել են պատերազմում պարտության: Ներկայիս իշխանությունն, իր հերթին, ինքնապաշտպանական դիրք գրավեց և էլ՝ ավելի հեռացավ ՔՀԿ համայնքից, քան պատերազմին նախորդած արտակարգ դրության ժամանակ: Որոշումների կայացման գործում ՔՀԿ-ների ներգրավելու գործելակերպն ավելի պակասեց: Մյուս կողմից, իշխանության օրակարգում հայտնվեցին խոսքի ազատությունը սահմանափակող մի շարք նախաձեռնություններ, որոնք պայմանավորված էին ատելության խոսքի անհազնացող ծավալների,

ապատեղեկատվության և պետական պաշտոնյաների հասցեին հնչող՝ երբեմն վիրավորանքի հասնող կամ որպես այդպիսին ընկալվող սուր քննադատության միտումներով: 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ խորհրդարանական ընտրություններից հետո հասարակական լարվածությունը և ՔՀԿ-ների դեմ արշավները փոքր-ինչ մեղմվեցին, սակայն պետական անվտանգության հետ կապված մտահոգությունները չփարատվեցին՝ Արցախի կարգավիճակի շուրջ հետագա բանակցությունների անորոշության, Հայաստանի ինքնիշխան տարածքում ադրբեջանական զինուժի ներկայության, ինչպես նաև Ռուսաստանի հետ հարաբերությունների ինտենսիվացման պատճառով, որն իր խաղաղապահներին տեղակայեց Արցախի պահպանված տարածքներում:

Քաղաքացիական հասարակության միջավայրի առանցքային զարգացումները

Հայաստանում ՔՀԿ-ներն էական դժվարությունների չեն հանդիպում գրանցման և գործունեության ընթացքում: 2021 թվականից բոլոր հասարակական կազմակերպությունների կողմից տարեկան հաշվետվության հրապարակման պահանջը սկսեց լիարժեք կիրառվել¹: Թեև հաշվետվության նոր պահանջը մտահոգություններ է առաջացրել ՔՀԿ-ների նկատմամբ վերահսկողության ավելացման առումով հնարավոր հետևանքների վերաբերյալ, սակայն, ընդհանուր առմամբ, իրավիճակն այս ոլորտում էապես չի փոխվել:

Պետությունը անհավասար վերաբերմունք է ցուցաբերում ՔՀԿ-ների և տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ: Այսպես, գրանցման և հարկման օրենսդրությունն ավելի նպաստավոր է գործարար հատվածի համար, թեպետ գործնականում ՔՀԿ-ներն ավելի քիչ են ենթարկվում հարկային ստուգումների: Օրենսդրությունը թույլ է տալիս ՔՀԿ-ներին բոլոր օրինական աղբյուրներից ֆինանսավորում հայցել, ստանալ և օգտագործել, սակայն այս հնարավորությունը լիարժեք չի օգտագործվում՝ նվիրաբերությունները և ՔՀԿ-ների ձեռնարկատիրական գործունեությունը խթանող մեխանիզմների պակասի պատճառով: 2020 թվականի ավարտին հետպատերազմյան քաղաքական լարվածության համատեքստում ավելացավ թիրախավորումը և ատելության խոսքը մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ՔՀԿ-ների և հատկապես նրանց նկատմամբ, որոնք ասոցացվում են Բաց հասարակության հիմնադրամների հետ կամ ֆինանսավորվում այդ կազմակերպության կողմից: Դրական է գնահատվում պարտադիր աուդիտի ենթակա՝ հանրային աղբյուրներից ստացած տարեկան գումարի շեմի կրկնակի բարձրացումը:

Հավաքների ազատությունը պաշտպանվում է Հայաստանի օրենսդրությամբ, սակայն գործնականում բազմաթիվ դեպքեր են արձանագրվել, երբ պետությունը չի կարողացել երաշխավորել և պաշտպանել հավաքները: Հիմնական բացասական զարգացումները կապված են ռազմական դրության ժամանակ հավաքների սահմանափակումների և հետագա քաղաքական զարգացումների հետ: Արձանագրվել են ոստիկանության ուժի անհամաչափ կիրառման դեպքեր, ոչ հետևողական գործողություններ՝ կախված բողոքի ցույցերի թեմայից և մասնակիցներից:

Քաղաքացիական հասարակությանը և հանրությանը որոշումների կայացման գործընթացում ներգրավելու նպատակով մի շարք ինստիտուցիոնալ մեխանիզմներ կան

¹ Նախադասությունը վերաշարադրվել է 2022թ. սեպտեմբերի 19-ին՝ ավելի հստակ ձևակերպման նպատակով:

ստեղծված: Կառավարության հետ հաղորդակցությունը թե՛ ինստիտուցիոնալ և թե՛ գործնական մակարդակում ավելի սերտ բնույթ ունի՝ խորհրդարանի համեմատ, եղել են նաև երկխոսության և համագործակցության մի քանի հաջողված դեպքեր: Սակայն վերջին երկու տարիներին ՔՀԿ-ները մասնակցության հետընթաց են նկատում՝ ի հակադրություն 2018 թվականից հետո՝ հետհեղափոխական վաղ շրջանում արձանագրված կառավարության բաց աշխատելառճի և ՔՀԿ-ների մեծ ակնկալիքների:

Խոսքի ազատության ոլորտում 2020-2021 թվականների ընթացքում մի շարք բացասական զարգացումներ են տեղ գտել՝ հիմնականում պայմանավորված ռազմական դրության հայտարարմամբ և դրան հաջորդած քաղաքական լարվածությամբ: Ատելության խոսքը և ապատեղեկատվությունը հասել են մտահոգիչ աստիճանի և բացասաբար են ազդել ՔՀԿ-ների և լրատվամիջոցների վրա: Զրպարտության և վիրավորանքի աճող միտումը հասցեագրելու նպատակով մի շարք օրենսդրական նախաձեռնություններ են ձեռնարկվել, սակայն լրատվամիջոցները գտնում են, որ դրանք սահմանափակող բնույթ ունեն:

Մասնավոր կյանքի իրավունքը պաշտպանվում է ՀՀ օրենսդրությամբ, բայց գործնականում անձնական տվյալների արտահոսքերի դեպքեր են եղել, ընդ որում այդ միջադեպերի հետաքննության, ինչպես նաև հսկողության գործողությունների իրավաչափության վերահսկողության վերաբերյալ որևէ թափանցիկություն ու հաշվետվողականություն չկա:

ՔՀԿ-ներն իրենց իրավունքները պաշտպանելու համար ունեն անհրաժեշտ իրավական մեխանիզմները: Օրենսդրական փոփոխությունները թույլ են տվել ՔՀԿ-ներին բացի բնապահպանական խնդիրներից դատարանում հանրային շահերը ներկայացնել նաև հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում: Սակայն մի շարք բարդ նախապայմանների պատճառով գործնականում այս իրավունքի իրացումը զգալիորեն սահմանափակված է: 2020-2021 թվականներին ՔՀԿ-ներին վարկաբեկող մի շարք արշավներ եղան, սակայն իշխանությունները քայլեր չձեռնարկեցին ՔՀԿ-ներին պաշտպանելու համար:

Նախարարություններից մի քանիսը ՔՀԿ-ներին հիմնականում դրամաշնորհների միջոցով պետական ֆինանսավորում հատկացնելու երկարամյա ընթացակարգ և գործելակերպ ունեն: 2021 թվականի հունվարին պետական ֆինանսավորման հատկացման կարգում փոփոխություններ կատարվեցին՝ դրամաշնորհային մրցույթների հայտարարման և ընտրության գործընթացը կարգավորելու նպատակով: ՔՀԿ-ների և նվիրատուների համար հարկային արտոնությունները քիչ են, իսկ բարեգործական ծրագրերի դեպքում հարկերից ազատման ընթացակարգը երկարատև է և բարդ: Կամավորական աշխատանքը լայն կիրառում ունի, սակայն օրենսդրական բացեր կան կամավորական գործունեության հստակ սահմանման և խրախուսման մեխանիզմների մասով:

Պետության և ՔՀԿ-ների միջև համագործակցությունը կարգավորվում է քաղաքականության մշակման գործընթացում մասնակցության վերաբերյալ օրենսդրությամբ և տարբեր խորհրդակցական մարմինների ու համատեղ խմբերի ստեղծման և գործունեության մասին որոշումներով: Այնուամենայնիվ, ՔՀԿ-ների զարգացման կամ պետություն-ՔՀԿ համագործակցության վերաբերյալ առանձին քաղաքականություն կամ ռազմավարություն չկա: Հասարակական խորհուրդների և այլ խորհրդակցական մարմինների գործառնությունն ու արդյունավետությունը հաճախ կախված են տվյալ գերատեսչության քաղաքական կամքից: Այս մարմինների ակտիվության անկում է արձանագրվել, իսկ դրանց արդյունավետությունը ՔՀԿ-ների մասնակցության ազդեցության առումով կասկածի տակ է:

Առցանց հարթակներում մարդու իրավունքների իրացման խնդիրները կապված են լայնատարած ապատեղեկատվության և ատելության խոսքի հետ, իսկ իշխանությունների՝ այս խնդիրների լուծմանն ուղղված ջանքերը գոհացուցիչ չեն և հիմնականում պատժիչ բնույթ են կրում: Հսկողության նպատակներով տեխնոլոգիաների օգտագործումը պատշաճ կերպով կարգավորվում է օրենքով և սահմանափակված է նպատակների նեղ շրջանակի համար: Այդուհանդերձ, ՔՀԿ-ները կասկածներ ունեն, որ գործնականում հեռախոսային և էլեկտրոնային հաղորդակցության ապօրինի հսկողություն է տեղի ունենում:

«ՔՀԿ չափիչ» 2019 թվականի զեկույցի² հրապարակումից ի վեր լիարժեք իրականացվել է մեկ առաջարկություն, այն է՝ վերացնել հիմնադրամների տարեկան հաշվետվություններում աշխատակիցների անունները հրապարակելու պահանջը: Երեք առաջարկություն՝ հանրային աղբյուրներից ֆինանսավորում ստացած հասարակական կազմակերպությունների համար պարտադիր աուդիտի պահանջի վերացումը, ՔՀԿ-ների պետական ֆինանսավորման մրցակցայնության և թափանցիկության բարելավումը և երրորդ կողմի հարձակումներից և ատելության խոսքից պաշտպանությունը մասնակիորեն իրականացվել են որոշակի օրենսդրական փոփոխությունների միջոցով: «ՔՀԿ չափիչ» 2019 թվականի զեկույցի առաջարկությունների մեծ մասը վերահաստատվել է ընթացիկ զեկույցում, ավելին՝ դրանք էլ ավելի մեծ կարևորություն են ձեռք բերել վերջին տարվա ընթացքում տեղի ունեցած բացասական զարգացումների համատեքստում: ՔՀԿ-ների ֆինանսական կայունությունը և մասնակցությունը քաղաքականության մշակմանն ու իրականացմանը շարունակում են առաջնահերթ ոլորտներ մնալ՝ ՔՀԿ-ներին և առնչվող անձանց թիրախավորող ատելության խոսքի և ապատեղեկատվության դեմ պայքարի անհրաժեշտության հետ միասին:

Առանցքային առաջարկություններ

Զեկույցում թվարկված առանցքային առաջարկությունները ուրվագծում են «ՔՀԿ չափիչի» ոլորտներում բարելավման հնարավոր ուղղությունները և ներառում են հետևյալ առաջնայնությունները:

- Մշակել և իրականացնել քաղաքացիական հասարակության հատվածի զարգացման համապարփակ ռազմավարություն (հայեցակարգ, ճանապարհային քարտեզ), որն ուղղված կլինի ՔՀԿ-ների համար ավելի բարենպաստ միջավայրի ապահովմանը:
- Պատշաճ պաշտպանություն ապահովել ՔՀԿ-ներին ուղղված ատելության խոսքից և ապատեղեկատվությունից, այդ թվում՝ խտրականության դեմ պայքարի վերաբերյալ կարգավորումների, հրապարակային հայտարարությունների և ՔՀԿ-ների ու ակտիվիստների դեմ հարձակումների ողջամիտ ժամկետում պատշաճ քննության միջոցով:
- Ընդլայնել ՔՀԿ-ներին տրամադրվող պետական ֆինանսավորման շրջանակը, ապահովել ֆինանսավորման թափանցիկ, մրցակցային և հաշվետու հատկացում ինչպես պետական, այնպես էլ տեղական մակարդակներում, ինչպես նաև բարելավել համապատասխան պետական ծառայողների՝ դրամաշնորհների կառավարման և մշտադիտարկման կարողությունները:

² CSO Meter: Քաղաքացիական հասարակության միջավայրի գնահատում Արևելյան գործընկերության երկրներում, Հայաստան, Երևան 2019, Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն և Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, <https://csometer.info/sites/default/files/2020-11/Armenia-CSO-meter-Final-ARM.pdf>

- ՔՀԿ-ների համար ավելի բարենպաստ հարկային միջավայր ստեղծել, որը կօգնի բարելավել տարբեր աղբյուրներից, այդ թվում՝ անհատների և տնտեսավարող սուբյեկտների նվիրատվություններից և ուղղակի ձեռնարկատիրական գործունեությունից ֆինանսավորում և բնափրային աջակցություն հայթայթելու հնարավորությունները:
- Օգտագործել մասնակցության առկա ինստիտուցիոնալ մեխանիզմները և ապահովել բովանդակալից մասնակցություն, այդ թվում՝ ներգրավել ՔՀԿ-ներին քաղաքականության մշակման վաղ փուլերում, պարտադիր քննարկումներ իրականացնել բոլոր, ներառյալ՝ խորհրդարանի կողմից մշակված օրենսդրական նախագծերի վերաբերյալ, բավարար ժամանակ տրամադրել խորհրդակցությունների համար, ավելի հաճախ դեմառդեմ քննարկումներ կազմակերպել, այդ թվում՝ մարզերում, հնարավորինս հաշվի առնել և ներառել ՔՀԿ-ների առաջարկությունները, ինչպես նաև իրական շահագրգռվածություն և հետևողականություն ցուցաբերել քաղաքասարակության և հանրության կողմից առաջարկներ հայցելիս:
- Լիարժեք և արդյունավետ կերպով օգտագործել խորհրդակցական մարմինների ներուժը, մասնավորապես՝ նիստեր կազմակերպել օրենքով նախատեսված պարբերականությամբ, հեռավար մասնակցության հնարավորություն ընձեռել և ջանքեր գործադրել ՔՀԿ-ների բովանդակալից մասնակցության ուղղությամբ՝ նրանց ներգրավելով քաղաքականության մշակման վաղ փուլերում և հնարավորինս ներառելով ներկայացված առաջարկները:
- Ընդլայնել ՔՀԿ մասնակցությունը քաղաքականության իրականացման և մշտադիտարկման փուլերում՝ սահմանելով համապատասխան ինստիտուցիոնալ մեխանիզմներ և ապահովելով մասնակցությունը նաև օրենքների, քաղաքականությունների և ռազմավարությունների ընդունումից հետո:

II. ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ԹՎԵՐՈՎ

Բնակչությունը՝ 2 964 100 մարդ (2021 թ. հունվարի 1-ի դրությամբ)³ | Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն՝ 4267,5 ԱՄՆ դոլար (2020)⁴ | ՔՀԿ-ների թիվը՝ 5532 հասարակական կազմակերպություն, 1451 հիմնադրամ⁵ | ՔՀԿ-ների քանակը 10 000 բնակչի հաշվով՝ 23,6 ՔՀԿ-ի գրանցման վճար՝ 10 000 ՀՀ դրամ⁶ | Ազատությունն աշխարհում՝ 55/100 (մասամբ ազատ)⁷ | Մամուլի ազատության համաշխարհային ինդեքս՝ 28,83⁸



Երկրի գնահատական՝ **4.8**
 Իրավական դաշտ՝ **5.2**
 Գործնական դաշտ՝ **4.3**

Գնահատման սանդղակը ներառում է 1-ից 7 բալ, որտեղ 1-ը ամենացածր հնարավոր գնահատականն է (ծայրաստիճանն անբարենպաստ՝ ավտորիտար միջավայր), իսկ 7-ը՝ ամենաբարձր հնարավոր գնահատականը (չափազանց բարենպաստ միջավայր):

Ոլորտ	Ընդհանուր	Իրավական	Գործնական
Միավորումների ազատություն	5.7	5.8	5.6
Հավասար վերաբերմունք	4.9	5.0	4.8
Ֆինանսավորման մատչելիություն	5.4	5.8	4.9
Իսադաղ հավաքների ազատություն	5.3	5.7	4.9
Որոշումների ընդունման գործընթացում մասնակցության իրավունք	4.8	5.3	4.3
Խոսքի ազատություն	4.7	5.1	4.3
Մասնավոր կյանքի իրավունք	4.8	5.8	3.8
Պետության կողմից պաշտպանության պարտականություն	4.6	5.3	4.0
Պետական աջակցություն	4.0	4.2	3.9
Պետություն-ՔՀԿ համագործակցություն	3.9	4.3	3.6
Թվային իրավունքներ	4.2	4.9	3.5

³ Ժողովրդագրությունը, Հայաստանի Հանրապետության կառավարություն, <https://www.gov.am/am/demographics/>:

⁴ ՀՆԱ-ն բնակչության մեկ շնչի հաշվով. Հայաստան, Համաշխարհային Բանկ, <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD?locations=AM>:

⁵ Հաշվետվություն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից 01.07.2021-30.09.2021 թվականների ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ, https://www.moj.am/storage/files/legal_acts/legal_acts_3333545299361_stat_2021-3eram.pdf:

⁶ Պետական գրանցման/հաշվառման/ համար անհրաժեշտ փաստաթղթեր, տուրքերի դրույքաչափեր և ժամկետներ, Էլեկտրոնային Ռեգիստր, Հայաստանի Հանրապետության կառավարություն, <https://www.e-register.am/am/docs/49>:

⁷ Freedom House, Freedom in the World 2021, Countries and Territories («Ազատությունն աշխարհում 2021 թվականին, երկրներ և տարածքներ»), <https://freedomhouse.org/countries/freedom-world/scores>:

⁸ Լրագրողներ առանց սահմանների, Մամուլի ազատության համաշխարհային ինդեքս 2021, <https://rsf.org/en/ranking/2021>:

III. ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

3.1 Միավորումների ազատություն

Ոլորտի ընդհանուր գնահատական՝ 5.7/7

Իրավական դաշտ՝
5.8/7

Գործնական դաշտ՝
5.6/7

Հայաստանում միավորումների ազատությունը երաշխավորված է օրենսդրությամբ: ՔՀԿ-ներն էական դժվարությունների չեն հանդիպում գրանցման և գործունեության ընթացքում: Քաղաքացիական նախաձեռնություններից չի պահանջվում գրանցվել որպես իրավաբանական անձ, չկան նաև առցանց միավորումներ կազմելու սահմանափակումներ:

2021 թվականից բոլոր հասարակական կազմակերպությունների կողմից տարեկան հաշվետվության հրապարակման պահանջը սկսեց լիարժեք կիրառվել⁹: Շատ կազմակերպություններ չեն հրապարակել իրենց հաշվետվությունները՝ հիմնականում նոր պահանջների վերաբերյալ իրազեկված չլինելու պատճառով: Հաշվետվության նոր պահանջը մտահոգություններ է առաջացրել ՔՀԿ-ների նկատմամբ վերահսկողության ավելացման առումով հնարավոր հետևանքների վերաբերյալ, սակայն, ընդհանուր առմամբ, իրավիճակն այս ոլորտում էապես չի փոխվել:

Այս ոլորտի վերաբերյալ «ՔՀԿ չափիչի» 2019 թվականի զեկույցի առաջարկները լիարժեք չեն իրականացվել: Այնուամենայնիվ, գրանցման և հաշվետվությունների համար պատասխանատու պետական մարմինների աշխատանքում որոշ բարելավումներ են նկատվել՝ իրազեկման բարելավման և ՔՀԿ-ներին աջակցության ցուցաբերման առումով:

[Չափորոշիչ 1՝ Յուրաքանչյուր ոք ազատորեն կարող է ՔՀԿ ստեղծել, մասնակցել և անդամակցել ՔՀԿ-ին:](#)

Հայաստանում օրենքը բոլորին թույլ է տալիս ՔՀԿ ստեղծել, անդամակցել կամ մասնակցել ՔՀԿ-ի: Միավորումների ազատությունը երաշխավորված է Սահմանադրությամբ և կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով¹⁰: Քաղաքացիական օրենսգրքով սահմանված՝ շահույթ չհետապնդող կազմակերպությունների տեսակներն են հասարակական միավորումները և հիմնադրամները: Հասարակական միավորումները ներառում են հասարակական կազմակերպությունները, կրոնական կազմակերպությունները, քաղաքական կուսակցությունները և արհմիությունները: Այս զեկույցի շրջանակներում Հայաստանի համատեքստում «գրանցված ՔՀԿ-ներ» ասելով՝ նկատի կունենանք հասարակական կազմակերպություններն և հիմնադրամները:

⁹ Նախադասությունը վերաշարադրվել է 2022թ. սեպտեմբերի 19-ին՝ ավելի հստակ ձևակերպման նպատակով:

¹⁰ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 05.07.1995, փոփ. 06.12.2015, հոդված 45, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510>:

Հասարակական կազմակերպություն (ՀԿ) կարող է հիմնադրել առնվազն երկու անձ՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական: Կուսակցությունները, կրոնական կազմակերպությունները, արհեստակցական միությունները չեն կարող հասարակական ՀԿ-ի հիմնադիր լինել¹¹: Հիմնադրամը կարող է հիմնադրել մեկ կամ ավելի անձ՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական¹²: Հիմնադրամների և ՀԿ-ների հիմնադիրների կացության և քաղաքացիության վերաբերյալ օրենսդրությամբ սահմանափակումներ նախատեսված չեն: Դատավորները չեն կարող ոչ առևտրային կազմակերպությունում ղեկավար պաշտոն զբաղեցնել¹³:

Գործնականում որևէ խոչընդոտ չկա կազմակերպություն հիմնադրելու կամ գրանցելու, ինչպես նաև որևէ ՔՀԿ-ի անդամակցելու համար: Քաղաքացիական խմբերը կարող են ազատորեն գործել առանց գրանցվելու անհրաժեշտության: Հայաստանում կան բազմաթիվ քաղաքացիական նախաձեռնություններ, որոնք աշխատում են համայնքային մակարդակում կամ գործունեություն ծավալում որոշակի հիմնախնդիրների շուրջ: 2020 թվականի պատերազմի ընթացքում և դրանից հետո մի շարք քաղաքացիական նախաձեռնություններ ստեղծվեցին մարդասիրական օգնություն ցուցաբերելու և քաղաքացիների ջանքերը մոբիլիզացնելու համար՝ ի պատասխան երկրում ստեղծված քաղաքական և սոցիալական ճգնաժամի:

[Չափորոշիչ 2. ՔՀԿ-ն որպես իրավաբանական անձ գրանցելու ընթացակարգը հստակ է, պարզ, արագ և ոչ թանկ:](#)

ՔՀԿ-ների գրանցման՝ օրենքով սահմանված ընթացակարգը պարզ է, արագ և ոչ թանկ: Հայաստանում իրավաբանական անձանց գրանցման պատասխանատուն Արդարադատության նախարարության Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունն է (այսուհետ՝ «Պետռեգիստր»): ՔՀԿ-ների գրանցման պետական տուրքը 10000 ՀՀ դրամ է, գրանցման ժամկետը՝ առավելագույնը 10 աշխատանքային օր: Այն դեպքում, երբ հիմնադիրները փաստաթղթերը գործակալություն ներկայացնելիս օգտվում են փաստաթղթերի նմուշային ձևերից, հասարակական կազմակերպության գրանցումն իրականացվում է երկու աշխատանքային օրվա ընթացքում¹⁴: 2021 թվականի փետրվարին կանոնադրության փոփոխությունների գրանցման տուրքը բոլոր իրավաբանական անձանց համար 5000 ՀՀ դրամից դարձավ 10000 դրամ, ինչը հիմնավորվեց Պետռեգիստրի աշխատանքի ծավալով¹⁵: Առցանց գրանցումը ՔՀԿ-ների համար դեռևս հասանելի չէ:

Գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանված է օրենքով և հրապարակված է Պետռեգիստրի կայքում¹⁶: Իրավաբանական անձի գրանցումը մերժելու հիմքերն են՝ իրավաբանական անձի կազմավորման կարգի խախտումը, սահմանված փաստաթղթերը չներկայացնելը կամ ներկայացված փաստաթղթերի

¹¹ ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, վերջ. փոփ. 05.05.2021, հոդված 10, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=152972>:

¹² ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», 26.12.2002, վերջ. փոփ. 19.01.2021, հոդված 12, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=150035>:

¹³ ՀՀ դատական օրենսգիրք, 07.02.2018, վերջ. փոփ. 03.02.2021, հոդված 5, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=119531>:

¹⁴ ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 14:

¹⁵ ՀՀ օրենքը «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», 19.01.2021, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=150022>:

¹⁶ Պետական գրանցման/հաշվառման/ համար անհրաժեշտ փաստաթղթեր, տուրքերի դրույքաչափեր և ժամկետներ, <https://www.e-register.am/am/docs/49>:

անհամապատասխանությունն օրենքին, ինչպես նաև անվանման անհամապատասխանությունը օրենքով սահմանված պահանջներին¹⁷: Մասնավորապես, ըստ օրենքի, ՔՀԿ անվանումը պետք է ցուցում պարունակի կազմակերպության գործունեության բնույթի մասին¹⁸, և չպետք է նույնական լինի այլ, ներառյալ՝ գրանցմանը նախորդող վերջին մեկ տարվա ընթացքում լուծարված իրավաբանական անձանց անվանումներին¹⁹:

Գործնականում չեն արձանագրվել այնպիսի դեպքեր, երբ որևէ ՔՀԿ չի կարողացել գրանցվել: Պետոեզիստրի տրամադրած տեղեկությունների համաձայն՝ ՔՀԿ-ների գրանցման 1016 դիմումից մերժվել է 20-ը, ընդ որում այս բոլոր դեպքերում, հիմք ընդունելով Պետոեզիստրի կողմից ներկայացված՝ մերժման հիմնավորումները, կազմակերպությունները կատարել են անհրաժեշտ շտկումները և ի վերջո գրանցվել: ՔՀԿ-ները նշել են, որ Պետոեզիստրի աշխատակիցներն արագ են արձագանքում, պատրաստակամությամբ գործակցում են և աջակցություն են ցուցաբերում գրանցման ընթացքում՝ առանց սպասելու գրանցման ժամկետի ավարտին, որպեսզի մերժման կարիք չլինի: Այնուամենայնիվ, ՔՀԿ-ները հաճախ ստիպված են լինում իրենց անվանումը և կանոնադրությունը հարմարեցնել Պետոեզիստրի աշխատակիցների նկատառումներին և առաջարկներին՝ նախընտրելով վիճաբանությունների մեջ չմտնել, որպեսզի խուսափեն ժամանակի վատնումից և նորից դիմելուց²⁰:

[Չափորոշիչ 3. ՔՀԿ-ներն ազատ են սահմանելու իրենց նպատակներն ու գործունեության տեսակները և կարող են գործել ինչպես իրենց գրանցման երկրի սահմաններում, այնպես էլ այդ սահմաններից դուրս:](#)

Ըստ օրենքի, ՔՀԿ-ներն ազատ են իրենց նպատակները որոշելիս, իսկ գործունեության ոլորտների սահմանափակումներ չկան: ՀԿ-ներն իրենց գործունեության նպատակները սահմանում են իրենց կանոնադրությամբ. արգելվում է այնպիսի նպատակների սահմանումը, որոնք համարվում են այլ տեսակի հասարակական միավորումների (կրոնական կազմակերպություններ, արհմիություններ կամ կուսակցություններ) նպատակներ²¹: Ինչ վերաբերում է հիմնադրամին, ըստ օրենքի, այն «հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, բնապահպանական և (կամ) այլ հանրօգուտ նպատակներ»²²:

Ըստ օրենքի՝ ՀԿ-ները կարող են անդամակցել միջազգային և օտարերկրյա ոչ առևտրային կազմակերպություններին և այլ պետություններում ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ²³: «Հիմնադրամների մասին» օրենքով նախատեսվում է հիմնադրամների՝ միջազգային և օտարերկրյա ոչ պետական կազմակերպություններին անդամակցելու իրավունքը²⁴:

¹⁷ ՀՀ օրենքը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին», 03.04.2001, խմբ. 26.05.2021, հոդված 36, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=154021>:

¹⁸ ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 05.05.1998, խմբ. 20.05.2021, հոդված 58, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=74658>:

¹⁹ ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 6, ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», 26.12.2002, հոդված 5:

²⁰ Ֆոկուս-խմբային քննարկումներ, հոկտեմբեր 2021թ.:

²¹ ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 3:

²² ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», 26.12.2002, հոդված 3:

²³ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, 16.12.2016, հոդված 28:

²⁴ «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենք, 26.12.2002, հոդված 18:

Ինչպես նշվեց վերը, Պետեզիստրը կարող է ՔՀԿ-ներից պահանջել իրենց կանոնադրությունները, ներառյալ նպատակները, համապատասխանեցնել իրավական պահանջներին, ինչը երբեմն ՔՀԿ-ների կողմից դիտվում է որպես օրենքի հայեցողական մեկնաբանություն: ՔՀԿ-ների՝ օրենքով թույլատրված գործունեության ոլորտներով զբաղվելու հարցում պետության կողմից կիրառվող գործնական խոչընդոտներ չկան:

Չափորոշիչ 4. Կիրառվող ցանկացած պատժամիջոցը հստակ է, համապատասխանում է համաչափության սկզբունքին և ցանկալի նպատակին հասնելու համար նվազագույն միջամտություն է նախատեսում:

Օրենքը աստիճանական պատժամիջոցներ է սահմանում իրավական պահանջները չկատարող ՔՀԿ-ների համար, այդ թվում կասեցում՝ կոպիտ խախտումների համար: Այնուամենայնիվ, պատժամիջոցների որոշ հիմքեր հստակ չեն:

Գրանցված ՔՀԿ-ները կարող են ենթարկվել վարչական պատասխանատվության՝ հաշվետվությունը չտրամադրելու, ինչպես նաև կանոնադրությամբ սահմանված նպատակներին հակասող գործունեություն իրականացնելու դեպքում: Վերջին դրույթում պակասում է իրավական որոշակիությունը, ուստի այն կարող է տարրնթերցման տեղիք տալ, քանի որ հստակ չի սահմանված, թե հատկապես ինչը կարող է համարվել կանոնադրությամբ սահմանված նպատակներին հակասող: Այս խախտումների համար տույժերը կիրառվում են աստիճանաբար՝ 30-օրյա միջակայքերով, և ներառում են նախ՝ կազմակերպության ղեկավարին ուղղված նախազգուշացում, ապա 50 000 ՀՀ դրամ տուգանք, և վերջապես՝ 200 000 ՀՀ դրամ տուգանք²⁵: Հասարակական կազմակերպության կասեցման հիմք կարող է լինել հիմնադրելիս կամ գործունեության ընթացքում թույլ տրված օրենքի էական խախտումը: Եթե կասեցման հիմքերը մեկ տարվա ընթացքում չեն վերացվում, կազմակերպությունը ենթակա է լուծարման: Բացի այդ, հարկադիր լուծարման հիմք կարող է լինել ՀԿ-ի գործունեության ընթացքում սահմանադրական կարգը բռնի տապալելու կամ ասելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու գործողությունը²⁶: Նման դեպքերում լուծարման մասին որոշումը կայացնում է դատարանը՝ լիազոր մարմնի պատճառաբանված պահանջի հիման վրա: Հիմնադրամների հարկադիր լուծարման հիմք կարող է լինել հիմնադրամն ստեղծելիս կամ գործունեության ընթացքում օրենքի էական խախտումները կամ կեղծիքները, հիմնադրամի գույքի բավարար չլինելը նրա գործունեության իրականացման համար, կանոնադրությամբ նախատեսված նպատակներից շեղվելը, հիմնադրամի նպատակներին հասնելու անհնարինությունը, իր գործունեությամբ պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգը, հանրության առողջությունն ու բարքերը, այլոց իրավունքներն ու ազատությունները վտանգելը²⁷: Հիմնադրամի լուծարումը կամավոր թե հարկադիր, կարող է տեղի ունենալ միայն դատարանի որոշմամբ:

Պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) 2021 թվականի հոկտեմբերի 20-ի դրությամբ տրամադրած տեղեկությունների համաձայն՝ 2021 թվականին ՊԵԿ-ը 709²⁸ նախազգուշացում է ուղարկել այն հասարակական կազմակերպություններին և 356 նախազգուշացում՝ այն հիմնադրամներին, որոնք օրենքով նախատեսված տարեկան

²⁵ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, 06.12.1985, վերջին փոփ. 30.07.2021, հոդված 169.18, 169.26, 169.27, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=73129>

²⁶ ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 32:

²⁷ ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», 26.12.2002, հոդված 34:

²⁸ Նախազգուշացումների թվաքանակը վերանայվել է 2022 թ. սեպտեմբերի 19-ին՝ վրիպակը շտկելու նպատակով:

հաշվետվություն չէին ներկայացրել: Բացի այդ, ՊԵԿ-ը 21 որոշում է կայացրել 50 000 ՀՀ դրամ տուգանք գանձելու մասին՝ այն կազմակերպություններից, որոնք հաշվետվություն ներկայացնելու պարտավորությունը չեն կատարել նախագուշացման ընթացքում սահմանված ժամկետում, և 10 որոշում՝ 200 000 ՀՀ դրամ տուգանք գանձելու մասին՝ այն ՔՀԿ-ներից, որոնք տուգանքի մասին առաջին որոշումից հետո հաշվետվությունները դարձյալ չեն հրապարակել: Վերջին երկու տարվա ընթացքում կանոնադրական նպատակներին հակասող գործունեության համար վարույթներ չեն հարուցվել: Պետոեզիստրի տվյալների համաձայն՝ 2020-2021 թթ. ընթացքում որևէ ՔՀԿ-ի հարկադիր լուծարման դեպք չի գրանցվել, իսկ ՔՀԿ-ների դիմումների հիման վրա լուծարման 13 դեպք է գրանցվել:

Չափորոշիչ 5. Պետությունը չի միջամտում ՔՀԿ-ների ներքին գործերին և գործունեությանը:

Օրենքը պետական մարմիններին և տեղական ինքնակառավարման մարմիններին (ՏԻՄ), ինչպես նաև պաշտոնատար անձանց արգելում է միջամտել կամ խոչընդոտել հասարակական կազմակերպության օրինական գործունեությանը²⁹: Ինչ վերաբերում է հիմնադրամներին, պաշտոնատար անձինք կարող են ներգրավվել կառավարման մարմիններում, մասնավորապես այն դեպքերում, երբ հիմնադրամը հիմնադրվում է կառավարության կամ ՏԻՄ որոշմամբ³⁰:

Հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների՝ օրենսդրության պահանջներին համապատասխանության վերահսկողության համար պատասխանատու լիազոր մարմինը Պետական եկամուտների կոմիտեի ոչ առևտրային կազմակերպությունների հսկողության բաժինն է: Բաժնի գործառույթները ներառում են ոչ առևտրային կազմակերպությունների իրազեկում, օրենքով սահմանված հաշվետվությունների և այլ փաստաթղթերի ընդունում, ուսումնասիրություն, օրենսդրության համապատասխանության գնահատում: Օրենսդրության համապատասխանության գնահատման արդյունքների հիման վրա բաժինը կարող է վարչական վարույթ հարուցել կազմակերպությունների նկատմամբ, առաջարկություններ ներկայացնել խախտումների վերացման կարգի վերաբերյալ, կազմակերպությունների գործունեության կասեցման և լուծարման պահանջ ներկայացնել դատարան³¹: Լիազոր մարմնի կողմից ՔՀԿ-ների մոնիտորինգի և վերահսկման շրջանակի և չափանիշների վերաբերյալ ընթացակարգեր կամ ուղեցույցներ չկան, քանի որ, ըստ ՊԵԿ ներկայացուցչի, նշված ստորաբաժանումը չունի օրենքով նախատեսված տեղում ստուգումներ իրականացնելու լիազորություն:

Թե՛ ՀԿ-ները, թե՛ հիմնադրամները իրենց գործունեության և բյուջեի վերաբերյալ պետք է ներկայացնեն տարեկան հաշվետվություններ, որոնք հրապարակվում են ՊԵԿ-ի կայքում³²: ՀԿ-ների համար տարեկան հաշվետվություններ ներկայացնելու պահանջն առաջին անգամ բոլոր ՀԿ-ների նկատմամբ կիրառվել է 2021 թվականին՝ 2020 թվականին

²⁹ ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 9:

³⁰ ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», 26.12.2002, հոդվածներ 10 և 12:

³¹ Հայաստանի Հանրապետության Պետական եկամուտների կոմիտեի Նախագահի 2019 թ. մարտի 4-ի թիվ 137-Լ հրամանը «Հայաստանի Հանրապետության Պետական եկամուտների կոմիտեի ոչ առևտրային կազմակերպությունների հսկողության բաժնի կանոնադրությունը հաստատելու մասին», https://www.petekamutner.am/Shared/Documents/_src/_as/Statutes/hr_hhpekn_2019_137_1.pdf:

³² Ոչ առևտրային կազմակերպությունների հաշվետվություններ, ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի, https://www.petekamutner.am/Reports_vh.aspx:

ընդունված օրենսդրական փոփոխությունների հիման վրա³³: 2021 թվականին ՊԵԿ-ը մի քանի հանդիպում էր կազմակերպել ՀԿ-ների և հիմնադրամների ներկայացուցիչների հետ՝ հաշվետվությունների կարգում տեղի ունեցած փոփոխությունները ներկայացնելու նպատակով³⁴: ՀԿ-ների տարեկան հաշվետվության ներկայացման վերջնաժամկետը մայիսի 30-ն էր, սակայն ՊԵԿ-ի գրության համաձայն՝ 2021 թվականի հոկտեմբերի 20-ի դրությամբ գրանցված ՀԿ-ների կեսից պակասն էր ներկայացրել իրենց տարեկան հաշվետվությունը՝ ենթադրաբար նոր պահանջի մասին իրազեկ չլինելու պատճառով: Թեև օրենքը որևէ բացառություն չի նախատեսում, գործնականում 2021 թվականին պատժամիջոցներ չեն կիրառվել հաշվետվություն չներկայացրած այն կազմակերպությունների նկատմամբ, որոնք հաշվետու տարում ֆինանսական գործարքներ չեն ունեցել:

Գործնականում հաշվետվության ներկայացման պահանջները ծանրաբեռնող չեն համարվում, սակայն մտավախություն կա, որ այդ պահանջները կարող են հանգեցնել պետության կողմից հետագա միջամտության: ՔՀԿ-ները և փորձագետներն ընդհանուր առմամբ գտնում են, որ տարեկան հաշվետվության ձևը պարզ է, սակայն նրանցից ոմանք կասկածի տակ են դնում այդ հաշվետվության անհրաժեշտությունը³⁵: Մի կողմից, ՔՀԿ-ները ողջունում են ոլորտի թափանցիկության բարելավման հեռանկարը: Մյուս կողմից, մտահոգություններ են հնչում ՔՀԿ-ների գործունեությանը պետության միջամտության հնարավորության վերաբերյալ: Այդ մտահոգությունները մասամբ բխում են խոսքի ազատությունը սահմանափակող օրենսդրական փոփոխությունների վերջին նախագծերից (տե՛ս Ոլորտ 6՝ «Խոսքի ազատություն»), հետպատերազմյան ընդհանուր քաղաքական միջավայրից, ինչպես նաև Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) երկրների հատուկ ծառայությունների ղեկավարների հանդիպման ընթացքում «Արևմուտքի ապակայունացնող ազդեցությանը» հակազդելու նպատակով համատեղ ջանքերի ինտենսիվացման անհրաժեշտության վերաբերյալ ձեռքբերված համաձայնությունից³⁶:

Ոլորտի կոնկրետ առաջարկությունները հետևյալն են.

- Պետոեզիստրին՝ մատչելի ուղեցույց հրապարակել գրանցման գործընթացի վերաբերյալ, որը կներառի կազմակերպության անվանման, նպատակների և խնդիրների սահմանման հիմնական սկզբունքները, օրենքով պահանջվող այլ դրույթներ, ինչպես նաև հաճախ հանդիպող հարցեր և պատասխաններ:
- Արդարադատության նախարարությանը՝ հնարավորություն ընձեռել ՔՀԿ-ներին գրանցվել և իրենց գրանցման տվյալները փոփոխել էլեկտրոնային եղանակով:
- Պետական եկամուտների կոմիտեին՝ ՔՀԿ-ների հետ համագործակցությամբ իրականացնել տարեկան հաշվետվության վերաբերյալ իրազեկման

³³ ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», 25.03.2020, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=141094>:

³⁴ ՊԵԿ մասնագետները հասարակական կազմակերպություններին են ներկայացրել ոլորտային օրենսդրության փոփոխությունները, Պետական եկամուտների կոմիտե, <https://www.petekamutner.am/mdNews.aspx?sid=ts&nid=7800>, ՊԵԿ-ում տեղի է ունեցել հանդիպում հիմնադրամների ներկայացուցիչների հետ, Պետական եկամուտների կոմիտե, <https://www.petekamutner.am/mdNews.aspx?sid=ts&nid=7790>:

³⁵ Փորձագիտական հարցազրույցներ և ֆոկլու-խմբային քննարկումներ, հոկտեմբեր 2021 թ.:

³⁶ На страже интересов коллективной безопасности и стабильности в СНГ, Служба внешней разведки Российской Федерации (Հավաքական անվտանգության և կայունության շահերի պաշտպանությունը ԱՊՀ-ում, Ռուսաստանի Դաշնության Արտաքին հետախուզական ծառայություն), 13.10.2021, <http://svr.gov.ru/smi/2021/10/na-strazhe-interesov-kollektivnoy-bezopasnosti-i-stabilnosti-v-sng.htm>:

միջոցառումներ, այդ թվում՝ տեսողական միջոցներով (տեսահոլովակներ, անիմացիա, ինֆոգրաֆիկա)՝ լայնորեն տարածելով դրանք ՔՀԿ ցանցերի և լրատվամիջոցների օգնությամբ:

3.2 Հավասար վերաբերմունք

Ոլորտի ընդհանուր գնահատական՝ 4.9/7

Իրավական՝ 5/7

Գործնական՝ 4.8/7

Պետության վերաբերմունքը տարբեր ՔՀԿ-ների նկատմամբ, ինչպես նաև ՔՀԿ-ների և տնտեսվարող սուբյեկտների համեմատ, էականորեն չի փոխվել: Գրանցման և հարկման օրենսդրությունն ավելի նպաստավոր է գործարար հատվածի համար, թեպետ գործնականում ՔՀԿ-ները զգալիորեն ավելի քիչ են ենթարկվում հարկային ստուգումների: Իրավական կարգավորումները հավասար վերաբերմունք են ապահովում բոլոր ՔՀԿ-ների համար, թեև որոշակի խտրական դրսևորումներ են արձանագրվել որոշումների կայացման գործընթացում ՔՀԿ-ներին ներգրավելու և ՏԻՄ-երի կողմից ֆինանսավորում տրամադրելու գործելակերպում: ՀԿ-ների և հիմնադրամների գրանցման պահանջները համահավասար դարձնելու վերաբերյալ առաջարկությունն իրականացվել է, իսկ հանրային միջոցներ ստացող հասարակական կազմակերպությունների դեպքում աուդիտի ենթակա գումարի շեմը բարձրացվել է՝ հավասարեցնելով այն հիմնադրամների ակտիվների ֆինանսական աուդիտի շեմին:

Չափորոշիչ 1. Պետությունը համահավասար կերպով է վերաբերում ՔՀԿ-ներին և առևտրային ընկերություններին

Գրանցման և հարկման վերաբերյալ օրենքները ՔՀԿ-ներին ավելի քիչ առավելություններ են տալիս, քան տնտեսվարող սուբյեկտներին: Մասնավորապես, տնտեսվարող սուբյեկտների գրանցումը ՔՀԿ-ների գրանցման համեմատ ավելի էժան է և արագ: Այսպես, ընկերությունների գրանցման համար սահմանված առավելագույն ժամկետը երկու օր է՝ ի տարբերություն հիմնադրամների և ՀԿ-ների համար սահմանված 10 օրվա: Այս տարբերությունը պայմանավորված է ՔՀԿ-ների կանոնադրությունը մանրամասնորեն ուսումնասիրելու անհրաժեշտությամբ, եթե այն չի կազմվել ըստ պետության կողմից տրամադրված նմուշային ձևի (այդ դեպքում ՀԿ-ների գրանցումը նույնպես երկու օր է տևում): ՔՀԿ-ների գրանցման պետական տուրքը 10000 ՀՀ դրամ է, մինչդեռ առևտրային ընկերությունների գրանցման համար տուրք չի գանձվում, իսկ անհատ ձեռնարկատերերը վճարում են 3000 ՀՀ դրամ: Բացի այդ, ի տարբերություն ՔՀԿ-ների և այլ իրավաբանական անձանց, ՍՊԸ-ները և անհատ ձեռնարկատերերը կարող են գրանցվել առցանց եղանակով:

Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս ՔՀԿ-ները առևտրային ընկերությունների համեմատ անբարենպաստ վիճակում են գտնվում: Մասնավորապես, ՔՀԿ-ները չեն կարող օգտվել հարկման պարզեցված ընթացակարգերից: Այդ ընթացակարգերից է շրջանառության հարկը, որից կարող են օգտվել 115 միլիոն ՀՀ դրամը չգերազանցող շրջանառություն ունեցող ընկերությունները³⁷: Հարկման այս համակարգը

³⁷ ՀՀ հարկային օրենսգիրք, 04.10.2016, վերջին փոփ. 27.05.2021, հոդված 254, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=155468>:

ՔՀԿ-ներին թույլ կտար վճարել համախառն եկամտի 5%-ը՝ շահութահարկի փոխարեն, որը որպես կանոն կազմում է զուտ եկամտի 18%-ը³⁸: Մյուս պարզեցված ընթացակարգը միկրոձեռնարկատիրության հարկային համակարգն է՝ այն տնտեսվարող սուբյեկտների համար, որոնց տարեկան շրջանառությունը չի գերազանցում 24 միլիոն ՀՀ դրամը: Այս ընթացակարգը կիրառելի է գործունեության սահմանափակ տեսակների համար և ազատում է բոլոր հարկային պարտավորություններից՝ բացառությամբ մաքսատուրքի, ակցիզային հարկի և վարձու աշխատողների համար հաստատագրված եկամտային հարկի³⁹:

Անհավասար հարկային դաշտի պատճառով մրցույթների դիմելիս ՔՀԿ-ները տնտեսվարող սուբյեկտների համեմատ պակաս մրցունակ են լինում: Բացի դրանից, ի տարբերություն ընկերությունների, ՀԿ-ները պարտավոր են աուդիտի հաշվետվություն ներկայացնել, եթե հանրային աղբյուրներից նրանց տարեկան եկամուտը գերազանցում է 10 միլիոն ՀՀ դրամը, որն ավելանում է նրանց նախահաշվարկին՝ պետական գնումների մրցույթներին դիմելիս:

Գործնականում ՔՀԿ-ներում հարկային ստուգումներն ավելի հազվադեպ են տնտեսվարող սուբյեկտների համեմատ: ՊԵԿ-ի՝ 2020 թվականի հուլիսից մինչև 2021 թվականի հուլիս ժամանակահատվածի համար սահմանված տարեկան ստուգումների ծրագրում ընդգրկված 893 կազմակերպությունների մեծամասնությունը մասնավոր ընկերություններ են: Այս ցանկում նշված են ընդամենը 3 հասարակական կազմակերպություն և 13 հիմնադրամ, ընդ որում, այդ հիմնադրամների մեծ մասը կրթական հաստատություններ են (բուհեր)⁴⁰:

Չափորոշիչ 2. Պետությունը հավասարապես է վերաբերվում բոլոր ՔՀԿ-ներին նրանց հիմնադրաման, գրանցման և գործունեության հարցերում:

ՔՀԿ-ների միջև օրենքով սահմանված հատուկ տարբերակում չկա: Հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների իրավական կարգավորումները համահավասարեցել են վերջերս տեղ գտած փոփոխությունների շնորհիվ, որոնք վերաբերում են այս երկու տեսակի կազմակերպությունների համար գրանցման նույն ժամկետների և հաշվետվության ներկայացման նույնատիպ պահանջների սահմանմանը: Հիմնադրամների համար տարեկան կտրվածքով աուդիտի հաշվետվության պահանջ է սահմանված, եթե հաշվետու տարվա ավարտին նրանց ակտիվների արժեքը գերազանցում է 10 միլիոն ՀՀ դրամը,⁴¹ մինչդեռ ՀԿ-ների դեպքում աուդիտի հաշվետվությունը պահանջվում է պետական կամ համայնքային միջոցների օգտագործման դեպքում, եթե այդ աղբյուրներից ստացած գումարը հաշվետու տարվա ընթացքում կազմել է 10 միլիոն և ավելի ՀՀ դրամ⁴²:

Ինչ վերաբերում է գործնական դաշտին, ՔՀԿ-ները նշում են, որ պաշտոնյաները ընտրովի մոտեցում են ցուցաբերում այն ՔՀԿ-ների հանդեպ, որոնց հետ խորհրդակցում են որոշումներ ընդունելիս, իսկ տեղական իշխանությունները ՔՀԿ-ների ֆինանսավորումը տրամադրում են ըստ հայեցողության (տե՛ս նաև Ոլորտ 5՝ «Որոշումների ընդունման

³⁸ Նույն տեղում, հոդված 125:

³⁹ Նույն տեղում, հոդված 267 և 269:

⁴⁰ 2021 թվականի հուլիսի 1-ից մինչև 2022 թվականի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում իրականացվող համալիր հարկային ստուգումների ծրագիր, <https://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTIVerificationsPlan>:

⁴¹ ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», 26.12.2002, հոդված 39:

⁴² ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 26:

գործընթացին մասնակցելու իրավունք» և Ոլորտ 9՝ «Պետական աջակցություն»): Ֆոկուս-խմբային քննարկումների մասնակից ՔՀԿ-ների որոշ ներկայացուցիչներ կարծում են, որ իշխանությունները հակված են ավելի բարեհաճ վերաբերմունք ցուցաբերելու ծառայություններ մատուցող ՔՀԿ-ների նկատմամբ՝ ի հակադրություն մարդու իրավունքներով և բնապահպանական նախաձեռնություններով զբաղվող ՔՀԿ-ների:

Ոլորտի կոնկրետ առաջարկությունները հետևյալն են.

- Արդարադատության նախարարությանը՝ հնարավորություն ընձեռել ՔՀԿ-ներին գրանցվել և գրանցման տվյալները թարմացնել էլեկտրոնային եղանակներով:
- Ֆինանսների նախարարությանը՝ տնտեսական գործունեություն իրականացնող ՔՀԿ-ների համար հարկային դաշտում ապահովել առնվազն հավասար վերաբերմունք՝ թույլ տալով նրանց գործել շրջանառության հարկի կամ միկրոձեռնարկատիրության կարգավորումների շրջանակում:

3.3 Ֆինանսավորման մատչելիություն

Ոլորտի ընդհանուր գնահատական՝ 5.4/7

Իրավական դաշտ՝ 5.8/7	Գործնական դաշտ՝ 4.9/7
-------------------------	--------------------------

Օրենսդրությունը թույլ է տալիս ՔՀԿ-ներին ֆինանսավորում հայցել, ստանալ և օգտագործել բոլոր օրինական աղբյուրներից, սակայն այս հնարավորությունը լիարժեք չի օգտագործվում՝ նվիրաբերությունները և ՔՀԿ-ների ձեռնարկատիրական գործունեությունը խթանող մեխանիզմների պակասի պատճառով: 2020 թվականի ավարտին հետպատերազմյան քաղաքական լարվածության համատեքստում ավելացավ թիրախավորումը և ատելության խոսքը մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ՔՀԿ-ների և հատկապես նրանց նկատմամբ, որոնք ասոցացվում են Բաց հասարակության հիմնադրամների հետ կամ ֆինանսավորվում այդ կազմակերպության կողմից:

Ընդհանուր առմամբ, այս ոլորտում իրավիճակը չի փոխվել: Հանրային աղբյուրներից ֆինանսավորման դեպքում աուդիտի պահանջը հանելու վերաբերյալ «ՔՀԿ չափիչ» 2019 թվականի զեկույցի առաջարկը չի իրականացվել: Մյուս կողմից, սակայն, պարտադիր աուդիտի ենթակա՝ հանրային աղբյուրներից ստացած տարեկան գումարի շեմը կրկնակի բարձրացվել է, ինչը դրական է գնահատվում: Այնուամենայնիվ, աուդիտի պահանջը դեռևս խնդրահարույց է մնում ՔՀԿ-ների համար, քանի որ աուդիտի ծախսերը կարող են չծածկվել պետական դրամաշնորհների միջոցներից, և այդ դեպքում նրանք ստիպված են լինում միջոցներ հայթայթել աուդիտը կազմակերպելու համար:

Չափորոշիչ 1. ՔՀԿ-ներն ազատ են ֆինանսական և նյութական ռեսուրսներ փնտրել, ստանալ և օգտագործել իրենց նպատակների իրականացման ուղղությամբ:

Օրենսդրական դաշտը թույլ է տալիս ՔՀԿ-ներին ազատորեն հայցել, ստանալ և օգտագործել ֆինանսական և նյութական ռեսուրսներ: Կազմակերպությունների եկամուտների հնարավոր աղբյուրները թվարկված են «Հասարակական կազմակերպությունների մասին» և «Հիմնադրամների մասին» օրենքներում: ՔՀԿ-ները

կարող են անդամավճար գանձել, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել, ստանալ դրամական մուտքեր պետական բյուջեից, ինչպես նաև դրամաշնորհներ, նվիրաբերություններ և օրենքով չարգելված այլ միջոցներ⁴³: «Հիմնադրամների մասին» օրենքում որպես ֆինանսավորման հնարավոր աղբյուր է նշվում նաև անձեռնմխելի կապիտալով հիմնադրամը, որի մասին դրույթը պետք է ներառված լինի կանոնադրության մեջ՝ այդ հիմնադրամի կառավարման և վերահսկման վերաբերյալ այլ դրույթների հետ մեկտեղ: 2021 թվականի ապրիլին խորհրդարանն առաջին ընթերցմամբ ընդունեց օրենսդրական փոփոխությունների մի փաթեթ, որը նպատակ ուներ անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների մասին հատուկ օրենք սահմանել⁴⁴: Այս նախագծով նախատեսում է շահութահարկից ազատել անձեռնմխելի կապիտալով հիմնադրամներից ստացվող եկամուտը, սակայն անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների կառավարման և վերահսկման վերաբերյալ մի շարք կարգավորումներ են առաջարկվում, որոնք կարող են սահմանափակող լինել: Նախագիծը դեռևս չի ներառվել խորհրդարանի նոր գումարման օրակարգում:

Օրենսդրությամբ սահմանված աուդիտի ընթացակարգերը ազդում են ՔՀԿ-ների՝ դրամական միջոցներն օգտագործելու և ֆինանսավորման վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելու կարողության վրա: Այսպես, եթե հասարակական կազմակերպությունը հաշվետու տարվա ընթացքում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների միջոցներից 10 միլիոն և ավելի ՀՀ դրամի չափով գումար է ստացել, ապա այդ միջոցների օգտագործման վերաբերյալ աուդիտորական հաշվետվություն պետք է ներկայացնի⁴⁵: Հիմնադրամների համար աուդիտի պահանջը սահմանված է այն դեպքում, եթե հաշվետու տարվա ավարտին հիմնադրամի ակտիվների արժեքը գերազանցում է 10 միլիոն ՀՀ դրամը⁴⁶: Աուդիտի իրականացումը ՔՀԿ-ների կողմից որպես խնդրահարույց է նշվում, քանի որ այն լրացուցիչ ֆինանսական բեռ է դառնում, հատկապես, երբ ՔՀԿ-ները աշխատում են դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում և աուդիտի ծախսերի համար հատկացված միջոցներ չունեն:

Եթե ոչ առևտրային կազմակերպության իրացման շրջանառությունը տարվա ընթացքում գերազանցում է 115 միլիոն դրամը, ապա այն դառնում է 20% ԱԱՀ վճարող, սակայն միայն ԱԱՀ-ի շեմը գերազանցող մասով⁴⁷: Օրենսդրությունը տնտեսական գործունեություն իրականացնող ՔՀԿ-ների թույլ չի տալիս օգտվել առևտրային կազմակերպությունների համար հասանելի՝ հարկման պարզեցված սխեմաներից (տե՛ս Ոլորտ 2՝ «Հավասար վերաբերմունք»):

Գործնականում ՔՀԿ-ները սահմանափակումների չեն հանդիպում տարբեր աղբյուրներից ֆինանսավորում հայցելու, ստանալու և օգտագործելու հարցում: Այնուամենայնիվ, զգալի կախվածություն կա դոնորների ֆինանսավորումից, քանի որ անհատական նվիրատվությունները, մասնավոր ոլորտի աջակցությունը և ձեռնարկատիրական գործունեությունը ՔՀԿ-ների եկամուտների փոքր մասն են կազմում: ՔՀԿ-ներն ավելի ու ավելի շատ են գիտակցում, որ ինքնաբավությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ

⁴³ ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 7, ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», 26.12.2002, հոդված 8:

⁴⁴ «Անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի նախագիծ, ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի առաջին ընթերցմամբ՝ 2021 թ. ապրիլի 19-ին, <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=11761&Reading=0>:

⁴⁵ ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 26:

⁴⁶ ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», 26.12.2002, հոդված 39:

⁴⁷ ՀՀ հարկային օրենսգիրք, 04.10.2016, խմբ. 27.05.2021, հոդվածներ 59 և 63:

է ֆինանսավորման բազմազան աղբյուրներ ունենալ: Այնուամենայնիվ, այլընտրանքային ֆինանսավորման հայթայթման և մասնավոր ոլորտի հետ երկխոսության գործելակերպի զարգացումը դանդաղում է, քանի որ չկան այնպիսի հարկային արտոնություններ, որոնք կխթանեին նվիրատվությունները և սոցիալական ձեռներեցության նախաձեռնությունները (տե՛ս նաև Ոլորտ 9՝ «Պետական աջակցություն»):

Չափորոշիչ 2. Ֆինանսավորման կամ նյութական ռեսուրսների տեղական, օտարերկրյա և միջազգային աղբյուրների միջև տարբերություն չի դրվում:

Միջազգային աղբյուրներից նվիրատվություններ, դրամաշնորհներ կամ բնաիրային աջակցություն ստանալու համար իրավական սահմանափակումներ չկան: Հարկային ընթացակարգերն ավելի նպաստավոր են որոշակի օտարերկրյա աղբյուրներից ֆինանսավորվելու դեպքում, երբ ՔՀԿ-ները կարող են ազատվել ԱԱՀ-ից՝ դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում հատուկ միջկառավարական համաձայնագրերի հիման վրա ապրանքներ կամ ծառայություններ գնելիս (օրինակ՝ ԵՄ կամ ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորման դեպքում): Այլ աղբյուրներից ֆինանսավորվելու դեպքում հարկային արտոնություններ կարող են տրամադրվել տվյալ ծրագիրը որպես բարեգործական որակող համապատասխան լիազոր մարմնի որոշմամբ, որը, սակայն, երկարատև բյուրոկրատական գործընթաց է պահանջում: Ինչ վերաբերում է միջազգային աղբյուրներից բնաիրային աջակցության հարկմանը, ապա արտերկրից ստացված ապրանքները ենթակա են մաքսատուրքի վճարման, եթե դրանք բարեգործական ծրագրերի շրջանակներում չեն ներմուծվել:

Գործնականում ՔՀԿ-ները կարող են թիրախավորվել ֆինանսավորման աղբյուրների պատճառով: Մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ՔՀԿ-ների դեմ արատավորող արշավները հատկապես թիրախավորում են Բաց հասարակության հիմնադրամների (ԲՀՀ) կողմից ֆինանսավորվող ՔՀԿ-ներին և ԲՀՀ-ի հետ առնչվող անձանց, որոնց մեղադրում են «հակահայկական» օրակարգին աջակցելու մեջ: Նման խոսույթները վարկաբեկում են քաղաքացիական հասարակության հատվածը և բացասաբար են անդրադառնում ՔՀԿ-ների հանրային ընկալման և թիրախ խմբերի հետ նրանց կապի վրա⁴⁸: Տարբեր մարզային ՔՀԿ-ներ նշել են, որ երբեմն համայնքում ակտիվ քննադատական դիրքորոշում ցուցաբերող և վերահսկող դեր կատարող ՀԿ-ները տեղական ինքնակառավարման կամ իրավապահ մարմինների կողմից դիտավորյալ պիտակավորվում են որպես «սորոսական» նրանց խոցելի դարձնելու և հանրության աչքում վստահելիության նվազման նպատակով⁴⁹ (տե՛ս նաև Ոլորտ 9՝ «Պետության կողմից պաշտպանության պարտականություն»):

Ոլորտի կոնկրետ առաջարկությունները հետևյալն են.

- Ֆինանսների նախարարությանը՝ ստեղծել ավելի բարենպաստ հարկային միջավայր, որը կբարելավի ՔՀԿ-ների հնարավորությունները տարբեր աղբյուրներից ֆինանսավորում և բնաիրային աջակցություն հայթայթելու գործում, ներառյալ անհատներից և տնտեսվարող սուբյեկտներից նվիրատվությունների ստացումը և ուղղակի ձեռնարկատիրական գործունեությունը:

⁴⁸ Մանրամասների համար տե՛ս «Ապատեղեկատվությունն ու կեղծ տեղեկատվությունը Հայաստանում. դիմակայելով կեղծ պատմություններին», հունիս 2021 թ., Freedom House, https://freedomhouse.org/sites/default/files/2021-07/Disinformation-in-Armenia_Am-final.pdf:

⁴⁹ Ֆոկուս-խմբային քննարկումներ, հոկտեմբեր, 2021 թ.:

- Ֆինանսների նախարարությանը՝ հանել պարտադիր ֆինանսական աուդիտի պահանջը և պետական դրամաշնորհների աուդիտի պարտականությունը դնել կառավարության վրա:
- Պետությունը պետք է համարժեք պաշտպանություն ապահովի ՔՀԿ-ներին թիրախավորող ատելության խոսքից և ապատեղեկատվությունից (տե՛ս նաև Ոլորտ 8՝ «Պետության կողմից պաշտպանության պարտականություն»):

3.4 Խաղաղ հավաքների ազատություն

Ոլորտի ընդհանուր գնահատական՝ 5.3/7

Իրավական դաշտ՝
5.7/7

Գործնական դաշտ՝
4.9/7

Հավաքների ազատությունը պաշտպանվում է Հայաստանի օրենսդրությամբ՝ միջազգային չափորոշիչներին համահունչ կերպով: Այնուամենայնիվ, գործնականում բազմաթիվ դեպքեր են արձանագրվել, երբ պետությունը չի կարողացել երաշխավորել և պաշտպանել հավաքները: Հիմնական բացասական զարգացումները կապված են ռազմական դրության ժամանակ հավաքների սահմանափակումների և հետագա քաղաքական զարգացումների հետ: Արձանագրվել են ոստիկանության ուժի անհամաչափ կիրառման դեպքեր, ոչ հետևողական գործողություններ՝ կախված բողոքի ցույցերի թեմայից և մասնակիցներից: Ընդհանուր առմամբ, նախորդ տարվա զեկույցի համեմատ իրավիճակը չի փոխվել: «ՔՀԿ չափիչ» 2019 թվականի զեկույցի առաջարկները չեն իրականացվել և դեռևս արդիական են ոլորտի ընթացիկ զարգացումների համատեքստում:

Չափորոշիչ 1. Յուրաքանչյուր ոք կարող է ազատորեն օգտվել խաղաղ հավաքների կազմակերպման և մասնակցության իրավունքից:

Ըստ օրենքի՝ յուրաքանչյուր ոք կարող է կազմակերպել խաղաղ հավաքներ և մասնակցել դրանց: Խաղաղ հավաքները պետք է պատշաճ պաշտպանվեն, անկախ այն բանից բացօթյա են կազմակերպվում թե՛ փակ տարածքում, առցանց, հանրային թե՛ մասնավոր տարածքներում, ինչպես նաև վերը նշվածների համադրությամբ: Հավաքների ազատությունը պաշտպանվում է Սահմանադրությամբ և կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման, հասարակական կարգի պաշտպանության, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով⁵⁰: «Հավաքների ազատության մասին» օրենքում հավաքի հասկացությունը հետևյալ կերպ է սահմանվում՝ «հավաքը երկու կամ ավելի անձանց խաղաղ և առանց զենքի ժամանակավոր ներկայությունն է որևէ վայրում՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ ընդհանուր կարծիք ձևավորելու կամ արտահայտելու մտադրությամբ»⁵¹: Օրենքը սահմանափակումներ է նախատեսում հավաքների ազատության իրավունքի իրացման նկատմամբ որոշակի անձանց, օրինակ՝

⁵⁰ ՀՀ Սահմանադրություն, փոփ. 06.12.2015, հոդված 44:
⁵¹ ՀՀ օրենքը «Հավաքների ազատության մասին», 14.04.2011, վերջ. փոփ. 25.10.2017, հոդված 2, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=117173>:

դատավորների, դատախազների, քննիչների, ինչպես նաև զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայողների համար⁵²: Ինքնաբուխ հավաքները կարգավորվում են հատուկ դրույթներով՝ շտապ հավաքների հետ միասին, քանի որ դրանց համար իրազեկում ներկայացնելը պարտադիր չէ: Միաժամանակյա և հակադարձ ուղղվածությամբ հավաքների համար սահմանափակումներ չկան: Ընդհանուր առմամբ, խաղաղ հավաքների վերաբերյալ օրենսդրությունը գնահատվում է որպես միջազգային չափորոշիչներին համապատասխան:

2020 թվականին՝ COVID-19 համավարակի համատեքստում հայտարարված արտակարգ դրության ընթացքում հավաքներն արգելվեցին, սակայն 2021 թվականի օգոստոսին արգելքը հանվեց, և հավաքները թույլատրվեցին՝ սոցիալական հեռավորություն պահպանելու և դիմակներ կրելու պահանջով⁵³: Այնուամենայնիվ, 2020 թվականի սեպտեմբերի 27-ին արցախյան պատերազմի կապակցությամբ կառավարության կողմից հայտարարված ռազմական դրության ընթացքում բոլոր հավաքներն ու գործադուլներն արգելվեցին⁵⁴: Ռազմական դրությունը երկարաձգվեց մինչև 2021 թվականի մարտը, սակայն 2020 թվականի դեկտեմբերի 2-ին կառավարությունը չեղարկեց հանրային հավաքների և գործադուլների արգելման մասին դրույթները⁵⁵: Չնայած սահմանափակումներին՝ այս ժամանակահատվածում բազմաթիվ հանրային հավաքներ են անցկացվել: Պատերազմի ժամանակ այդ հավաքների մեծ մասը նպատակ ուներ գրավել միջազգային կազմակերպությունների և երկրների ուշադրությունը, և այս հավաքներն ընթացել են գրեթե առանց ոստիկանության միջամտության: Զինադադարի մասին հայտարարության կնքումից հետո կառավարության և փաստաթղթի դրույթների դեմ բողոքի ցույցեր սկսվեցին, որոնք հաճախ ուղեկցվում էին վարչապետի հրաժարականի պահանջով: Զինադադարի մասին հայտարարության գիշերը տեղի ունեցած բողոքի ցույցը տարբերվում էր մյուսներից իր բռնի բնույթով, սակայն ոստիկանությունը չկարողացավ համարժեք պաշտպանություն ապահովել⁵⁶: Բողոքի հետագա ակցիաները հիմնականում խաղաղ էին, սակայն, քանի որ դրանք խախտում էին ռազմական դրության սահմանափակումները, ոստիկանության ներկայացուցիչները հայտարարում էին հավաքների անօրինականության մասին և երբեմն ուժ կիրառում դրանք ցրելու համար⁵⁷:

2021 թվականին մի շարք հավաքներ են անցկացվել ինչպես ընդդիմադիր խմբերի, այնպես էլ իշխանական կուսակցության կողմից, որոնք շարունակվել են 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզարշավների շրջանակում: Մի

⁵² ՀՀ օրենքը «Հավաքների ազատության մասին», 14.04.2011, հոդված 8:

⁵³ ՀՀ կառավարության թիվ 298-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին», 16.03.2020, փոփ. 19.03.2020, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=145261>:

⁵⁴ ՀՀ կառավարության թիվ 1586-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին», 27.09.2020, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=146259>:

⁵⁵ ՀՀ կառավարության թիվ 1917-Ն որոշումը ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 1586-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին, 02.12.2020, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=147807>:

⁵⁶ Angry Mob Assaults Armenian Lawmaker, Threatens RFE/RL Bureau Following Nagorno-Karabakh Truce, Radio Free Europe/Radio Liberty («Լեռնային Ղարաբաղի զինադադարից հետո զայրացած ամբոխը հարձակվել է հայ պատգամավորի վրա և սպառնացել Ազատ Եվրոպա / Ազատություն Ռադիոկայանի գրասենյակին», Ազատ Եվրոպա / Ազատություն Ռադիոկայան), 10.11.2020, <https://www.rferl.org/a/angry-mob-attacks-rfe-rl-s-armenia-office-amid-unrest-following-nagorno-karabakh-deal/30939895.html>:

⁵⁷ «Խաղաղ հավաքների ազատության մշտադիտարկում» (հոկտեմբեր-դեկտեմբեր 2020 թ.), Զեկույց, Հայաստանի Հելսինկյան կոմիտե, Երևան, 2021 թ., <http://armhels.com/publications/խաղաղ-հավաքների-ազատության-մշտադիտարկում-2/>:

քանի անգամ հավաքները ցրվել են ճանապարհները փակելու և նախազգուշացումներին չենթարկվելու համար, բայց մեծ մասամբ ոստիկանությունն ուժ չի կիրառել՝ սահմանափակվելով նախազգուշացումներով: Արտահերթ խորհրդարանական ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում գրանցվել են վարչական ռեսուրսի չարաշահման, հավաքներին մասնակցելուն կամ մասնակցելուց հրաժարվելուն հարկադրելու դեպքեր⁵⁸: Քաղաքական թեմաներից դուրս 2021 թվականին մի քանի հավաք է եղել: Քաղաքացիական հասարակության ուշադրության կենտրոնում էին, մասնավորապես, «Ֆիզգորոդոկ» անվանումով թաղամասի կանաչ գոտու տարածքում նախատեսվող շինարարության դեմ ցույցերը⁵⁹:

Չափորոշիչ 2. Պետությունն աջակցում է խաղաղ հավաքների ընթացքին և պաշտպանում է խաղաղ հավաքները:

Օրենքով սահմանված՝ հավաքի մասին իրազեկման գործընթացը համահունչ է միջազգային իրավունքին: Բացօթյա հանրային հավաքների համար օրենքը պահանջում է հավաքի անցկացման օրվանից ոչ ուշ, քան 7 օր, և ոչ շուտ, քան 30 օր առաջ գրավոր իրազեկում ներկայացնել այն համայնքի ղեկավարին, որտեղ նախատեսվում է անցկացնել հավաքը: Մինչև 100 մասնակից ունեցող, շտապ և ինքնաբուխ հավաքների, ինչպես նաև առցանց հավաքների և փակ կամ մասնավոր տարածքում անցկացվող հավաքների համար իրազեկում չի պահանջվում: Իրազեկման նպատակը պետության կողմից հավաքի բնականոն և խաղաղ ընթացքն ապահովելու, ինչպես նաև այլ անձանց սահմանադրական իրավունքների ու հանրության շահերի պաշտպանության համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելն է⁶⁰: Իրազեկումը քննարկվում է մուտքագրվելու պահից առավելագույնը 5 օրվա ընթացքում և ուղարկվում է ոստիկանություն՝ կարծիք ստանալու նպատակով: Եթե մտադրություն կա հավաքի անցկացման համար սահմանափակումներ կիրառել կամ արգելել հավաքը, ապա ՏԻՄ-ը լսումներ է անցկացնում և ծանուցում հավաքի կազմակերպիչներին: Սահմանափակումներ կարող են կիրառվել, եթե նախատեսված հավաքի ժամանակը, վայրը կամ եղանակը անմիջականորեն կարող են հանգեցնել այլ անձանց հիմնարար իրավունքների կամ հանրության շահերի անհամաչափ սահմանափակման: Նման դեպքում լիազոր մարմինը կազմակերպչին կարող է առաջարկել փոխել հավաքի անցկացման ժամանակը, վայրը կամ եղանակը: Հավաքն արգելվում է, եթե հավաքի նպատակն է սահմանադրական կարգի բռնի տապալումը, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելը, բռնություն կամ պատերազմ քարոզելը: Եթե սահմանափակման կամ արգելման որոշում չի ընդունվում, ապա համարվում է, որ իրազեկումն ընդունված է ի գիտություն⁶¹: Հավաքի անցկացման մասին համայնքի ղեկավարի որոշումների դեմ կարող է հայց ներկայացվել վարչական

⁵⁸ «Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի 2021 թ. հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների դիտորդական առաքելության ամփոփիչ զեկույց», «Ականատես» դիտորդական նախաձեռնություն, <https://transparency.am/hy/news/view/3363>:

⁵⁹ «Երևանի «Ֆիզգորոդոկ»-ում բարձրահարկի կառուցումը՝ բողոքի ու հրմշտոցի պատճառ. կան բերման ենթարկվածներ», «Ազատություն» ռադիոկայան, 21.09.2021, <https://www.azatutyun.am/a/31421694.html>, «Դատապարտում ենք ֆիզիկայի ինստիտուտին հարող տարածքի զավթումը և ոստիկանության կողմից բիրտ ուժի կիրառումը» (Հայտարարություն), Էկոլուր, 23.08.2021, <https://www.ecolur.org/hy/news/cities/13415/>:

⁶⁰ ՀՀ օրենքը «Հավաքների ազատության մասին», 14.04.2011, հոդվածներ 9-13:

⁶¹ ՀՀ օրենքը «Հավաքների ազատության մասին», 14.04.2011, հոդվածներ 15-20:

դատարան՝ հավաքի նախատեսված օրվանից ոչ ուշ, քան 7 օր առաջ: Հայցադիմումները քննվում են 2 օրացուցային օրվա ընթացքում⁶²:

Գործնականում հավաքների մեծ մասը (բացի նախընտրական հանդիպումներից) անցկացվել է առանց իրազեկման՝ որպես շտապ կամ ինքնաբուխ հավաք: Ընդ որում, այդ դեպքերում հավաքի մասնակիցների թիվը հաճախ չի գերազանցել հարյուրը⁶³:

Չափորոշիչ 3. Պետությունն անհարկի պահանջներ չի առաջադրում խաղաղ հավաքների կազմակերպիչների և մասնակիցների նկատմամբ:

Ըստ օրենքի՝ հավաքի ղեկավարը հավաքի ընթացքում պարտավոր է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել հավաքի բնականոն ընթացքն ապահովելու համար, մասնավորապես հավաքի մասնակիցների կողմից բռնի գործողությունները կանխելու, բռնությունից զերծ մնալու և ուժի կիրառմանը պատրաստ մասնակիցներից սահմանազատվելու կոչերի միջոցով: Կազմակերպիչը պարտավոր է նաև հավաքի մասնակիցներին տեղեկացնել ոստիկանության ծառայողների պահանջների մասին⁶⁴: Ոստիկանությունը պարտավոր է հավաքի մասին տեղեկատվություն ստանալուց հետո անհապաղ նշանակել իր ներկայացուցիչին և հավաքի անցկացման վայրից հեռացնել այն անձանց, որոնք կոպտորեն խախտում են հավաքի խաղաղ և բնականոն ընթացքը⁶⁵: Պետության կողմից հավաքի անցկացման և կամ առնչվող ծախսերի համար որևէ վարձավճար սահմանված չէ: Հավաքի մասնակիցների գործողությունների համար կազմակերպիչներին պատասխանատվության ենթարկելու որևէ պահանջ օրենքով չի սահմանված:

Կազմակերպիչների կողմից հավաքների վերաբերյալ տեղեկատվության տարածման (այդ թվում՝ առցանց եղանակների միջոցով) կամ հավաքների ընթացքում սարքավորումների օգտագործման հետ կապված որևէ սահմանափակում չի արձանագրվել:

Չափորոշիչ 4. Իրավապահ մարմիններն աջակցում են խաղաղ հավաքներին և պատասխանատու են իրենց ներկայացուցիչների գործողությունների համար:

Օրենքը հստակ կարգավորումներ է սահմանում ոստիկանության կողմից ուժի, հատուկ միջոցների և հսկողության սարքերի կիրառման վերաբերյալ: Մակայն հավաքների ոստիկանական վերահսկման վերաբերյալ առանձին ենթաօրենսդրական ակտեր չկան. դրանք նախատեսվում է մշակել ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարության շրջանակում⁶⁶: Իրազեկման պահանջի խախտման դեպքում ոստիկանությունը պետք է բարձրախոսով տեղեկացնի, որ հավաքն անօրինական է, և որ մասնակիցները կարող են ենթարկվել պատասխանատվության: Միաժամանակ, ըստ օրենքի, ոստիկանությունը պարտավոր է ցանկացած դեպքում աջակցել հավաքին, եթե հավաքը խաղաղ բնույթ ունի: Ոստիկանությունը կարող է դադարեցնել հավաքը միայն այն դեպքում, երբ այլ կերպ հնարավոր չէ կանխել այլ անձանց հիմնական իրավունքների կամ հանրության շահերի անհամաչափ սահմանափակումը: Այդ դեպքում հավաքը դադարեցնելու պահանջով ոստիկանությունը դիմում է հավաքի ղեկավարին, այնուհետև (հավաքի ղեկավարի բացակայության կամ հավաքի ղեկավարի կողմից ոստիկանության

⁶² ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը, վերջին փոփ. 30.07.2021, հոդված 204, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=155146>:

⁶³ «Խաղաղ հավաքների ազատության մշտադիտարկում» (հոկտեմբեր-դեկտեմբեր 2020 թ.), Զեկույց, Հայաստանի Հելսինկյան կոմիտե, Երևան, 2021:

⁶⁴ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենք, 14.04.2011, հոդված 31:

⁶⁵ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենք, 14.04.2011, հոդված 32:

⁶⁶ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարությունից բխող 2020-2022 թթ. գործողությունների ծրագիր, https://www.moj.am/storage/uploads/02Appendix_2.pdf:

պահանջը չկատարելու դեպքում) ոչ պակաս, քան երկու անգամ բարձրախոսով մասնակիցներից պահանջում է դադարեցնել հավաքը՝ սահմանելով ողջամիտ ժամկետ, և նախազգուշացնում է չենթարկվելու դեպքում հատուկ միջոցներ (օրինակ, արցունքաբեր գազ, ջրանետեր, լուսաձայնային նոնակներ) կիրառելու հնարավորության մասին: Զանգվածային անկարգությունների դեպքում ոստիկանությունը լիազորված է անհապաղ միջոցներ ձեռնարկել՝ առանց նախապես ծանուցելու⁶⁷:

Ըստ «Ոստիկանության մասին» օրենքի, արգելվում է հատուկ միջոցներ օգտագործել խաղաղ, առանց զենքի և օրենքով սահմանված կարգի խախտմամբ անցկացվող հավաքները դադարեցնելու ժամանակ: Արգելվում է նաև ոստիկանության սպառազինության մեջ հատուկ միջոցների այնպիսի տեսակներ ընդգրկել, որոնք կարող են մարդու առողջությանը ծանր վնաս պատճառել կամ չհիմնավորված ռիսկի աղբյուր են⁶⁸: Բացի դրանից, օրենքը ոստիկանության ծառայողներին պարտավորեցնում է հասարակական կարգի պահպանությունն ապահովելիս կրել սահմանված համազգեստ՝ տեսանելի տարբերանշաններով⁶⁹:

«Ոստիկանության մասին» օրենքում սահմանվել են նաև վերահսկողության տեխնիկական միջոցների կիրառման կանոնակարգերը, որոնք ապահովում են նման սարքերի օգտագործման վերաբերյալ պատշաճ ծանուցումը և անձնական տվյալների պաշտպանությունը: Հանրային վայրերում տեղադրված անշարժ տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերի մասին պետք է նախազգուշացնող ցուցանակներ տեղադրվեն տեսանելի վայրերում: Շարժական սարքավորումներ օգտագործելիս ոստիկանության ծառայողները դրանք պետք է կրեն տեսանելի ձևով, բացառությամբ գաղտնի օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման դեպքերի: Տեսանյութերը կամ լուսանկարները կարող են օգտագործվել հանցագործությունների կամ հասարակական կարգի խախտումների դեպքերի քննության, ոստիկանության ծառայողների գործողությունների վերաբերյալ բողոքները քննելու, անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն աջակցելու, ոստիկանության ծառայողի նկատմամբ իրականացված ծառայողական քննության ավարտից հետո վերջինիս վերագրվող կարգապահական խախտման դեպքի առկայությունը կամ բացակայությունը հրապարակայնացնելու նպատակով՝ առանց այլ անձանց նույնականացնող տվյալների հրապարակման կամ դրանց նվազագույն հրապարակմամբ: Տեսանյութերը կամ լուսանկարներն այլ նպատակներով օգտագործելը (այդ թվում՝ հրապարակելը) արգելվում է: Տեսանյութերի և լուսանկարների պահոց մուտք գործելու և տվյալներին ծանոթանալու իրավունք ունեցող ոստիկանության պաշտոնատար անձանց ցանկը, տվյալներից օգտվելու կարգը սահմանվում են ոստիկանության պետի հրամանով⁷⁰:

Տարվա ընթացքում ոստիկանության կողմից բողոքի ակցիայի մասնակիցներին բերման ենթարկելու և ցույցերը ցրելու ընթացքում ուժի անհամաչափ գործադրման մի շարք դեպքեր են արձանագրվել, այդ թվում՝ անչափահասների հանդեպ: Նման դեպքեր են գրանցվել, օրինակ, «Ֆիզգործող» անունով հայտնի թաղամասի բնակիչների կողմից կազմակերպված՝ թաղամասի կանաչ հատվածում ենթադրաբար ապօրինի

⁶⁷ ՀՀ օրենքը «Հավաքների ազատության մասին», 14.04.2011, հոդվածներ 32 և 33:

⁶⁸ ՀՀ օրենքը «Ոստիկանության մասին», 16.04.2001, վերջ. փոփ. 18.06.2020, հոդված 31, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=146074>:

⁶⁹ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենք, 16.04.2001, հոդված 12:

⁷⁰ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենք, 16.04.2001, հոդված 22:

շինարարության դեմ ուղղված ցույցերի ընթացքում⁷¹: Բացի այդ, գրանցվել են մարդու արժանապատվության իրավունքը խախտող վերաբերմունքի, ազատությունից զրկելու ընթացակարգային խախտումների փաստաթղթավորված դեպքեր⁷²:

Փորձագետները նշում են, որ հավաքների ընթացքում ապօրինի գործողություններ կատարած ոստիկանների նկատմամբ հարուցված վարույթները և կիրառված պատժամիջոցներն անբավարար են: 2015 և 2016 թվականների հավաքներին ոստիկանության ծառայողների կողմից իրավախախտումների համար հարուցված քրեական գործերը դեռ ընթացքի մեջ են, և դեռևս որևէ լուրջ պատժամիջոց չի կիրառվել լրագրողների և հավաքի մասնակիցների նկատմամբ ոստիկանների կողմից գործադրված կոպիտ բռնության դեպքերի համար:

Ոլորտի կոնկրետ առաջարկությունները հետևյալն են.

- Ոստիկանությունը պետք է վերացնի իր ծառայողների կողմից որևէ ապօրինի գործողության հնարավորությունը և հետևողական մոտեցում կիրառի հավաքների վերահսկման ընթացքում:
- Իրավապահ մարմինները պետք է պատշաճ հետաքննություն ապահովեն և համապատասխան պատժամիջոցներ կիրառեն այն ոստիկանների նկատմամբ, որոնք չարաշահել են իրենց լիազորությունները հավաքների ժամանակ ոստիկանության գործունեությունն իրականացնելիս:

3.5 Որոշումների ընդունման գործընթացում մասնակցության իրավունք

Ոլորտի ընդհանուր գնահատական՝ 4.8/7

Իրավական դաշտ՝ 5.3/7	Գործնական դաշտ՝ 4.3/7
-------------------------	--------------------------

Քաղաքացիական հասարակությանը և հանրությանը որոշումների կայացման գործընթացում ներգրավելու նպատակով մի շարք ինստիտուցիոնալ մեխանիզմներ են ստեղծվել: Այնուամենայնիվ, գործնականում դրանցից ոչ բոլորն են լիարժեք գործում, օրինակ՝ խորհրդակցական մարմինները, իսկ հանրային քննարկումների էլեկտրոնային հարթակը, հանրային լսումները և պետական մարմինների կողմից տեղեկությունների հրապարակումը սահմանափակ շրջանակ և արդյունավետություն ունեն: Կառավարության հետ հաղորդակցությունը թե՛ ինստիտուցիոնալ և թե՛ գործնական մակարդակում ավելի սերտ բույթ ունի՝ խորհրդարանի համեմատ, եղել են նաև

⁷¹ «Երևանի «Ֆիզգորոդոկ»-ում բարձրահարկի կառուցումը՝ բողոքի ու հրմշտոցի պատճառ. կան բերման ենթարկվածներ», «Ազատություն» ռադիոկայան, 21.09.2021, <https://www.azatutyun.am/a/31421694.html>, «Բերման են ենթարկվել Ֆիզգորոդոկում շինարարության դեմ բողոքի ակցիա իրականացնող քաղաքացիները, Էկոլուր, 14.09.2021, <https://www.ecolor.org/hy/news/cities/13415/>:

⁷² «Տարեկան հաղորդում 2020 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին», ՀՀ մարդու իրավունքների պաշտպան, <https://ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf>:

երկխոսության և համագործակցության մի քանի հաջողված դեպքեր: Սակայն վերջին երկու տարիներին ՔՀԿ-ները մասնակցության հետընթաց են նկատում՝ ի հակադրություն հետհեղափոխական վաղ շրջանում արձանագրված կառավարության բաց աշխատելառճի և ՔՀԿ-ների մեծ ակնկալիքների: Պետության կողմից հանրության ներգրավման ուղղությամբ պրոակտիվ ջանքերի և ՔՀԿ-ների փորձագիտական գիտելիքների նկատմամբ հետաքրքրության պակաս է նկատվում, իսկ ՔՀԿ-ների մասնակցության ազդեցությունը սահմանափակ է: Որոշ համայնքներում թափանցիկության և մասնակցության դրական միտումներ կան՝ պայմանավորված համայնքների ղեկավարների անձնական վերաբերմունքով, ինչպես նաև տեղական ՔՀԿ-ների հետևողական ջատագովության շնորհիվ, սակայն ընդհանուր առմամբ տեղական մակարդակում մասնակցության մակարդակը ցածր է: «ՔՀԿ չափիչ» 2019 թվականի զեկույցի առաջարկների իրականացման հետ կապված առաջընթաց չկա:

Չափորոշիչ 1. Յուրաքանչյուր ոք կարող է մասնակցել որոշումների ընդունման գործընթացներին:

Հայաստանում յուրաքանչյուր ոք իրավունք ունի մասնակցելու որոշումների կայացմանը, իսկ իրավական դաշտը մի շարք հնարավորություններ է ընձեռում քաղաքացիների և ՔՀԿ-ների մասնակցության համար, սակայն մասնակցության պահանջները չկատարելու համար պատասխանատվության մեխանիզմներն անբավարար են: Ըստ Սահմանադրության, քաղաքացիները կարող են որոշում կայացնողներին օրենսդրական նախագծերի նախաձեռնություններ և հանրագրեր ներկայացնել: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքում առանձին դրույթ կա օրենսդրական ակտերի նախագծերի՝ պարտադիր հանրային քննարկման ենթակա լինելու վերաբերյալ: Հանրային քննարկումների տևողությունն առնվազն 15 օր է: Հանրային քննարկումների արդյունքները և լրամշակված նորմատիվ իրավական ակտի նախագիծը նույնպես ենթակա են հրապարակման: Եթե կառավարություն է ներկայացվել հանրային քննարկում չանցած նախագիծ, ապա կառավարությունը կարող է վերադարձնել այն ներկայացնող մարմին⁷³: Այս դրույթները, սակայն, չեն տարածվում խորհրդարանի կողմից նախաձեռնած, ինչպես նաև քաղաքացիական նախաձեռնության կարգով առաջադրված օրենսդրական նախագծերի վրա⁷⁴: Խորհրդարանական նախագծերի դեպքում հանրային քննարկումների պահանջի չկիրառումը մասնակցության ոլորտի իրավական դաշտի ամենաակնառու խնդիրն է: Բացի այդ, 2021 թվականի ապրիլին ընդունված օրենսդրական փոփոխություններով սահմանվեց, որ ռազմական և արտակարգ դրությանն առնչվող իրավական ակտերը ենթակա չեն պարտադիր հանրային քննարկման,⁷⁵ ինչը ևս իրավական դաշտի սահմանափակումներից է: Գործնականում 2020-2021 թվականների ընթացքում մի շարք օրենքներ և կառավարության որոշումներ ընդունվեցին առանց հանրային քննարկման:

Ազգային ժողովի (ԱԺ) կանոնակարգում խորհրդարանական լուումներ հրավիրելու մասին դրույթ է ներառված, սակայն այս լուումների իրականացումը հայեցողական է⁷⁶: 2021 թվականի հոկտեմբերի դրությամբ տարվա ընթացքում անցկացվել էր երկու

⁷³ ՀՀ օրենքը «Նորմատիվ իրավական ակտերի մասին», 21.03.2018, վերջին փոփ. 19.04.2021, հոդվածներ 3 և 4, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152139>:

⁷⁴ Նույն տեղում, հոդված 1:

⁷⁵ ՀՀ օրենքը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», 19.04.2021, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=152130>:

⁷⁶ ՀՀ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենք, 16.12.2016, վերջին փոփ. 24.03.2021, հոդված 125, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=151845>

խորհրդարանական լուսն՝ գիտության զարգացման և տեղական ինքնակառավարման բարեփոխումների թեմաներով, իսկ 2019-2020 թթ. տարեկան կտրվածքով շուրջ 10 լուսն է կազմակերպվել⁷⁷: Առաջիկա լուսնների մասին տեղեկությունը հրապարակվում է խորհրդարանի կայքում, իսկ լուսնները հեռարձակվում են ուղիղ եթերում: Բացի այդ, խորհրդարանական հանձնաժողովների կողմից կազմակերպվում են աշխատանքային քննարկումներ ՔՀԿ-ների և փորձագետների հետ՝ հիմնականում հրավերների հիմքով: Խորհրդարանի հետ ՔՀԿ-ների գործակցության հաջողված օրինակ էր համատեղ աշխատանքը ԱԺ ընտրական բարեփոխումների աշխատանքային խմբում, որի խորհրդակցական խմբի կազմում ընդգրկվեցին ոլորտային ՔՀԿ-ներից փորձագետներ և կարողացան հասնել իրենց առաջարկություններից մի քանիսի ներառմանը: Նշված աշխատանքային խմբի կողմից կազմակերպվել են նաև խորհրդարանական լուսններ և բաց քննարկումներ՝ մասնակցության հնարավորությունն ընձեռելով խորհրդակցական խմբում ներառված ՔՀԿ-ների շրջանակից դուրս⁷⁸: Հետազոտությանը մասնակցած ՔՀԿ-ները նկատել են, որ թեև առկա է հատվածական գործակցություն ԱԺ պատգամավորների հետ, սակայն քաղաքացիական հասարակության կողմից բարձրաձայնված հարցերը հիմնականում հաշվի չեն առնվում և պատշաճ արձագանք չեն ստանում, իսկ ՔՀԿ-ների ներգրավման ուղղությամբ նախաձեռնողական ջանքերը քիչ են: Ավելին, վերջերս խորհրդարանի կողմից մի շարք վիճահարույց իրավական նախագծեր և որոշումներ ընդունվեցին՝ առանց հանրության մասնակցության կամ ներդրում ունենալու հնարավորության, օրինակ՝ զրպարտության և վիրավորանքի վերաբերյալ Քաղաքացիական օրենսգրքի և «Զանգվածային լրատվության մասին» օրենքի փոփոխությունները⁷⁹, «Արտակարգ դրության մասին» օրենքի փոփոխությունները, որոնք թույլ տվեցին տեղեկություններ հավաքել էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններից օգտվողների գտնվելու վայրի և զանգերի մասին⁸⁰, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի փոփոխությունը, ըստ որի պատգամավորական գործունեության հետ կապված ծախսերի համար հատկացվող ամսական գումարի չափը հնգապատկվեց⁸¹: Բացի դրանից, նույնիսկ այն դեպքերում, երբ կառավարության նախաձեռնած օրենսդրական նախագիծը պատշաճ կերպով քննարկվել է e-draft (Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք) հարթակի և

⁷⁷ Ըստ Ազգային ժողովի կայքի «Լուրեր» բաժնի ուսումնասիրության արդյունքների, <http://parliament.am/news.php?lang=arm>:

⁷⁸ Round table summary: Armenia – Does the early election endanger the electoral reform?, European Platform for Democratic Elections (Կլոր սեղանի ամփոփում, «Հայաստան. վաղ ընտրությունները վտանգում են արդյոք ընտրական բարեփոխումները», Ժողովրդավարական ընտրությունների եվրոպական հարթակ), 13.04.2021, <https://www.epde.org/en/news/details/round-table-armenia-does-the-early-election-endanger-the-electoral-reform.html>:

⁷⁹ Մանրամասների համար տես՝ Armenia: Legislative proposals put freedom of speech under pressure, CSO Meter («Հայաստան. օրենսդրական առաջարկները ճնշման տակ են դնում խոսքի ազատությունը», ՔՀԿ չափիչ), 15.02.2021, <https://csometer.info/updates/armenia-legislative-proposals-put-freedom-speech-under-pressure>:

⁸⁰ Մանրամասների համար տես՝ Աստղիկ Կարապետյան, «Տեղորոշման համակարգ. մտահոգություններ անձնական տվյալների արդյունավետ և անվտանգ մշակման շուրջ», EVN Report, <https://www.evnreport.com/հայերեն/personal-data-and-the-covid-19-pandemic>:

⁸¹ Փոփոխություն՝ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում, 15.07.2021, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=14880&year=2021&month=07&day=15&lang=arm&enc=utf8, «Ուղերձ ՀՀ Ազգային ժողովին՝ պատգամավորների ծախսերի ավելացման օրենսդրական փոփոխության մասին» (ՔՀԿ-ների և քաղաքացիների հայտարարություն), Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, 19.07.2021, <https://www.transparency.am/hy/statements/view/403>:

հանրային քննարկումների միջոցով, և ՔՀԿ-ները կարողացել են ջատագովել և համաձայնության հասնել որոշակի դրույթների շուրջ, խորհրդարանը կարող է վերջին պահին փոփոխել այդ դրույթները՝ նախքան օրենքն ընդունելը: Այս գործելակերպի ամենաթարմ օրինակը 2021 թվականի հոկտեմբերին խորհրդարանի կողմից ընդունված Քրեական դատավարության օրենսգրքի փոփոխություններն են: Թեև առաջին ընթերցմամբ ընդունված խմբագրությամբ խոշտանգման գործերի քննությունը վերապահվել էր Հատուկ քննչական ծառայության քննիչներին, ինչն արտացոլում էր «Ազգային հակակոռուպցիոն ռազմավարության» դրույթները և քննարկվել էր հանրության հետ խորհրդակցությունների ընթացքում, երկրորդ ընթերցմամբ համապատասխան հոդվածը փոփոխվել է՝ խոշտանգման գործերի քննությունը վերապահելով Ազգային անվտանգության ծառայությանը, իսկ Հատուկ քննչական ծառայությունը դադարել է գոյություն ունենալ որպես բարձրաստիճան պաշտոնատար անձանց կատարած հանցագործությունների քննության համար պատասխանատու մարմին: Նման արմատական փոփոխությունը ոչ քննարկվել էր, ոչ էլ տեղեկացվել՝ զրկելով ՔՀԿ-ներին կարծիք արտահայտելու հնարավորությունից⁸²:

Ինչ վերաբերում է մասնակցությանը տեղական մակարդակում, մի շարք իրավակարգավորումներ կան տեղական ինքնակառավարմանը համայնքի անդամների մասնակցության վերաբերյալ: Ըստ օրենքի՝ համայնքի ավագանու նիստերը հրապարակային են, իսկ 3000 և ավել բնակիչ ունեցող համայնքներում դրանք հեռարձակվում են առցանց եղանակով: Հանրային լուսամտերը պարտադիր են համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի քննարկումների դեպքում⁸³: Գործնականում մասնակցային գործելակերպերը տարբերվում են համայնքից համայնք և հաճախ կախված են համայնքի ղեկավարի պատրաստակամությունից և դիրքորոշումներից, ինչպես նաև տեղական ՔՀԿ-ների և ակտիվ խմբերի ջանքերով ձևավորված մասնակցային ավանդույթներից: Այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ համայնքային մակարդակում որոշումների ընդունման գործընթացում մասնակցությունը սահմանափակ բնույթ է կրում⁸⁴:

Պարտադիր հանրային քննարկումների վերաբերյալ դրույթը խախտելու համար վարչական պատժամիջոցներ սահմանված չեն: Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգում նշված է, որ հանրային քննարկումների իրականացման խախտումներ հայտնաբերելու դեպքում ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են դիմել ինչպես տվյալ պետական մարմին, այնպես էլ Արդարադատության նախարարություն՝ պարզաբանում ստանալու նպատակով⁸⁵: Հանրային մասնակցության դեմ ռազմավարական հայցադիմումների (SLAPP) վերաբերյալ իրավական դրույթներ չկան:

⁸² «Հայաստանը գրանցում է էական հետընթաց խոշտանգումների դեմ պայքարի հարցում» (ՔՀԿ-ների հայտարարություն), Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, 22.10.2021, <https://transparency.am/hy/news/view/3379>:

⁸³ ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին», 07.05.2002, խմբ. 16.12.2016, վերջին փոփ. 24.09.2021, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=156523>:

⁸⁴ «Հայաստանում հանրային մասնակցության հարթակների և հնարավորությունների քարտեզագրում. Հետազոտության զեկույց», Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, Երևան, 2021 թ., <https://transparency.am/hy/publications/view/409>

⁸⁵ Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգ, Հավելված ՀՀ կառավարության 2018 թ. հոկտեմբերի 10-ի թիվ 1146-Ն որոշման, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126002>:

Չափորոշիչ 2. Առկա են հստակ, դյուրին և թափանցիկ մեխանիզմներ ու ընթացակարգեր, որոնք նպաստում են ՔՀԿ-ների կանոնավոր, բաց և արդյունավետ մասնակցությանը պետական քաղաքականության մշակման, իրականացման և մոնիտորինգի գործում:

Օրենսդրությամբ մի շարք մեխանիզմներ կան սահմանված հանրային քաղաքականության մշակմանը հանրության բաց և կանոնավոր մասնակցության վերաբերյալ, սակայն քաղաքականության իրականացման և մշտադիտարկման գործընթացներում մասնակցությունը կանոնակարգող օրենքներ չկան: Որպես հանրային քաղաքականության մշակման, իրականացման և մշտադիտարկման գործընթացներում մասնակցության ինստիտուցիոնալ շրջանակ կարելի է դիտարկել խորհրդակցական մարմինները: Նախարարությունների կանոնադրություններում առանձին դրույթ կա նախարարության առջև դրված խնդիրների և գործառույթների իրականացման ընթացքում քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովման նպատակով նախարարին կից հասարակական խորհուրդ ստեղծելու մասին⁸⁶: Այս խորհուրդները կազմավորվում են հայտարարության միջոցով, իսկ անդամակցությունը բաց է բոլոր քաղաքացիների և կազմակերպությունների համար: Յուրաքանչյուր նախարարությունում հասարակական խորհրդի վերջնական կազմի մասին որոշումն ընդունում է նախարարը, որը նախագահում է խորհուրդը: Գործնական դաշտում հասարակական խորհուրդների գործունեության զգալի հետընթաց է արձանագրվել վերջին տարիներին, որն առավել նկատելի էր 2020 թվականին արտակարգ իրավիճակների պատճառով: Թեև նախարարություններից մի քանիսը խորհուրդների գործունեությունը վերսկսել են 2021 թվականին, սակայն հոկտեմբերի դրությամբ 12 նախարարություններից միայն հինգում են տեղի ունեցել հասարակական խորհուրդների նիստեր⁸⁷:

Ըստ կառավարության սահմանած կարգի, պետական մարմնի կողմից մշակված նորմատիվ իրավական ակտի նախագծի հանրային քննարկումը պետք է տեղի ունենա հանրային քննարկում իրականացնող մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում և Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում⁸⁸: Այս հարթակը, որը գործում է www.e-draft.am հասցեում, ստեղծվել է 2017 թվականին և կառավարվում է Արդարադատության նախարարության կողմից: Նորմատիվ իրավական ակտի նախագծի հետ միասին այստեղ հրապարակվում են իրավական ակտի համառոտ նկարագիրը, հիմնավորումը, ինչպես նաև ներկայացված առաջարկությունները և նախագծի հեղինակի արձագանքները: Հարթակի գործարկումից ի վեր քննարկման է ներկայացվել ավելի քան 2000 նախագիծ, իսկ գրանցված օգտատերերի թիվը 2021 թվականի հոկտեմբերի դրությամբ հասել է 65 հազարի⁸⁹: Հարթակը ՔՀԿ-ներին և քաղաքացիներին թույլ է տալիս պետական մարմինների կողմից մշակված բոլոր նախագծերի վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ, որոնք հաճախ արձագանք են ստանում և երբեմն հաշվի առնվում: Այնուամենայնիվ, ՔՀԿ-ները հարթակի հնարավորությունների և ազդեցության հետ կապված մի շարք խնդիրներ են նշում: Այսպես, օրինակ, նախագծերի վերանայված

⁸⁶ ՀՀ կառավարության թիվ 337-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», 31.03.2016, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=104665>:

⁸⁷ Աղբյուր՝ ՀՀ կառավարության կայքում թվարկված 12 նախարարությունների պաշտոնական կայքեր, <https://www.gov.am/am/structure/>:

⁸⁸ Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգ, Հավելված ՀՀ կառավարության 2018 թ. հոկտեմբերի 10-ի թիվ 1146-Ն որոշման:

⁸⁹ Վիճակագրություն, Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, <https://www.e-draft.am/statistics>:

տարբերակները հաճախ չեն հրապարակվում, առաջարկները միշտ չէ, որ արձագանք են ստանում, և որ ամենակարևորն է, ի տարբերություն տեխնիկական բնույթի առաջարկների՝ բովանդակային առաջարկները հաճախ չեն ներառվում: Բացի e-draft հարթակից, կառավարության սահմանած կարգում որպես հանրային քննարկման գործիք են նշվում հանրային լուսնները և հարցումները, որոնց անցկացումը հայեցողական բնույթ ունի: ՔՀԿ-ները դեմատդեմ քննարկումները երկխոսության արդյունավետ ձևաչափ են համարում, քանի որ դրանք խթանում են բաց քննարկումները և խնդիրները տեղում պարզաբանելու հնարավորություն տալիս: Այնուամենայնիվ, հրավերի հիմքով անցկացվող քննարկումների դեպքում հրավիրված ՔՀԿ-ների ընտրության սկզբունքների վերաբերյալ թափանցիկության պակաս կա, ինչը կարող է մեկնաբանվել որպես խտրական և ընտրողական մոտեցում: Առցանց և անցանց ուղիներով ՔՀԿ-ների առաջարկների ներառման հաջող օրինակներից է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից վերջերս քննարկված «ՀՀ Աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը⁹⁰: Ընդհանուր առմամբ, ՔՀԿ-ները և փորձագետները նշում են, որ մասնակցության շրջանակը և ազդեցությունը հաճախ կախված են կոնկրետ պաշտոնյայի վերաբերմունքից, քննարկվող թեմայից, ինչպես նաև ՔՀԿ-ների՝ ջատագովության և համախմբման կարողություններից⁹¹:

Իրավական ակտերի նախագծերի նախնական փուլերում խորհրդակցությունները կազմակերպվում են ըստ քաղաքականություն մշակող մարմինների հայեցողության, սովորաբար՝ հասարակական խորհուրդների կամ տվյալ ոլորտում փորձ ունեցող ՔՀԿ-ների հետ հանդիպումների միջոցով: Այնուամենայնիվ, ՔՀԿ-ները կարծում են, որ պետական կառույցների իրական հետաքրքրությունը ՔՀԿ-ների առաջարկների ու մասնակցության հանդեպ նվազում է՝ որոշ բացառություններով, որոնք պայմանավորված են առանձին պաշտոնյաների անձնական վերաբերմունքով: Պետական քաղաքականության և ծրագրերի իրականացման, մշտադիտարկման և գնահատման փուլերում ՔՀԿ-ներին ներգրավելու գործելակերպը շարունակում է ցածր մակարդակի վրա մնալ, քանի որ բացի խորհրդակցական մարմիններից ներգրավման ինստիտուցիոնալ այլ մեխանիզմներ չկան: Քաղաքականության որոշակի ոլորտների, նախագծերի կամ ծրագրերի շուրջ ստեղծված աշխատանքային խմբերը, հանձնաժողովները և բազմաշահառու խմբերը գործակցության հաջողված փորձ ունեն, սակայն սահմանափակ են մնում իրենց ընդգրկմամբ և ազդեցությամբ:

Չափորոշիչ 3. ՔՀԿ-ների համար հասանելի է արդյունավետ մասնակցության համար անհրաժեշտ տեղեկատվությունը:

ՀՀ օրենսդրությունը տեղեկություններ ստանալու իրավունքին առնչվող հստակ ընթացակարգեր է սահմանում, այդ թվում՝ պետական մարմինների կողմից որոշումների կայացման գործընթացի վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու պահանջ: Տեղեկություններ ստանալու իրավունքը երաշխավորված է Սահմանադրությամբ⁹²: Ըստ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի՝ գրավոր հարցման պատասխանը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, իսկ եթե հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ

⁹⁰ Հանրային քննարկում՝ «ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, 12.10.2021, <https://www.mlsa.am/?p=30766>:

⁹¹ Փորձագիտական հարցազրույցներ և ֆոկլուս-խմբային քննարկումներ, հոկտեմբեր 2021 թ.:

⁹² Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 05.07.1995, փոփ. 06.12.2015, հոդված 51:

աշխատանք, ապա այդ ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 30 օր⁹³: Տեղեկությունների տրամադրման սահմանափակումները կապված են ազգային անվտանգության, մասնագիտական գաղտնիության, անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության, նախնական քննության տվյալների, հեղինակային իրավունքի հետ⁹⁴: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների կողմից կատարվող գանձումը ներառում է միայն տեղեկությունների տրամադրման տեխնիկական ծախսերը, ընդ որում՝ գանձում չի կատարվում մինչև 10 էջ տպագրված կամ պատճենահանված տեղեկություն տրամադրելիս, տեղեկությունն էլեկտրոնային փոստով տրամադրելիս կամ գրավոր հարցումներին պատասխանելիս⁹⁵: Էլեկտրոնային հարցումների միասնական www.e-request.am հարթակը, որն ստեղծվել է կառավարության սահմանած կարգի⁹⁶ համաձայն, հնարավորություն է տալիս առցանց դիմում, հարցում, բողոք ուղարկել պետական մարմիններին և հետևել դրանց ընթացքին: Որևէ կազմակերպության վերաբերյալ Պետոեզիստրից ամբողջական տեղեկություններ ստանալու պետական տուրքի դրույքաչափը 3000 ՀՀ դրամ է⁹⁷: 2020 թվականին այս տուրքը չեղարկվեց զանգվածային լրատվության միջոցների համար, սակայն հսկող և մշտադիտարկող ՔՀԿ-ների համար այս տուրքը զգալի խոչընդոտ է հանդիսանում:

Գործնականում, ըստ ՔՀԿ-ների, հարցումների պատասխանները միշտ չէ, որ ժամանակին են տրվում, երբեմն լինում են թերի կամ խուսափողական: Կան նաև առհասարակ պատասխան չտրամադրելու դեպքեր, հիմնականում՝ տեղական իշխանությունների կողմից⁹⁸: Պետական մարմիններին ուղարկված հարցումների և բողոքների վերաբերյալ միասնական պաշտոնական վիճակագրություն չի վարվում, իսկ ուշացած կամ թերի պատասխանների հետ կապված բողոքների քանակի և շտկող գործողությունների համար ձեռնարկված քայլերի մասին հրապարակային որևէ տեղեկատվություն չկա:

Օրենքով նախատեսվում է պետության կողմից տեղեկությունների պարտադիր հրապարակումը: Պետական մարմինները, մարզպետարանները ու 3000 և ավել բնակիչ ունեցող համայնքները առնվազն տարին մեկ անգամ պետք է իրենց կայքում հրապարակեն օրենքով սահմանված տեղեկությունները⁹⁹: Ըստ մշտադիտարկման մի ուսումնասիրության արդյունքների, օրենքով պահանջվող տեղեկությունները լիարժեք ու ժամանակին չեն հրապարակվում և չեն համապատասխանում բաց տվյալների ու մատչելիության սկզբունքներին¹⁰⁰:

⁹³ ՀՀ օրենքը «Տեղեկատվության ազատության մասին», 23.09.2003, հոդված 9, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=1372>:

⁹⁴ ՀՀ օրենքը «Տեղեկատվության ազատության մասին», 23.09.2003, հոդված 8:

⁹⁵ ՀՀ օրենքը «Տեղեկատվության ազատության մասին», 23.09.2003, հոդված 10:

⁹⁶ Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման կարգ, Հավելված ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 1204-Ն որոշման, վերջին փոփ. 26.11.2020, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=147567>:

⁹⁷ ՀՀ օրենքը «Պետական տուրքի մասին», 27.12.1997, վերջին փոփ. 15.07.2021, հոդված 20, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=156928>:

⁹⁸ Փորձագիտական հարցազրույցներ և ֆոկուս-խմբային քննարկումներ, հոկտեմբեր 2021 թ.: Տե՛ս նաև՝ «Մի հարցման ողիսական», Հայաստանի ինֆորմացիայի ազատության կենտրոն, 20.10.2021, <http://www.foi.am/hy/news/item/2099/>:

⁹⁹ ՀՀ օրենքը «Տեղեկատվության ազատության մասին», 23.09.2003, հոդված 7:

¹⁰⁰ «Պետական կառավարման մարմինների պաշտոնական ինտերնետային կայքերի գնահատում», Շուշան Դոյոդյան, Երևան, 2020 թ., http://www.foi.am/u_files/file/TA%20patasxanaturer/Web-site-Audit-Report.pdf:

Չափորոշիչ 4. Մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին տարբերվում է քաղաքական և լոբբիստական գործունեությունից:

Իրավական դաշտը չի խոչընդոտում հանրային քաղաքականության գործընթացում ՔՀԿ-ների ներգրավմանը: Ըստ օրենքի, հասարակական կազմակերպությունները չեն կարող հետամուտ լինել այնպիսի նպատակների, որոնք վերապահված են հասարակական միավորումների այլ տեսակներին, օրինակ՝ քաղաքական կուսակցություններին¹⁰¹: Կուսակցությունների նպատակները սահմանված է որպես «հանրաքվեներին, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու և հասարակության ու պետության քաղաքական կյանքին մասնակցության այլ ձևերով ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը նպաստելը»¹⁰²: Հայաստանում լոբբիստական գործունեության վերաբերյալ օրենքներ չկան:

Գործնականում ՔՀԿ-ները կարող են ներգրավվել քաղաքականության մշակման գործընթացում և ջատագովության գործողություններում՝ առանց հատուկ կարգավիճակ ունենալու կամ գրանցվելու անհրաժեշտության: ՔՀԿ-ները չեն հալածվում կամ հետապնդվում քաղաքական կուսակցությունների շահերին սատարող կամ այլընտրանքային տեսակետների համար, սակայն անհատների քաղաքական հայացքների հիմքով հանրության մեջ տարածված ատելության խոսքի և խարանման ընդհանուր խնդիր կա (տե՛ս նաև Ոլորտ 6՝ «Խոսքի ազատություն», և Ոլորտ 8՝ «Պետության կողմից պաշտպանության պարտականություն»):

Ոլորտի կոնկրետ առաջարկությունները հետևյալն են.

- Պետությանը՝ օգտագործել մասնակցության առկա ինստիտուցիոնալ մեխանիզմները և ապահովել բովանդակալից մասնակցություն, այդ թվում՝ ներգրավել ՔՀԿ-ներին քաղաքականության մշակման վաղ փուլերում, պարտադիր քննարկումներ իրականացնել բոլոր, ներառյալ խորհրդարանի կողմից մշակված օրենսդրական նախագծերի վերաբերյալ, բավարար ժամանակ տրամադրել խորհրդակցությունների համար, ավելի հաճախ դեմադրել քննարկումներ կազմակերպել, այդ թվում՝ մարզերում, հնարավորինս հաշվի առնել և ներառել ՔՀԿ-ների առաջարկությունները, ինչպես նաև իրական շահագրգռվածություն և հետևողականություն ցուցաբերել քաղաքացիական հասարակության և հանրության կողմից առաջարկներ հայցելիս:
- Կառավարությանը և խորհրդարանին՝ իրավական պատասխանատվություն նախատեսել հանրային խորհրդակցությունների և խորհրդակցական մարմինների վերաբերյալ դրույթները չկատարելու համար:
- Պետական մարմինները պետք է ժամանակին և լիարժեք արձագանքեն ՔՀԿ-ների հարցումներին և ապահովեն պաշտոնական կայքերում տեղեկությունների ժամանակին հրապարակումը և շարունակական թարմացումը, իսկ կառավարությունը պետք է հարցումների և բողոքների միասնական վիճակագրություն հրապարակի, ինչպես նաև արդյունավետ և արագ գործող մեխանիզմներ սահմանի տեղեկատվության հասանելիության իրավունքի խախտումը վերականգնելու համար:
- Արդարադատության նախարարությանը՝ ապահովել Պետոեզիստրի կայքում առկա գրանցամատյանի, ինչպես նաև պետության կողմից տնօրինվող այլ

¹⁰¹ ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 3:

¹⁰² ՀՀ Սահմանադրական օրենքը «Կուսակցությունների մասին», 16.12.2016, հոդված 2:

տեղեկատվական բազաների (օրինակ՝ անշարժ գույքի պետական ռեգիստրի և աշխարհատարածական տեղեկատվական համակարգի) տվյալների անվճար հանրային հասանելիությունը՝ հանրության մասնակցությունը և վերահսկողությունը խթանելու նպատակով:

- Պետական մարմիններին՝ բարելավել խորհրդակցական մարմինների արդյունավետությունը՝ դրանց գործունեությունը ռազմավարական հիմքերի վրա դնելու, թափանցիկությունը բարելավելու և որոշումների կայացման գործընթացներում ավելի լայն լիազորություններ ընձեռելու միջոցով:
- Կառավարությանը՝ ընդլայնել ՔՀԿ մասնակցությունը քաղաքականության իրականացման և մշտադիտարկման փուլերում՝ սահմանելով համապատասխան ինստիտուցիոնալ մեխանիզմներ և ապահովելով մասնակցությունը նաև օրենքների, քաղաքականությունների և ռազմավարությունների ընդունումից հետո:

3.6 Խոսքի ազատություն

Ոլորտի ընդհանուր գնահատական՝ 4.7/7

Իրավական դաշտ՝ 5.1/7	Գործնական դաշտ՝ 4.3/7
-------------------------	--------------------------

Խոսքի ազատության ոլորտում վերջին տարվա ընթացքում մի շարք բացասական զարգացումներ են տեղ գտել՝ հիմնականում պայմանավորված ռազմական դրության հայտարարմամբ և դրան հաջորդած քաղաքական լարվածությամբ: Ատելության խոսքը և ապատեղեկատվությունը հասել են մտահոգիչ աստիճանի և բացասաբար են ազդել ՔՀԿ-ների և լրատվամիջոցների վրա: Զրպարտության և վիրավորանքի աճող միտումը հասցեագրելու նպատակով մի շարք օրենսդրական նախաձեռնություններ են ձեռնարկվել, սակայն լրատվամիջոցները գտնում են, որ դրանք սահմանափակող բնույթ ունեն: ՔՀԿ-ները մտահոգված են, որ այս միջոցառումներն ուղղված են ոչ քաղաքացիական ակտիվիստներին, այլ գլխավորապես պաշտոնյաներին պաշտպանելուն: «ՔՀԿ չափիչ» 2019 թվականի զեկույցի ատելության խոսքի կարգավորման վերաբերյալ առաջարկը մասամբ իրականացվել է՝ բռնություն գործադրելու հրապարակային կոչերը քրեականացնող նախագծի միջոցով: Այդուհանդերձ, այս փոփոխությունները շոշափելի արդյունք չեն ունեցել՝ ՔՀԿ-ներին և ակտիվիստներին ուղղված ատելության խոսքը կանխելու առումով:

Չափորոշիչ 1. Յուրաքանչյուր ոք կարծիք արտահայտելու և խոսքի ազատության իրավունք ունի:

Հայաստանի օրենսդրությունը երաշխավորում է յուրաքանչյուրի՝ խոսքի ազատության և իր կարծիքն արտահայտելու իրավունքը: Ըստ Սահմանադրության՝ յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք, որը ներառում է առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը: Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության,

հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է Սահմանադրությամբ¹⁰³:

Ըստ «Զանգվածային լրատվության մասին» օրենքի, լրատվական գործունեություն իրականացնողները և լրագրողները գործում են ազատորեն՝ իրավահավասարության, օրինականության, խոսքի ազատության և բազմակարծության սկզբունքների հիման վրա: Արգելվում է գրաքննությունը, լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը և խտրականությունը: Օրենքը սահմանափակում է գաղտնի համարվող կամ քրեորեն պատժելի արարքներ քարոզող, ինչպես նաև այնպիսի տեղեկատվության տարածումը, որը խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը¹⁰⁴: Լրատվության միջոցները թողարկվում և տարածվում են առանց նախնական կամ ընթացիկ պետական գրանցման, լիցենզավորման, պետական կամ որևէ այլ մարմնում հայտարարագրման կամ որևէ մարմնի ծանուցման¹⁰⁵: Լիցենզավորման պահանջը վերաբերում է բացառապես ռադիո- և հեռուստա- ընկերություններին: «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքը, որն ընդունվել է 2020 թվականին և փոխարինել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքին, կանոնակարգում է հեռարձակող լրատվամիջոցների գործունեությունը, այդ թվում՝ դրանց հեղինակագրման, լիցենզավորման կարգը, իրավունքներն ու պարտականությունները և այլն¹⁰⁶:

2020 թվականին զանգվածային լրատվամիջոցների (ԶԼՄ) հրապարակումների նկատմամբ սահմանափակումներ են դրվել՝ պայմանավորված COVID-19 համավարակի պատճառով հայտարարված արտակարգ դրությամբ, այնուհետև՝ ռազմական դրությամբ: Ռազմական դրության մասին կառավարության որոշման համաձայն՝ մարտական գործողությունների վերաբերյալ տեղեկությունների հրապարակային տարածումը և փոխանցումը կարող էր կատարվել բացառապես պետական մարմինների կողմից տրամադրված պաշտոնական տեղեկատվության հղումով՝ առանց խմբագրման: Այնուհետև խոսքի ազատության նոր սահմանափակումներ սահմանվեցին արգելվեց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց՝ ռազմական դրության իրավական ռեժիմի ապահովմանը և պետական անվտանգության ապահովմանն առնչվող գործողությունները քննադատող, հերքող, դրանց արդյունավետությունը կասկածի տակ դնող կամ որևէ այլ կերպ արժեզրկող հաղորդումների հրապարակումը¹⁰⁷: Այդ արգելքները սահմանափակ տևողությամբ էին նախատեսված և հիմնավորված էին պետական անվտանգությամբ, սակայն բավականաչափ կոնկրետ չէին, ուստի կարող էր տեղ գտնել անհամաչափ միջամտություն մարդու իրավունքներին և լրագրողների աշխատանքին: Նշված մտահոգություններից ելնելով՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը դիմեց Սահմանադրական դատարան՝ սահմանափակող դրույթների սահմանադրականության հարցով¹⁰⁸: 2020 թվականի դեկտեմբերի 2-ին կառավարությունը վերացրեց

¹⁰³ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 05.07.1995, փոփ. 06.12.2015, հոդված 42:

¹⁰⁴ ՀՀ օրենքը «Զանգվածային լրատվության մասին», 13.12.2003, վերջին փոփ. 06.03.2020, հոդված 7, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=140685>:

¹⁰⁵ Նույն տեղում, հոդված 4:

¹⁰⁶ ՀՀ օրենքը «Տեսալսողական մեդիայի մասին», 16.07.2020, վերջին փոփ. 29.12.2020, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=149258>:

¹⁰⁷ ՀՀ կառավարության թիվ 1586-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին», 27.09.2020, փոփ. 08.10.2020, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=146652>:

¹⁰⁸ Պաշտպանը դիմել է ՄԴ՝ ռազմական դրության հիմքով կարծիքի արտահայտման և մամուլի ազատության նկատմամբ սահմանափակումների ու պատասխանատվություն սահմանող դրույթների

հրապարակումների և հաղորդումների վերաբերյալ սահմանափակումները, թեև ռազմական դրությունը մնաց ուժի մեջ¹⁰⁹: Այս դրույթների գործունեության ժամանակահատվածում բազմաթիվ անձինք իրենց հրապարակումները հեռացնելու պահանջ են ստացել, իսկ 13 ՁԼՄ ենթարկվել է տարբեր տուգանքների¹¹⁰:

2021 թվականի օգոստոսին խորհրդարանի կողմից սահմանափակումներ դրվեցին ԱԺ շենքում լրագրողների տեղաշարժի նկատմամբ¹¹¹: Այնուհետև, պատգամավորների միջև ծեծկռտուքի ժամանակ լրագրողներին հեռացրեցին մամուլի համար նախատեսված սենյակից: Այս միջադեպերն ու սահմանափակումները քննադատվեցին լրատվամիջոցների կողմից՝ որպես իրենց աշխատանքի անօրինական սահմանափակում¹¹²:

Հետպատերազմյան լարվածության և հետագա քաղաքական զարգացումների համատեքստում ապատեղեկատվությունը, ատելության խոսքը, զրպարտությունն ու վիրավորանքը լայնորեն տարածվեցին ավանդական և առցանց լրատվամիջոցներում և մասնավորապես այնպիսի սոցիալական ցանցերի հարթակներում, ինչպիսիք են Ֆեյսբուքը և Յություբը: ՔՀԿ-ները նույնպես հայտնվեցին ատելության խոսքի և ապատեղեկատվության թիրախում (տե՛ս նաև Ոլորտ 8՝ «Պետության կողմից պաշտպանության պարտականություն»): Անպարկեշտ արտահայտություններով, ատելության խոսքով և վիրավորանքներով ուղեկցվող նախընտրական քարոզարշավի հռետորաբանությունն արտացոլվեց լրատվամիջոցների հրապարակումներում, ինչը կտրուկ ավելացրեց լրատվամիջոցների դեմ դատական հայցերը: Նախընտրական հանդիպումների ընթացքում արձանագրվել են նաև ֆիզիկական հարձակումներ ՁԼՄ-ների աշխատակիցների վրա, երբ լրատվամիջոցների ներկայությունը համարվել է որոշակի քաղաքական ուժի սպասարկում և բերել կոնֆլիկտների¹¹³:

Կառավարությունը և խորհրդարանը մի շարք օրենսդրական նախաձեռնություններ առաջ բերեցին՝ զրպարտության և վիրավորանքի ծավալների աճը հասցեագրելու նպատակով, սակայն այդ նախաձեռնությունները մեղիա համայնքի կողմից գնահատվեցին որպես անհամաչափ և խոսքի ազատությունը սահմանափակող: Բացի այդ, քաղաքական բևեռացումը և ատելության խոսքի ավելացումը խթանեցին սոցիալական ցանցերում ՔՀԿ-ների ինքնագրաբանությունը, քանի որ կառավարության որևէ նախաձեռնության հասցեին ուղղված թե՛ աջակցող, թե՛ քննադատող գրառումը կարող էր հարձակումների և պիտակավորման բերել: ՔՀԿ-ները նշում են սոցիալական ցանցերում հրապարակված

սահմանադրականության հարցով, Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպան, 03.11.2020, <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1358>:

¹⁰⁹ ՀՀ կառավարության թիվ 1917-Ն որոշումը «ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 1586-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին», 02.12.2020, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=147807>:

¹¹⁰ «Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ՁԼՄ-ների իրավունքների խախտումների մասին 2020 թ. տարեկան զեկույց», Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 26.01.2021, <https://khosq.am/reports/հայաստանում-խոսքի-ազատության-վիճակի-24/>:

¹¹¹ Armenian Journalists Face Major Restrictions in Parliament («Հայ լրագրողները խորհրդարանում զգալի սահմանափակումների են հանդիպում»), «Ազատություն» ռադիոկայան, 02.08.2021, <https://www.azatutyun.am/a/31390086.html>:

¹¹² Լրատվական կազմակերպությունների հայտարարությունը, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 11.08.2021, <https://khosq.am/2021/08/11/հայտարարություն-89/>:

¹¹³ «Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ՁԼՄ-ների իրավունքների խախտումների մասին 2021 թ. երկրորդ եռամսյակային զեկույց (ապրիլ-հունիս, 2021)», 23.07.2021, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, <https://khosq.am/reports/հայաստանում-խոսքի-ազատության-վիճակի-26/>:

կարծիքների համար գործատուների և ՏԻՄ մարմինների ներկայացուցիչների կողմից ոտնձգությունների և ճնշումների դեպքերի մասին:

2021 թվականին կարծիքի արտահայտման համար հետապնդման առավել ակնառու դեպքը ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ոլորտում աշխատող ՔՀԿ-ի ղեկավարի դեմ քրեական մեղադրանքի առաջադրումն էր: ՔՀԿ ներկայացուցչին մասնավորապես մեղադրել են «ազգային, ռասայական կամ կրոնական ատելություն հրահրելուն ուղղված գործողությունների մեջ»՝ հիմնվելով նրա հարցազրույցի վրա, որտեղ նա պատմում է Հայաստանում եզդի փոքրամասնության առջև ծառայած խնդիրների մասին: Ի աջակցություն իրավապաշտպանի՝ մի շարք հայտարարություններ և հանրագրեր են հրապարակվել, այդ թվում՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և «Հյումըն ռայթս վոչ» (Human Rights Watch) կազմակերպության կողմից, սակայն մեղադրանքը դեռ չի հանվել¹¹⁴:

Չափորոշիչ 2. Պետությունն աջակցում և պաշտպանում է խոսքի և կարծիքի արտահայտման ազատությունը:

Գործող օրենսդրությունը աջակցում է կարծիքի և արտահայտվելու ազատությանը և պաշտպանում այն՝ հիմնականում միջազգային իրավունքին համապատասխան, սակայն վերջին մեկ տարվա ընթացքում նախաձեռնված մի քանի նոր նախագծեր չեն համապատասխանում միջազգային չափորոշիչներին:

Ըստ «Զանգվածային լրատվության մասին» օրենքի՝ լրատվական գործունեություն իրականացնողները և լրագրողները պարտավոր չեն բացահայտել իրենց տեղեկատվության աղբյուրը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա սահմանվել է դատարանի որոշմամբ՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության բացահայտման նպատակով¹¹⁵: Ազդարարների անձնական տվյալների գաղտնիությունը պաշտպանվում է «Ազդարարման համակարգի մասին» օրենքով¹¹⁶: 2021 թվականի դեկտեմբերին խորհրդարանն օրենսդրական փոփոխություններ ընդունեց «Զանգվածային լրատվության մասին» օրենքում և համապատասխան օրենքներում¹¹⁷, ըստ որոնց զանգվածային լրատվության միջոցները չեն ազատվի պատասխանատվությունից չնույնականացվող աղբյուրի տարածած տեղեկատվության վերարտադրության դեպքում¹¹⁸: Ընդունված

¹¹⁴ Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս՝ «Հայաստան, Ակտիվիստի նենգամիտ հետապնդում», Հյումըն ռայթս վոչ, 17.06.2021, <https://www.hrw.org/hy/news/2021/06/17/378980>, ՀՔԱՎ-ն ստանձնել է իրավապաշտպան Սաշիկ Սուլթանյանի իրավունքների պաշտպանությունը, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, 09.07.2021, <https://hcav.am/sashik-sultanyan-9-07-21/>, Armenia: Authorities Must Drop Charges against Yezidi Human Rights Defender and Protect Freedom of Speech («Հայաստան. իշխանությունները պետք է հանեն եզդի իրավապաշտպանի դեմ մեղադրանքները և պաշտպանեն խոսքի ազատությունը»), Freedom House 03.08.2021, <https://freedomhouse.org/article/armenia-authorities-must-drop-charges-against-yezidi-human-rights-defender-and-protect>, Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանը կիսում է իրավապաշտպանների և Ֆրիդոմ Հաուս կազմակերպության մտահոգությունները պարոն Սաշիկ Սուլթանյանի գործով, ՀՀ մարդու իրավունքների պաշտպան, 06.08.2021, <https://ombuds.am/am/site/ViewNews/1847>:

¹¹⁵ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք, 13.12.2003, հոդված 5:

¹¹⁶ ՀՀ օրենքը «Ազդարարման համակարգի մասին», 09.06.2017, վերջին փոփ. 12.07.2018, հոդված 11, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=123969>:

¹¹⁷ Նախագծի պատմություն, ՀՀ Ազգային ժողով, http://parliament.am/draft_history.php?id=12812

¹¹⁸ Ըստ նախագծի, չնույնականացվող աղբյուր է համարվում համացանցում գրանցված որևէ դոմեյն, հոսթինգ ունեցող կայք կամ համացանցային կայքի կամ հավելվածի օգտահաշիվ կամ այլք կամ էջ, որի տնօրինողի նույնականացման տվյալները բացակայում են կամ ակնհայտ կեղծ են կամ թերի են, եթե այդ թերությունը թույլ չի տալիս նույնականացնել աղբյուրը տնօրինողին:

փոփոխությունները սկզբնական նախագծի համեմատ ավելի դրական են գնահատվում, քանի որ նախորդ նախագծով ընդհանրապես արգելվում էր հղում կատարել անանուն աղբյուրներին¹¹⁹: Փորձագետները գտնում են, որ այս քայլն առաջին հերթին ուղղված է տեղեկրամյան ալիքներում տարածվող տեղեկատվությանը¹²⁰:

Վիրավորանքը և զրպարտությունը Հայաստանում ապաքրեականացվել են 2010 թվականին: Զրպարտությունը և վիրավորանքը և դրանց համար փոխհատուցման առավելագույն չափերը կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, որտեղ մինչև 1 միլիոն ՀՀ դրամի փոխհատուցում էր նախատեսվում վիրավորանքի և 2 միլիոն ՀՀ դրամ՝ զրպարտության համար: Ըստ Քաղաքացիական օրենսգրքի՝ դատարանը պետք է հաշվի առնի վիրավորողի կամ զրպարտողի գույքային դրությունը¹²¹: 2021 թվականի մարտին խորհրդարանը փոփոխություններ ընդունեց Քաղաքացիական օրենսգրքում՝ եռապատկելով փոխհատուցման առավելագույն չափերը: Նախագահը չստորագրեց այդ փոփոխությունները և ուղարկեց դրանք Սահմանադրական դատարան՝ անսալով սահմանված տուգանքների անհամաչափության վերաբերյալ լրատվամիջոցների և փորձագետների, ինչպես նաև միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների քննադատություններին: Սակայն 2021 թվականի հոկտեմբերին Սահմանադրական դատարանը վճռեց, որ փոփոխությունները համապատասխանում են Սահմանադրությանը¹²² և օրենսդրական փոփոխություններն ուժի մեջ մտան¹²³:

2021 թվականի հուլիսին Քրեական օրենսգրքում և Քրեական դատավարության օրենսգրքում հայեցողական քրեականացնող փոփոխություններ ընդունվեցին¹²⁴: Նախատեսված պատժամիջոցները ներառում են 100 000-ից մինչև 500 000 ՀՀ դրամ տուգանք, իսկ ծանրացուցիչ հանգամանքների առկայության դեպքում՝ ավելի մեծ տուգանք և կամ մինչև երկու ամիս կալանք: Կառավարության մեկ այլ նախաձեռնություն, որի նպատակն էր հանրային ծառայողներին պաշտպանել զրպարտությունից և վիրավորանքից (որպես պատիժ սահմանելով մինչև երկու տարի ազատազրկումը) հանրային քննարկմանը ներկայացվեց 2021 թվականի փետրվարին և քննադատվեց լրատվամիջոցների կողմից¹²⁵:

Հայաստանի օրենսդրության մեջ առելության խոսքի սահմանում չկա: Քրեական օրենսգրքում 2020 թվականին կատարված փոփոխությունները քրեականացրեցին

¹¹⁹ Մանրամասների համար տես՝ Armenia: Legislative proposals put freedom of speech under pressure, CSO Meter («Հայաստան. օրենսդրական առաջարկները ճնշման տակ են դնում խոսքի ազատությունը», ՔՀԿ չափիչ), 15.02.2021, <https://csometer.info/updates/armenia-legislative-proposals-put-freedom-speech-under-pressure>:

¹²⁰ «Օրենքը թույլ է տալու օգտվել ցանկացած տեղեկատվական աղբյուրից, ուղղակի լրատվամիջոցն այս դեպքում վերցնում է իր վրա պատասխանատվությունը. Աշոտ Մելիքյան», ArmDaily, 10.12.2021, <https://www.armdaily.am/?p=161820&l=am>:

¹²¹ ՀՀ քաղաքացիական օրենսգրք, 05.05.1998, հոդված 1087.1

¹²² Լրացուցիչ տեղեկությունների համար տես՝ Armenia: Freedom of speech continues to be under pressure, CSO Meter («Հայաստան. խոսքի ազատությանն առնչվող մտահոգությունները Սահմանադրական Դատարանի որոշումից հետո», ՔՀԿ չափիչ), <https://csometer.info/updates/armenia-concerns-about-freedom-expression-after-constitutional-court-decision>:

¹²³ ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», 24.03.2021, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=156779>:

¹²⁴ ՀՀ քրեական օրենսգրք, 18.04.2003, վերջին փոփ. 30.07.2021, հոդված 137.1, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=155365>:

¹²⁵ Լրացուցիչ տեղեկությունների համար տես՝ Armenia: Freedom of speech continues to be under pressure, CSO Meter («Հայաստան. խոսքի ազատությունը շարունակում է մնալ ճնշման ներքո», ՔՀԿ չափիչ), <https://csometer.info/updates/armenia-freedom-speech-continues-be-under-pressure>:

բռնություն գործադրելու հրապարակային կոչերը և բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը՝ որպես պատիժ սահմանելով տուգանքը կամ մինչև երեք տարի ժամկետով ազատազրկումը, եթե արարքները կատարվել են անձանց խմբի կողմից՝ նախնական համաձայնությամբ, կամ պաշտոնական դիրքն օգտագործելով¹²⁶:

ՔՀԿ-ները և փորձագետները շեշտում են ասելության խոսքի, ապատեղեկատվության և կեղծ լուրերի խնդիրների լուծման խիստ անհրաժեշտությունը¹²⁷: Այնուամենայնիվ, նշվում է, որ ձեռնարկված միջոցները չպետք է հայեցողական լինեն, քանի որ զրպարտության և վիրավորանքի համար հարուցված վարույթները կարծես թե առաջին հերթին պաշտոնյաներին պաշտպանելու միտում ունեն: Բացի այդ, փորձագետներն ընդգծել են, որ սահմանափակումների և պատժի փոխարեն պետք է ավելի շատ կենտրոնանալ կրթական միջոցառումների վրա՝ լրացնելով առկա տեղեկատվական բացերը և օգտագործելով միջազգայնորեն փորձարկված և ընդունված գործիքներ ու գործելակերպ:

Ոլորտի կոնկրետ առաջարկությունները հետևյալն են.

- Խորհրդարանին՝ բացառել լրատվամիջոցների վերաբերյալ իրավական կարգավորումների իրավիճակային, միջազգային ստանդարտներին հակասող օրենսդրական փոփոխությունները և ավելի հայեցակարգային մոտեցում կիրառել ոլորտի օրենսդրության բարեփոխումների նկատմամբ:
- Պետությանը՝ մշակել ասելության խոսքի և ապատեղեկատվության դեմ պայքարի՝ միջազգային չափորոշիչներին համապատասխանող մեխանիզմներ, որոնք մասնավորապես կկենտրոնանան մեդիագրագիտության և էթիկական ստանդարտների տարածման ուղղությամբ և կընդլայնեն պետության կողմից տրամադրվող ստուգված և վստահելի տեղեկությունների շրջանակը:
- Իրավապահ մարմինները պետք է դադարեցնեն լրատվամիջոցների և ՔՀԿ ներկայացուցիչների կողմից քննադատական կարծիք արտահայտելու համար մեղադրանքների առաջադրումը և անհամաչափ պատժամիջոցները:

3.7 Մասնավոր կյանքի իրավունք

Ոլորտի ընդհանուր գնահատական՝ 4.8/7

Իրավական դաշտ՝ 5.8/7	Գործնական դաշտ՝ 3.8/7
-------------------------	--------------------------

Մասնավոր կյանքի իրավունքը պաշտպանվում է ՀՀ օրենսդրությամբ: Գործնականում անձնական տվյալների արտահոսքերի դեպքեր են եղել, ընդ որում այդ միջադեպերի հետաքննության, ինչպես նաև հսկողության գործողությունների¹²⁸ իրավաչափության վերահսկողության վերաբերյալ որևէ թափանցիկություն ու հաշվետվողականություն չկա: 2021 թվականին նախորդ տարվա համեմատ իրավիճակը չի փոխվել: «ՔՀԿ չափիչի» 2019 թվականի զեկույցում արտացոլված առաջարկը հիմնադրամի տարեկան հաշվետվության մեջ աշխատակիցների անունների հրապարակման պահանջը չեղարկելու վերաբերյալ

¹²⁶ ՀՀ քրեական օրենսգիրք, 18.04.2003, հոդված 226.2:

¹²⁷ Փորձագիտական հարցազրույցներ և ֆոկուս-խմբային քննարկումներ, հոկտեմբեր 2021 թ.:

¹²⁸ Տվյալ համատեքստում՝ տեխնիկական միջոցներով բնակարանի դիտում, հաղորդագրությունների և հեռախոսային խոսակցությունների վերահսկում:

իրականացվել է «Հիմնադրամների մասին» օրենքում կատարված փոփոխությունների միջոցով:

Չափորոշիչ 1. Յուրաքանչյուր որ ունի մասնավոր կյանքի և անձնական տվյալների պաշտպանության իրավունք:

Օրենսդրությունը երաշխավորում է մասնավոր կյանքի իրավունքը և պատշաճ պաշտպանությունը մասնավոր կյանքի նկատմամբ միջամտությունից կամ հարձակումներից: ՀՀ Սահմանադրությունը երաշխավորում է յուրաքանչյուրի մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության, ինչպես նաև անձնական տվյալների պաշտպանության իրավունքը: Մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով¹²⁹: «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքը կարգավորում է անձնական տվյալները մշակելու, դրանց նկատմամբ պետական հսկողություն իրականացնելու կարգն ու պայմանները: Ըստ օրենքի՝ տվյալների մշակումը պետք է հետապնդի օրինական նպատակ, դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր¹³⁰: 2015 թվականին Արդարադատության նախարարությանը կից ստեղծվեց Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն՝ անձնական տվյալների պաշտպանության իրավական պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու, անձնական տվյալներ մշակող կազմակերպությունների ռեեստր վարելու և համապատասխան իրավունքների պաշտպանությունն ապահովելու նպատակով: Գործակալությունը տրամադրում է խորհրդատվություն, քաղաքացիների դիմումների հիման վրա հարուցում է վարչական վարույթ, կարծիքներ է տրամադրում օրենքների և իրավական նախագծերի՝ գաղտնիության սկզբունքների հետ համատեղելիության վերաբերյալ, ինչպես նաև կազմակերպում է իրազեկման միջոցառումներ և քաղաքացիների համար ուղեցույցներ է հրապարակում անձնական տվյալները պաշտպանելու վերաբերյալ¹³¹:

Չնայած «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքը միջազգային իրավունքին համահունչ նպաստավոր դրույթներ է պարունակում, այդ օրենքի կիրարկման և վարչական պատասխանատվության գործիքակազմը թույլ է, ուստի գործնականում այս դրույթների կիրառումը դժվարությամբ է ապահովվում: Պետական հիմնարկների և գերատեսչությունների աշխատակիցների գիտելիքները և կարողությունները անձնական տվյալների պահպանման ոլորտում թերի են: Մյուս կողմից, այս ոլորտի խնդիրների և միջազգային չափորոշիչների վերաբերյալ զգալի բաց կա նաև ՔՀԿ հատվածի ներկայացուցիչների շրջանում, ուստի այս ոլորտում ՔՀԿ հատվածի կողմից որևէ նշանակալի ջատագովություն կամ իրենց սեփական իրավունքների պաշտպանության ուղղությամբ նախաձեռնություններ գրեթե չկան¹³²:

¹²⁹ ՀՀ Սահմանադրություն, 05.07.1995, փոփ. 06.12.2015, հոդված 31:

¹³⁰ ՀՀ օրենքը «Անձնական տվյալների պաշտպանության մասին», 18.05.2015, վերջին փոփ. 09.07.2019, հոդված 5, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=132745>:

¹³¹ Տե՛ս «Անձնական տվյալների պաշտպանության գործակալության 2020 թ. գործունեության հաշվետվությունը», ՀՀ Արդարադատության նախարարություն <https://www.moj.am/page/610>:

¹³² «ՔՀԿ չափիչ» ծրագրի խորհրդատվական խմբի քննարկում, դեկտեմբեր 2021 թ.

Քրեական օրենսգրքով պատասխանատվություն է սահմանվում մարդու անձնական կամ ընտանեկան գաղտնիք համարվող տեղեկություններն առանց նրա համաձայնության օգտագործելու համար¹³³: Վարչական դատավարության օրենսգրքում «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի դրույթները խախտելու համար սահմանվել են մի շարք վարչական տույժեր, այդ թվում 50 000-ից մինչև 500 000 ՀՀ դրամ տուգանք, եթե խախտումը ենթակա չէ քրեական պատասխանատվության: Գործնականում, ըստ փորձագետների, այս օրենքի դրույթները խախտելու համար որևէ տույժ չի կիրառվել:

COVID-19 համավարակի հետ կապված՝ 2020 թվականի մարտից մինչև սեպտեմբեր հայտարարված արտակարգ դրության ընթացքում պոտենցիալ վարակակիրների շփման շրջանակները բացահայտելու նպատակով «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում կատարված փոփոխությունների հիման վրա տվյալներ են հավաքագրվել էլեկտրոնային կապի ծառայություններից օգտվողների գտնվելու վայրի և զանգերի վերաբերյալ: Արտակարգ դրության ավարտից հետո տվյալների սկավառակները ոչնչացվել են՝ պետական կառույցների և հեռահաղորդակցության ընկերությունների ներկայացուցիչների ներկայությամբ¹³⁴, սակայն արտակարգ իրավիճակի ընթացքում հավաքագրված տվյալների օգտագործման, մոնիտորինգի մեխանիզմների և արտահոսքի դեմ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ որևէ հաշվետվություն չի հրապարակվել:

Հաղորդումներ են եղել COVID-ով վարակված անձանց տվյալների, այլ քաղաքացիների անձնագրային և այլ անձնական տվյալների արտահոսքերի մասին, որոնք հիմնականում կազմակերպվել են աղբբեջանցի հաքերների կողմից¹³⁵: Այս միջադեպերի քննության մասին հանրությանը հասանելի որևէ տեղեկություն չկա, իսկ արտահոսքերի վերաբերյալ օգտվողներին պատշաճ ծանուցում չի ներկայացվել:

[Չափորոշիչ 2. Պետությունը պաշտպանում է ՔՀԿ-ների և առնչվող անձանց մասնավոր կյանքի իրավունքը:](#)

Հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների հաշվետվություններում չի պահանջվում հրապարակել աշխատակիցների անունները՝ բացառությամբ ղեկավարի: Հիմնադրամի հաշվետվության ձևաչափում պահանջվում է ներառել հիմնադիրների, Հոգաբարձուների խորհրդի անդամների անուններն ու ազգանունները, եթե հաշվետու տարվա ընթացքում նրանք օգտվել են հիմնադրամի միջոցներից և ծառայություններից¹³⁶:

Գրասենյակային տարածքներում խուզարկություն կամ վերահսկում կարող է իրականացվել միայն դատարանի որոշմամբ, բացառությամբ այն անհետաձգելի դեպքերի, երբ հապաղումը կարող է հանգեցնել ահաբեկչության կատարման կամ պետական անվտանգությանը սպառնացող գործողությունների: Նման դեպքում Ազգային անվտանգության ծառայությունը (ԱԱԾ) կարող է հսկողություն իրականացնել մինչև 48 ժամվա ընթացքում՝ նախքան դատարանի որոշման տրամադրումը¹³⁷:

¹³³ ՀՀ Քրեական օրենսգրք, 18.04.2003, հոդված 144:

¹³⁴ Արձանագրություն «Տվյալների կենտրոնում և հատուկ համակարգչային ծրագրում մշակված բոլոր տվյալների ոչնչացման գործընթացի վերաբերյալ», «ԷԿԵՆԳ» ՓԲԸ, ՀՀ կառավարություն, 25.09.2020, https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/Ardzanagrutyun.pdf:

¹³⁵ Արթուր Պապյան, «Կոտրված է». Կիբեռմարտադաշտը նույնքան կարևոր է. Հայաստանի կիբեռանվտանգությունը, EVN Report, 27.01.2021, <https://www.evnreport.com/հայերեն/կոտրված-է-կիբեռմարտադաշտը-նույնքան-կարևոր-է>

¹³⁶ ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», 26.12.2002, հոդված 39:

¹³⁷ ՀՀ օրենքը «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին», 22.10.2007, վերջին փոփ. 03.03.2021, հոդվածներ 32 և 34, <https://www.arlis.am/documentView.aspx?docid=152666>:

Գործնականում փորձագետները և ՔՀԿ-ները կասկածներ ունեն ԱԱԾ-ի և իրավապահ մարմինների կողմից հսկողության լիազորությունների օգտագործման օրինականության վերաբերյալ, քանի որ հսկողության գործունեության օրինավորության վերահսկման և հաշվետվողականության մեխանիզմները բացակայում են, իսկ տվյալների արտահոսքի դեպքերի թափանցիկ քննություն չի իրականացվել: Որոշ ՔՀԿ-ներ նշել են, որ հիմնավոր կասկածներ ունեն առանց դատարանի թույլտվության պետական մարմինների կողմից հսկողության ենթարկվելու վերաբերյալ: Իրավապահ մարմինների ներկայացուցիչների կողմից առանց դատարանի համապատասխան թույլտվության ՔՀԿ գրասենյակներ հետախուզելու կամ ՔՀԿ փաստաթղթերին ծանոթանալու դեպքերի վերաբերյալ հաղորդումներ չեն եղել:

Ոլորտի կոնկրետ առաջարկությունները հետևյալն են.

- Կառավարությանը՝ անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել կիրառական տեխնոլոգիաների օգտագործման և տվյալների անվտանգ պահպանման ուղղությամբ՝ մասնավոր կյանքի իրավունքը պաշտպանելու և տվյալների արտահոսքի որևէ հնարավորություն բացառելու նպատակով:
- Իրավապահ մարմինները պետք է տվյալների արտահոսքի դեպքերի արագ և արդյունավետ քննություն իրականացնեն և համապատասխան պատժամիջոցներ կիրառեն՝ հանրությանը թափանցիկ կերպով տեղեկացնելով հետաքննության արդյունքների մասին:
- Անձնական տվյալների պաշտպանության գործակալությանը՝ անձնական տվյալների պաշտպանության ոլորտում կարողությունների զարգացման միջոցառումներ իրականացնել պետական ծառայողների, ՔՀԿ-ների և այլ շահագրգռված անձանց համար, ՔՀԿ-ների և ոլորտային մասնագետների համագործակցությամբ մշակել անհրաժեշտ ընթացակարգերը և իրականացնել հանրային իրազեկման միջոցառումներ:

3.8 Պետության կողմից պաշտպանության պարտականություն

Ոլորտի ընդհանուր գնահատական՝ 4.6/7

Իրավական դաշտ՝ 5.3/7	Գործնական դաշտ՝ 4/7
-------------------------	------------------------

ՔՀԿ-ներն իրենց իրավունքները պաշտպանելու համար ունեն անհրաժեշտ իրավական մեխանիզմները: Օրենսդրական փոփոխությունները թույլ են տվել ՔՀԿ-ներին բացի բնապահպանական խնդիրներից դատարանում հանրային շահերը ներկայացնել նաև հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում: Սակայն մի շարք բարդ նախապայմանների պատճառով գործնականում այս իրավունքի իրացումը զգալիորեն սահմանափակված է:

Նախորդ գեկույցի համեմատ իրավիճակը չի փոխվել: «ՔՀԿ չափիչ» 2019 թվականի գեկույցի առաջարկները առավել քան արդիական են՝ հաշվի առնելով ՔՀԿ-ներին վարկաբեկող արշավները, որոնք հիմնականում տեղ են գտել նախկին իշխանության ներկայացուցիչների, նրանց փոխկապակցված խմբերի և լրատվամիջոցների ջանքերով:

Ներկա իշխանությունները քայլեր չեն ձեռնարկել ՔՀԿ-ներին պաշտպանելու համար, այլ ավելի շուտ հակված են հերքելու որպես «սորոսական» պիտակավորված ՔՀԿ-ների հետ որևէ կապ, որպեսզի նրանց հանրային կերպարը չտուժի:

Չափորոշիչ 1. Պետությունը պաշտպանում է ՔՀԿ-ներին և նրանց հետ կապված մարդկանց միջամտությունից և հարձակումներից:

Ըստ օրենքի՝ պետությունն ապահովում է հասարակական կազմակերպությունների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը¹³⁸: ՀԿ-ն իր կանոնադրության նպատակներին համապատասխան իրավունք ունի ներկայացնելու և պաշտպանելու իր անդամների, շահառուների և կամավորների իրավունքներն ու օրինական շահերը դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում¹³⁹: Հիմնադրամը ևս իրավունք ունի դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող¹⁴⁰: Վարչական դատավարության օրենսգիրքը սահմանում է, որ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ իր իրավունքները և ազատությունները խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից, ինչպես նաև այն դեպքում, երբ խոչընդոտներ են հարուցվել կամ անհրաժեշտ պայմաններ չեն ապահովվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար¹⁴¹:

ՀԿ-ները կարող են դատարանում ներկայացնել շրջակա միջավայրի պահպանության հարցերով հանրային շահերը՝ պայմանով, որ դիմող կազմակերպությունը մի շարք պահանջների բավարարի: Մասնավորապես, հայցը պետք է բխի կազմակերպության կանոնադրությամբ սահմանված նպատակներից, կազմակերպությունը պետք է մասնակցած լինի տվյալ հարցի հետ կապված հանրային քննարկումներին, կամ ապացուցի, որ նրան նման հնարավորություն չի տրվել, և վերջապես, հայցը ներկայացնելու պահին նախորդող առնվազն 2 տարվա ընթացքում ակտիվ գործունեություն ծավալած լինի շրջակա միջավայրի պահպանության ոլորտում: 2021 թվականի մայիսին «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում կատարված փոփոխությունների համաձայն՝ ի լրումն շրջակա միջավայրի պահպանության, ՀԿ-ները կարող են հանրային շահերը դատարանում ներկայացնել նաև հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում¹⁴²: Սակայն դա անելու համար անհրաժեշտ է, որ կազմակերպության կանոնադրությամբ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը սահմանված լինի որպես նպատակ, կազմակերպության անդամների պարզ մեծամասնությունը հաշմանդամություն ունեցող անձինք լինեն և հայց ներկայացնելու պահին նախորդող առնվազն երկու տարվա ընթացքում կազմակերպությունը գործունեություն ծավալի տվյալ ոլորտում¹⁴³: Գործնականում, երբ ՔՀԿ-ները բնապահպանական գործերով դիմել են դատարան, նրանցից բազմաթիվ փաստաթղթեր են պահանջել՝ իրենց իրավունակությունը հիմնավորելու համար, և ի վերջո մերժել գործը վարույթ ընդունել՝ օրենքի դրույթներին համապատասխանելու մասին ապացույցների անբավարարության հիմքով:

¹³⁸ ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 9:
¹³⁹ ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 16:
¹⁴⁰ ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», 26.12.2002, հոդված 3:
¹⁴¹ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք, 05.12.2013, հոդված 3:
¹⁴² ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 16:
¹⁴³ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք, 05.12.2013, հոդված 216.6:

Վերջին տարիներին ՔՀԿ-ները հաճախ են ենթարկվել ոտնձգությունների, ատելության խոսքի և հարձակումների տարբեր կազմակերպությունների և խմբերի կողմից: Ամենից հաճախ հարձակումների են ենթարկվում ԼԳԲՏԻ իրավունքների պաշտպանության, ընտանեկան բռնության, կանանց իրավունքների ոլորտում աշխատող, հսկող (watch-dog), ինչպես նաև ԲՀՀ-ի կողմից ֆինանսավորվող կազմակերպությունները: Նախորդ տարվա ընթացքում իրավապաշտպան ՔՀԿ-ների վարկաբեկմանն ուղղված ապատեղեկատվությունն իր գազաթնակետին հասավ՝ լայնորեն տարածված «սորոսական» պիտակավորման և որպես պետության ու ազգի համար կործանարար ներկայացնելու միջոցով: Զինադադարի մասին հայտարարությանը հաջորդած ցույցերի ժամանակ «Ազատություն ռադիոկայանի» գրասենյակի հետ միասին հարձակման ենթարկվեց ԲՀՀ գրասենյակը¹⁴⁴: Ոստիկանությունը հետաքննում է այս հարձակումները, սակայն ԲՀՀ-ի ներկայացուցիչները նշում են, որ հետաքննության գործընթացը ձգձգվում է և արդյունավետ չէ: Հետպատերազմյան հուսախաբության և քաղաքական լարվածության աճի համատեքստում նկատվեց ՔՀԿ-ներին ազգային անվտանգության թուլացման մեջ մեղադրելու միտում՝ իրավապաշտպան ՔՀԿ-ների առանձին ներկայացուցիչների հիշատակմամբ և նրանց որպես «թշնամու գործակալներ» պատկերելով: 2020 թվականի դեկտեմբերին «Վետո» շարժումը մի ֆիլմ թողարկեց՝ «Հայաստանում հայտնաբերվել է Սորոսի գործակալական ցանց. պետության զավթումը» վերնագրով, որը թիրախավորում էր մի շարք ՔՀԿ-ների՝ որպես «պետության համար քայքայիչ» կազմակերպությունների: Առհասարակ, այն խոսույթը, թե ժողովրդավարությունը և ազատական արժեքները հակադիր են ազգային անվտանգությանը և պատերազմում պարտություն կրելու պատճառներից են, լայն տարածում է գտել՝ հիմնականում նախկին իշխանությունների և նրանց հետ փոխկապակցված լրատվամիջոցների ներկայացուցիչների միջոցով¹⁴⁵:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը հայտարարություն է տարածել՝ կոչ անելով դադարեցնել ատելության խոսքն ու վիրավորանքները ՔՀԿ-ների նկատմամբ¹⁴⁶: 2021 թվականի մարտին հրապարակված մամուլի հաղորդագրության մեջ Ֆրիդըմ Հաուսը Հայաստանի կառավարության ուշադրությունը հրավիրեց ՔՀԿ-ների դեմ ոտնձգությունների և գրպարտչական արշավի նկատմամբ¹⁴⁷, սակայն բարձրաստիճան պաշտոնյաներն այս հարցում հիմնականում լուռ էին: Ավելին, լրատվամիջոցների հարցերին պաշտոնյաների խուսափողական պատասխանները, քաղհասարակության հատվածից «հեռու մնալու» միտումը, կամ, օրինակ, ԲՀՀ-ի կողմից ֆինանսավորվող ՔՀԿ-ների հետ կապի ժխտումը ընկալվում էին որպես հետագա հարձակումների խրախուսում և վնասում ՔՀԿ հատվածի հեղինակությանը¹⁴⁸:

¹⁴⁴ Armenia: Authorities Must Protect Democratic Institutions and Civil Society, («Հայաստան. իշխանությունները պետք է պաշտպանեն ժողովրդավարական կառույցները և քաղաքացիական հասարակությունը»), Freedom House, 12.03.2021, <https://freedomhouse.org/article/armenia-authorities-must-protect-democratic-institutions-and-civil-society>:

¹⁴⁵ «Ապատեղեկատվությունն ու կեղծ տեղեկատվությունը Հայաստանում. դիմակայելով կեղծ պատմություններին», հունիս 2021 թ., Freedom House:

¹⁴⁶ Մարդու իրավունքների պաշտպանի հայտարարությունն իրավապաշտպան ՀԿ-ներին թիրախավորելու անթույլատրելիության վերաբերյալ, Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպան, 30.12.2020, https://ombuds.am/en_us/site/ViewNews/1467:

¹⁴⁷ Armenia: Authorities Must Protect Democratic Institutions and Civil Society, («Հայաստան. իշխանությունները պետք է պաշտպանեն ժողովրդավարական կառույցները և քաղաքացիական հասարակությունը»), Freedom House, 12.03.2021, <https://freedomhouse.org/article/armenia-authorities-must-protect-democratic-institutions-and-civil-society>:

¹⁴⁸ Ֆոկուս-խմբային քննարկումներ, հոկտեմբեր 2021 թ.:

Թեև բռնության կոչերը քրեականացվել են, սակայն ՔՀԿ-ները հայտնում են, որ ոստիկանությունը հրաժարվում է գործ հարուցել ՔՀԿ-ների անդամներին ուղղված հրապարակային սպառնալիքների համար՝ որպես պատճառ բերելով հիմքերի բավարար չլինելը: Կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպության ղեկավարի հայցերի հիման վրա հարուցված զրպարտության երկու գործերը արդեն մի քանի տարի է քննվում են դատարանում¹⁴⁹:

Չափորոշիչ 2. Ծայրահեղականության, ահաբեկչության, փողերի լվացման և կոռուպցիայի դեմ պայքարի միջոցները նպատակաուղղված են, համաչափ, ռիսկի վրա հիմնված մոտեցմանը համահունչ կերպով: «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքը¹⁵⁰ հաշվետվություն տրամադրող անձանցից (օրինակ, բանկեր, վարկային կազմակերպություններ, նոտարներ, Պետոեզիստ) պահանջում է իրականացնել հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն՝ ներդնելով ռիսկերի կառավարման ընթացակարգեր, որոնց միջոցով կբացահայտեն և կգնահատեն հնարավոր կամ առկա ռիսկերը, կապահովեն համարժեք միջոցների ձեռնարկումը և համապատասխան ռիսկերը հայտնաբերելու դեպքում կհաղորդեն պետական լիազոր մարմնին: Որոշ ՔՀԿ-ներ նշում են, որ բանկային հաշիվ բացելու կամ դոնորներից գումար ստանալու համար բանկերը չափազանց շատ փաստաթղթեր են պահանջել, օրինակ՝ հիմնադիրների անձնագրերի պատճենները, դրամաշնորհային ծրագրի պայմանագրի պատճենը և այլն՝ կախված բանկի ներքին ընթացակարգերից և ռիսկերի գնահատման արդյունքներից:

Օրենսդրությունը հասցեական և համաչափ կարգավորումներ է նախատեսում ահաբեկչության, փողերի լվացման և կոռուպցիայի դեմ պայքարի համար՝ ռիսկերի վրա հիմնված մոտեցմանը համահունչ կերպով: «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքը¹⁵⁰ հաշվետվություն տրամադրող անձանցից (օրինակ, բանկեր, վարկային կազմակերպություններ, նոտարներ, Պետոեզիստ) պահանջում է իրականացնել հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն՝ ներդնելով ռիսկերի կառավարման ընթացակարգեր, որոնց միջոցով կբացահայտեն և կգնահատեն հնարավոր կամ առկա ռիսկերը, կապահովեն համարժեք միջոցների ձեռնարկումը և համապատասխան ռիսկերը հայտնաբերելու դեպքում կհաղորդեն պետական լիազոր մարմնին: Որոշ ՔՀԿ-ներ նշում են, որ բանկային հաշիվ բացելու կամ դոնորներից գումար ստանալու համար բանկերը չափազանց շատ փաստաթղթեր են պահանջել, օրինակ՝ հիմնադիրների անձնագրերի պատճենները, դրամաշնորհային ծրագրի պայմանագրի պատճենը և այլն՝ կախված բանկի ներքին ընթացակարգերից և ռիսկերի գնահատման արդյունքներից:

2021 թվականի հունիսին օրենսդրական փոփոխություններ ընդունվեցին՝ բոլոր իրավաբանական անձանց համար իրական շահառուների գրանցման պահանջ սահմանելով¹⁵¹: Ոչ առևտրային կազմակերպությունների համար այս պահանջն ուժի մեջ կմտնի 2023 թվականից: Իրական շահառուներին վերաբերող կարգավորումները կոռուպցիայի դեմ պայքարի միջոցառումների իրականացման և Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման շրջանակներում քաղաքացիական հասարակության և Հայաստանի կառավարության առաջնահերթ խնդիրներից էին: Նախքան այս օրենսդրական փաթեթի ներկայացումը քննարկումներ են անցկացվել տարբեր շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ ՔՀԿ-ների հետ:

Ոլորտի կոնկրետ առաջարկությունները հետևյալն են.

- Խորհրդարանին՝ օրենսդրական փոփոխությունների իրականացնել, ՔՀԿ-ներին հնարավորություն տալով հանրային շահերը ներկայացնել դատարանում՝ իրենց նպատակների շրջանակում, և ապահովել, որ նրանք կարողանան

¹⁴⁹ Ֆոկուս-խմբային քննարկումներ, հոկտեմբեր 2021 թ.:

¹⁵⁰ ՀՀ օրենքը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին», 26.05.2008, վերջին փոփ. 03.06.2021, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=64606>:

¹⁵¹ ՀՀ օրենքը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, 03.06.2021, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=153756>

գործնականում օգտվել այս իրավունքից՝ մեղմելով չափազանց բարդ պահանջները և առնչվող վարչարարական ընթացակարգերը:

- Պետությունը պետք է համարժեք պաշտպանություն ապահովի ՔՀԿ-ներին ուղղված ատելության խոսքից և ապատեղեկատվությունից, այդ թվում՝ խտրականության դեմ պայքարի վերաբերյալ կարգավորումների, հրապարակային հայտարարությունների և ՔՀԿ-ների ու ակտիվիստների դեմ հարձակումների ողջամիտ ժամկետում պատշաճ քննության միջոցով:
- Կենտրոնական բանկին՝ ապահովել բանկերի՝ ռիսկերի կառավարման ընթացակարգերի թափանցիկությունը, օրինակ, այդ ընթացակարգերի և մասնավորապես ՔՀԿ-ների հետ կապված ստուգումների վերաբերյալ առավել մանրամասն կարգավորում ընդունելու միջոցով:
- Արդարադատության նախարարությանը և պետեզիստրին՝ իրազեկման միջոցառումներ իրականացնել 2023 թվականից ուժի մեջ մտնող ՔՀԿ-ների կողմից իրական շահառուների գրանցման պահանջի վերաբերյալ և մշակել համապատասխան ուղեցույց:

3.9 Պետական աջակցություն

Ոլորտի ընդհանուր գնահատական՝ 4/7

Իրավական դաշտ՝ 4,2/7	Գործնական դաշտ՝ 3,9/7
-------------------------	--------------------------

Նախարարություններից մի քանիսը ՔՀԿ-ներին հիմնականում դրամաշնորհների միջոցով պետական ֆինանսավորում հատկացնելու երկարամյա ընթացակարգ և գործելակերպ ունեն: Ի տարբերություն պետական մարմինների, ՏԻՍ-երը ՔՀԿ-ներին սահմանափակ ֆինանսավորում են տրամադրում, հաճախ հայեցողական հիմունքներով: ՔՀԿ-ների և նվիրատուների համար հարկային արտոնությունները քիչ են, իսկ բարեգործական ծրագրերի դեպքում հարկերից ազատման ընթացակարգը երկարատև է և բարդ: Կամավորական աշխատանքը լայն կիրառում ունի, սակայն օրենսդրական բացեր կան կամավորական գործունեության հստակ սահմանման և խրախուսման մեխանիզմների մասով:

2021 թվականի հունվարին պետական ֆինանսավորման հատկացման կարգում փոփոխություններ կատարվեցին՝ դրամաշնորհային մրցույթների հայտարարման և ընտրության գործընթացը կարգավորելու նպատակով: Դրանից զատ՝ վերջին տարվա ընթացքում պետական աջակցության ոլորտում էական փոփոխություններ չեն արձանագրվել: «ՔՀԿ չափիչի» 2019 թվականի զեկույցի առաջարկը՝ դրամաշնորհային ծրագրերի ընտրության թափանցիկ և մասնակցային գործընթացի ապահովման վերաբերյալ, մասամբ իրականացվել է: Դրամաշնորհային մրցույթների հայտարարությունների, արդյունքների և ֆինանսավորվող ծրագրերի հաշվետվությունների հրապարակման առցանց հարթակը վերջերս է գործարկվել, և դեռ ժամանակ է անհրաժեշտ դրա գործառնությունը գնահատելու համար: Հարկային բարենպաստ միջավայրին և կամավորական գործունեության խթանմանն առնչվող առաջարկները չեն իրականացվել:

Չափորոշիչ 1. Պետության կողմից ՔՀԿ-ների ֆինանսական և նյութական աջակցության բազմազան ու արդյունավետ մեխանիզմներ կան:

ՀՀ պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաներ և դրամաշնորհներ տրամադրելու վերաբերյալ կարգի համաձայն՝ դրամաշնորհ ստացող կազմակերպությունն ընտրվում է մրցույթի արդյունքում, իսկ սուբսիդիան հատկացվում է պետական մարմնի և կազմակերպության միջև կնքված սուբսիդիայի տրամադրման մասին պայմանագրի հիման վրա¹⁵²: 2021 թվականին ընդունված փոփոխություններից հետո ոչ պետական կազմակերպություններին ֆինանսավորումը տրամադրվում է հիմնականում դրամաշնորհների ձևաչափով՝ մրցութային հիմունքներով, մեկ տարվա ժամկետով, դրամաշնորհ տրամադրող մարմնի տարեկան բյուջեի հիման վրա: Տեղական ինքնակառավարման մարմինները ևս կարող են ֆինանսավորում հատկացնել ոչ պետական ոչ առևտրային կազմակերպություններին՝ բյուջեի համապատասխան տոկոսով: Սակայն այդ հատկացումները հիմնականում հայեցողական հիմունքներով են տրամադրվում՝ դիմումների հիման վրա, գործընթացը թափանցիկ չէ, ֆինանսավորված նախաձեռնությունների մշտադիտարկման և հաշվետվողականության որևէ մեխանիզմ չկա: ՔՀԿ-ները նշում են, որ որոշ համայնքներում համայնքի բյուջեի որոշակի տոկոսը մրցութային հիմունքներով քաղաքացիական նախաձեռնություններին հատկացնելու դրական փորձ է ձեռք բերվել, ամենից հաճախ՝ հենց ՔՀԿ-ների առաջարկով: Այնուամենայնիվ, տեղական մակարդակում նման նախաձեռնությունները հաճախ մեկնազամյա բնույթ ունեն և ինստիտուցիոնալացված չեն: ՏԻՄ-երը տրամադրում են նաև բնակիրային աջակցություն՝ հիմնականում համայնքային սեփականություն հանդիսացող շենքում տարածքի հատկացմամբ, որը նույնպես իրականացվում է հայեցողական և ոչ թափանցիկ եղանակով:

Չափորոշիչ 2. ՔՀԿ-ների պետական աջակցությունը կարգավորվում է հստակ և օբյեկտիվ չափանիշներով և հատկացվում է թափանցիկ և մրցակցային ընթացակարգով:

2021 թվականի սկզբից բարելավվել է ՔՀԿ-ներին պետական աջակցության հատկացման իրավական ընթացակարգը: 2021 թվականի հունվարին ՀՀ կառավարությունը փոփոխություններ կատարեց իրավաբանական անձանց պետական դրամաշնորհների և սուբսիդիաների հատկացման կարգում: Փոփոխությունների արդյունքում ավելի մանրամասն կարգավորումներ են նախատեսվել դրամաշնորհների հայտարարման գործընթացի և գնահատող հանձնաժողովի գործունեության վերաբերյալ, ինչպես նաև դրույթներ են ներառվել շահերի բախման, ընտրության գործընթացի թափանցիկության և ընտրության չափանիշների սահմանման վերաբերյալ¹⁵³: Նախարարությունների մեծ մասը դրամաշնորհային մրցույթների մասին հայտարարությունները հրապարակում է իրենց կայքերում, սակայն ֆինանսավորված ծրագրերի հաշվետվությունները միշտ չէ, որ հասանելի են: Վերոնշյալ փոփոխությունները էլեկտրոնային համակարգի միջոցով մրցույթներ իրականացնելու, պայմանագրեր կնքելու և հաշվետվություն ներկայացնելու մասին դրույթ են ներառում¹⁵⁴: 2021 թվականի օգոստոսին Ֆինանսների

¹⁵² ՀՀ կառավարության թիվ 1937-Ն որոշումը «ՀՀ պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին», 24.12.2003, վերջին փոփ. 06.08.2021, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=155096>:

¹⁵³ ՀՀ կառավարության թիվ 97-Ն որոշումը «ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 29-ի թիվ 566-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», 27.01.2021, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=149496>:

¹⁵⁴ Նույն տեղում, կետ 3:

նախարարությունը դրամաշնորհների պլանների և պայմանագրերի հաշվառման, պայմանագրի արդյունքներն ընդունելու նպատակով էլեկտրոնային համակարգի օգտագործման և դրամաշնորհային մրցույթները էլեկտրոնային եղանակով կազմակերպելու ուղեցույցներ հաստատեց: 2021 թվականի սեպտեմբերից պետական գնումների էլեկտրոնային armeps.am համակարգն օգտագործվում է նաև դրամաշնորհների բյուջեների մասին տեղեկությունների և դրամաշնորհների պայմանագրերի հրապարակման համար: Այնուամենայնիվ, հարթակը չունի բաց տվյալների ձևաչափ, ի սկզբանե նախատեսված է գնումների գործարքների համար և հարմար չէ ՔՀԿ-ների գործածման տեսանկյունից:

ՔՀԿ-ները և փորձագետները նշում են, որ դրամաշնորհային հնարավորությունների մասին տեղեկությունները բավարար չափով չեն տարածվում: Բացի այդ, պետական դրամաշնորհի համար դիմած կամ այն ստացած ՔՀԿ-ները նշում են բարդ վարչարարական ընթացակարգերի մասին, որոնք, մասնավորապես, կապված են դրամաշնորհի հայտի ներկայացման և իրականացման գործընթացում պահանջվող գնումների փաստաթղթերի հետ, ինչը խոչընդոտում է պետական դրամաշնորհների նկատմամբ հետագա հետաքրքրվածությունը: Նկատվում է նաև դրամաշնորհների կառավարման և մշտադիտարկման հմտությունների պակաս պետական ծառայողների շրջանում:

Չափորոշիչ 3. ՔՀԿ-ներն օգտվում են բարենպաստ հարկային միջավայրից:

Հարկային օրենսդրությունը հիմնականում բարենպաստ չէ ՔՀԿ-ների համար, թեև առկա են որոշ արտոնություններ: Ըստ ՀՀ հարկային օրենսգրքի՝ ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացած ակտիվները, աշխատանքները և ծառայությունները շահութահարկով հարկման ենթակա չեն¹⁵⁵: Մինևույն ժամանակ, բնահիրային նվիրատվությունները հարկվում են ԱԱՀ-ով, եթե ԱԱՀ-ից ազատման մասին կառավարության որոշում չկա, ընդ որում հարկման բազան կազմում է նվիրաբերված ակտիվների արժեքի 80 տոկոսը¹⁵⁶: ՔՀԿ-ներն իրենց աշխատակիցների համար եկամտահարկը վճարում են նույն չափով, ինչ մասնավոր ընկերությունները: ՔՀԿ-ների տնտեսական գործունեության խրախուսման հարկային մեխանիզմներ չկան, իսկ ուղղակի ձեռնարկատիրական գործունեության դեպքում ՔՀԿ-ները, ի տարբերություն փոքր ընկերությունների, չեն կարող օգտվել հարկման հատուկ համակարգերից: Ոչ առևտրային կազմակերպությունները պարտավոր չեն իրենց ապրանքների և ծառայությունների համար ԱԱՀ գանձել, եթե գործունեության բոլոր տեսակներից իրացման տարեկան շրջանառությունը չի գերազանցում 115 միլիոն ՀՀ դրամը¹⁵⁷: Ըստ «Բարեգործության մասին» օրենքի՝ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով արտոնությունները բարեգործական որակված ծրագրերին տրամադրվում են օրենքով սահմանված կարգով¹⁵⁸: «Բարեգործական ծրագրերի մասին» ՀՀ կառավարության որոշմամբ սահմանվում են նախագծերը բարեգործական որակելու կարգը, ինչպես նաև հայտ ներկայացնելու, որոշումներ կայացնելու, բարեգործական ծրագրերի նկատմամբ վերահսկողություն և բարեգործական որակավորումը վերանայելու կարգերը¹⁵⁹: Բարեգործական կարգավիճակը տրամադրվում է կոնկրետ ծրագրի համար՝ դրա ողջ տևողության

¹⁵⁵ ՀՀ հարկային օրենսգրք, 04.10.2016, հոդված 108:

¹⁵⁶ ՀՀ հարկային օրենսգրք, 04.10.2016, հոդված 62:

¹⁵⁷ ՀՀ հարկային օրենսգրք, 04.10.2016, հոդված 59:

¹⁵⁸ ՀՀ օրենքը «Բարեգործության մասին», 08.10.2002, վերջին փոփ. 21.06.2018, հոդված 16, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=123353>:

¹⁵⁹ ՀՀ կառավարության թիվ 66-Ն որոշումը «Բարեգործական ծրագրերի մասին», 16.01.2003, վերջին փոփ. 31.01.2019, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=128100>:

ընթացքում, բայց կարող է վերանայվել, եթե ծրագրի իրականացման ընթացքում խնդիրներ լինեն, օրինակ, ներկայացված փաստաթղթերում հայտնաբերվեն կեղծ տեղեկություններ կամ օրենսդրության պահանջների խախտումներ¹⁶⁰: Եթե ծրագրին տրվել է բարեգործական կարգավիճակ, ապա կազմակերպությունը պարտավոր է լիազոր մարմինն տարեկան հաշվետվություն տրամադրել իր գործունեության մասին: Բարեգործական ծրագրերի որակման և գրանցման կարգի համաձայն՝ որոշումներ ընդունող և համապատասխան այլ գործառույթներ իրականացնող լիազոր մարմինը փոխվարչապետն է, որը որոշումները կայացնում է բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի առաջարկության հիման վրա¹⁶¹:

Գործնականում ՔՀԿ-ների ստացած նվիրատվությունները շահութահարկով չեն հարկվում, ինչպես և նախատեսված է օրենքով: Բարեգործական ծրագրի կարգավիճակ ստանալու և հետագա հարկերից ազատվելու կարգը բավականին բարդ է և ժամանակատար՝ կապված բյուրոկրատական բարդ թղթաբանության և յուրաքանչյուր գործարքի համար հարկային մարմինների հետ բազմակի հաղորդակցության հետ: ՔՀԿ-ներից քչերն են ուղղակի տնտեսական գործունեություն իրականացնում, որի պատճառներից մեկն անբարենպաստ հարկային ռեժիմն է¹⁶²:

Չափորոշիչ 4. ՔՀԿ-ներին նվիրատվությունների հատկացման դեպքում ընկերությունները և անհատներն օգտվում են հարկային արտոնություններից:

Նվիրատվությունների համար նախատեսված հարկային արտոնությունները բավարար չեն խոշոր և հաճախակի նվիրատվություններ խթանելու համար: Նվիրատուների համար հարկային միայն մեկ արտոնություն կա, որ նախատեսված է իրավաբանական անձանց համար: Ըստ հարկային օրենսգրքի՝ շահութահարկ վճարողների (այդ թվում՝ ընկերությունների, անհատ ձեռնարկատերերի, տնտեսական գործունեություն իրականացնող ՔՀԿ-ների և այլն) հարկման բազայից նվազեցվում է ոչ առևտրային կազմակերպություններին տրամադրված ակտիվների, դրանց համար կատարված աշխատանքների և (կամ) դրանց մատուցված ծառայությունների արժեքը, բայց ոչ ավելի, քան հարկային տարվա համախառն եկամտի 0,25 տոկոսը¹⁶³: Գործնականում ընկերությունները հաճախ չեն դիմում հարկային արտոնություն ստանալու համար՝ կամ չցանկանալով ներգրավվել վարչարարական ընթացակարգերի մեջ, քանի որ արտոնությունը շատ փոքր է, կամ էլ անտեղյակության պատճառով: Բարեգործության վերաբերյալ վերջերս արված ուսումնասիրության համաձայն՝ 2017-2019 թվականներին շահութահարկի դաշտում գործող ընկերությունների միայն 2,3%-ն է օգտվել շահութահարկի նվազեցումից¹⁶⁴: ՔՀԿ-ների ստացած բնաիրային նվիրատվությունները

¹⁶⁰ Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգը, Հավելված N 1 ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի թիվ 66-Ն որոշման, հոդված 28:

¹⁶¹ ՀՀ վարչապետի օգոստոսի 2018 թվականի օգոստոսի 21-ի թիվ 1111-Ս որոշումը «Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի կանոնադրությունն ու կազմը հաստատելու և ՀՀ վարչապետի 2001 թվականի մարտի 14-ի թիվ 205 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», 21.08.2018, վերջին փոփ. 02.09.2021, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=155651>:

¹⁶² ՊԵԿ-ի տրամադրած տեղեկությունների համաձայն՝ մինչև 2021 թ. հոկտեմբերի 20-ը ՊԵԿ համակարգում իրենց տարեկան հաշվետվությունը հրապարակած 1666 հասարակական կազմակերպություններից միայն 89-ն են ձեռնարկատիրական գործունեությունից շահույթ ստացել:

¹⁶³ ՀՀ հարկային օրենսգրք, 04.10.2016, հոդված 123:

¹⁶⁴ Philanthropy in Armenia, "NGO Center" Civil Society Development NGO («Բարեգործությունը Հայաստանում», «ՀԿ կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման հիմնադրամ ՀԿ), https://ngoc.am/wp-content/uploads/2021/01/Research-Final-Report_Nov-2020.pdf:

հարկվում են ԱԱՀ-ով¹⁶⁵, ինչը խոչընդոտում է ընկերությունների կողմից սարքավորումներ և նյութական այլ ռեսուրսներ նվիրաբերելու նախաձեռնություններին:

Չափորոշիչ 5. Օրենսդրությունն ու քաղաքականությունը խթանում են կամավորությունը և խթաններ տրամադրում դրա զարգացման համար:

Օրենսդրությամբ կամավորական գործունեության հստակ սահմանում և խրախուսման մեխանիզմներ չկան: «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքը սահմանում է հասարակական կազմակերպության աշխատանքներում կամավորներին ներգրավելու իրավունքը և կարգը: Ըստ օրենքի՝ եթե կամավորի աշխատանքի տևողությունը գերազանցում է շաբաթական 20 ժամը, ապա կազմակերպությունը կամավորների հետ կնքում է կամավոր աշխատանքի մասին պայմանագիր, սակայն արգելվում է կամավորներին ներգրավել կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության մեջ¹⁶⁶: «Բարեգործության մասին» օրենքի համաձայն՝ կամավորներն այն ֆիզիկական անձինք են, ովքեր կատարում են անհատույց աշխատանքներ բարեգործություն ստացողների օգտին¹⁶⁷: Ընդհանուր առմամբ, կամավորական գործունեության կարգավորումները դրվագային են, և օրենսդրական բացեր կան կամավորների ծախսերի փոխհատուցման հարկման, հիմնադրամներում կամավորների աշխատանքի, պատասխանատվության մեխանիզմների և միջազգային կամավորների ներգրավման մասով: Սկսած 2017 թվականից՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը կամավորական գործունեության մասին օրենքի մի քանի նախագծեր է մշակել՝ կամավորության հասկացությունը, կամավորների իրավունքները և պարտականությունները, ծախսերի փոխհատուցումը և այլ հարցեր կարգավորելու նպատակով: Նախագծի վերջին տարբերակը հիմնված էր ՔՀԿ-ների հետ քննարկումների արդյունքների վրա և 2020 թվականին ներկայացվել էր հանրային քննարկման, սակայն դեռևս հետագա ընթացք չի ստացել¹⁶⁸: Նախագիծը տարբեր արձագանքներ գտավ ՔՀԿ-ների շրջանում, որոնցից շատերը գտնում էին, որ չափից շատ կարգավորումները կարող են սահմանափակող ազդեցություն ունենալ, մինչդեռ այն ՔՀԿ-ները, որոնք գործ են ունենում մեծ թվով կամավորների հետ և ներգրավված են կամավորների փոխանակման ծրագրերում, նշում են, որ առկա օրենսդրական բացերը շտկելու անհրաժեշտություն կա:

Գործնականում ՔՀԿ-ները հաճախ են կամավորների ներգրավում իրենց աշխատանքում, և կամավորության մշակույթը աճ է ապրում՝ հատկապես երիտասարդների շրջանում, որոնք կամավոր աշխատանքը համարում են աշխատանքային փորձ ձեռք բերելու և կամ որոշակի նպատակի կամ համայնքին ծառայելու հնարավորություն: ՔՀԿ-ներն արգելքների չեն հանդիպում օտարերկրյա կամավորներին ներգրավելու կամ կամավորներին արտասահման ուղարկելու դեպքում, սակայն որոշակի բյուրոկրատական խոչընդոտներ պետք է հաղթահարեն՝ պայմանավորված օտարերկրյա կամավորների վերաբերյալ համապատասխան իրավական կարգավորումների բացակայությամբ: Կամավորական փորձը հաճախ գնահատվում է գործատուների և համալսարանների կողմից:

¹⁶⁵ ՀՀ հարկային օրենսգիրք, հոդված 62.6:

¹⁶⁶ ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 17:

¹⁶⁷ ՀՀ օրենքը «Բարեգործության մասին», 08.10.2002, հոդված 9:

¹⁶⁸ ՀՀ օրենքի նախագիծը «Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին», Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, <https://www.e-draft.am/projects/2516>:

Ոլորտի կոնկրետ առաջարկությունները հետևյալն են.

- Կառավարությանը՝ ընդլայնել ՔՀԿ-ներին տրամադրվող պետական ֆինանսավորման շրջանակը, մասնավորապես՝ ավելացնել պետական ֆինանսավորում տրամադրող պետական մարմինների քանակը, դրամաշնորհների ֆինանսավորման և ծառայությունների պատվիրակման ծավալներն ու գործելակերպը. ապահովել ֆինանսավորման թափանցիկ, մրցակցային և հաշվետու հատկացում ինչպես պետական, այնպես էլ տեղական մակարդակներում, այդ թվում՝ պետական դրամաշնորհների տրամադրման վերաբերյալ արդյունավետ և դյուրօգտագործելի էլեկտրոնային հարթակի և տեղական բյուջեներից թափանցիկ և մրցակցային հատկացումներ պարտադրող կանոնակարգերի ընդունման միջոցով, ինչպես նաև բարելավել համապատասխան պետական ծառայողների դրամաշնորհների կառավարման և մշտադիտարկման կարողությունները:
- Կառավարությանը, մասնավորապես Ֆինանսների նախարարությանը, ինչպես նաև խորհրդարանին՝ ՔՀԿ-ների համար ավելի բարենպաստ հարկային միջավայր ստեղծել, որը կօգնի բարելավել տարբեր աղբյուրներից, այդ թվում՝ անհատների և տնտեսվարող սուբյեկտների նվիրատվություններից և ուղղակի ձեռնարկատիրական գործունեությունից ֆինանսավորում և բնափրային աջակցություն հայթայթելու հնարավորությունները: Մասնավորապես.
 - դյուրինացնել բարեգործական գործունեությունը հարկերից ազատելու ընթացակարգերը՝ հնարավորություն ընձեռելով ժամանակին և արդյունավետ գործարքներ կատարել բարեգործական նպատակների համար,
 - տնտեսական գործունեությամբ զբաղվող ՔՀԿ-ների համար ավելի բարենպաստ հարկային ռեժիմ ապահովել՝ խրախուսելու ինքնաֆինանսավորման հասնելու նրանց ջանքերը,
 - հաշվի առնել միջազգային առաջատար փորձը, որը կօգնի խթանել ՔՀԿ-ների գործունեությունը ավելի բարենպաստ հարկային ընթացակարգերի, օրինակ՝ 1% եկամտահարկի հատկացման օրենքի միջոցով¹⁶⁹,
 - ավելի զգալի հարկային արտոնություններ տրամադրել անհատների և ընկերությունների նվիրատվությունների համար¹⁷⁰ և գրոյական դարձնել ՔՀԿ-ներին տրամադրվող բնափրային նվիրատվությունների ԱԱՀ հարկը:
- Աշխատանքի և սոցիալական հարցերով նախարարությանը՝ կամավորական գործունեության վերաբերյալ առկա օրենսդրական բացերը լրացնող կարգավորումներ ընդունել՝ ՔՀԿ-ների և մասնավորապես մեծաքանակ կամավորների հետ աշխատող կազմակերպությունների հետ խորհրդակցությամբ:

¹⁶⁹ Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս՝ «Տոկոսի հատկացման մեխանիզմի ներդրման փորձառություններ», Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն, 10.11.2016, <https://ecnl.org/publications/experiences-implementation-percentage-designation-mechanism>, «Տոկոսի հատկացման մեխանիզմի առանցքային ասպեկտները», Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն, 06.04.2020, <https://ecnl.org/publications/key-aspects-percentage-designation-mechanism>:

¹⁷⁰ Օրինակ՝ Լեհաստանում, Բուլղարիայում և Չեխիայում ընկերությունների նվիրատվությունները նվազեցվում են հարկման բազայի մինչև 10%-ի չափով. տես. «Բարեգործությունը խթանող հարկային արտոնություններ. համեմատական հետազոտություն», հուլիս 2021, Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն, <https://ecnl.org/sites/default/files/2021-07/Final%20ECNL%20Tax%20benefits%20stimulating%20philanthropy%20July.pdf>:

3.10 Պետություն-ՔՀԿ համագործակցություն

Ոլորտի ընդհանուր գնահատական՝ 3,9/7

Իրավական դաշտ՝
4,3/7

Գործնական դաշտ՝
3,6/7

Այս ոլորտում ևս նախորդ զեկույցի համեմատ իրավիճակը չի փոխվել: Պետության և ՔՀԿ-ների միջև համագործակցությունը կարգավորվում է քաղաքականության մշակման գործընթացում մասնակցության վերաբերյալ օրենսդրությամբ և տարբեր խորհրդակցական մարմինների ու համատեղ խմբերի ստեղծման և գործունեության մասին որոշումներով: ՔՀԿ-ների հետ գործակցության և կամ նրանց մասնակցության կարևորությունն արտացոլված է ոլորտային ծրագրերում և ռազմավարություններում, սակայն ՔՀԿ-ների զարգացման կամ պետություն-ՔՀԿ համագործակցության վերաբերյալ առանձին քաղաքականություն կամ ռազմավարություն չկա:

Հասարակական խորհուրդների և այլ խորհրդակցական մարմինների գործառնությունն ու արդյունավետությունը հաճախ կախված են տվյալ գերատեսչության քաղաքական կամքից: Այս մարմինների ակտիվության անկում է արձանագրվել, իսկ դրանց արդյունավետությունը ՔՀԿ-ների մասնակցության ազդեցության առումով կասկածի տակ է: Առանձին քաղաքականությունների կամ նախաձեռնությունների շրջանակներում գործող համատեղ աշխատանքային խմբերը ավելի հիմնավոր և բովանդակալից գործակցության հիմք են ստեղծում: Նախորդ զեկույցի առաջարկները չեն իրագործվել և նոր կարևորություն են ձեռք բերել ներկայիս համատեքստում:

Չափորոշիչ 1. Պետական քաղաքականությունը նպաստում է ՔՀԿ-ների զարգացմանը և նրանց հետ համագործակցությանը:

Հայաստանում պետության և ՔՀԿ-ների միջև համագործակցությունը ամրագրված չէ որևէ քաղաքականությամբ կամ ռազմավարությամբ, չկա նաև ՔՀԿ-ների զարգացման վերաբերյալ որևէ պետական ռազմավարություն, որը կնպաստեր ՔՀԿ հատվածի զարգացմանն ուղղված առավել արդյունավետ գործընկերությանը և համատեղ ջանքերին: Տարբեր իրավական ակտերով հանրային մասնակցության հնարավորություններ են տրամադրվում՝ մասնավորապես Հանրային խորհրդի, նախարարություններում և այլ գերատեսչություններում գործող հասարակական խորհուրդների, ոլորտային աշխատանքային խմբերի միջոցով:

ՔՀԿ-ների զարգացման վերաբերյալ վերջին և միակ փաստաթուղթն ընդունվել է 2014 թվականին՝ «Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների հայեցակարգ» վերնագրով¹⁷¹: Հայեցակարգի որոշ դրույթներ ներառվել են 2016 թվականի «Հասարակական կազմակերպությունների մասին» նոր օրենքում, մյուսները չեն կատարվել:

Միևնույն ժամանակ, ՔՀԿ-ների հետ գործակցությանը վերաբերող դրույթներ են ներառվել ոլորտային պետական ռազմավարություններում և ծրագրերում, ինչպիսիք են, օրինակ

¹⁷¹ ՀՀ կառավարության նիստի թիվ 40-42 արձանագրային որոշում «Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների հայեցակարգը հաստատելու մասին», 25.09.2014, https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2104/09/40-42.pdf

Հակակոռուպցիոն ռազմավարությունը, Գենդերային քաղաքականության իրականացման ռազմավարությունը, Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը, ինչպես նաև բազմաշահառու հանձնաժողովների և համատեղ աշխատանքային խմբերի հիմնադրումը և գործունեությունը կարգավորող իրավական ակտերում: Այս փաստաթղթերը մշակվել են ՔՀԿ-ների մասնակցությամբ՝ իրականացման և մշտադիտարկման արդյունավետության տարբեր մակարդակներով:

Չափորոշիչ 2. Պետությունը ՔՀԿ-ների հետ համագործակցությանն աջակցող հատուկ մեխանիզմներ ունի:

2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության դրույթներում նախատեսվել է Հանրային խորհուրդը՝ որպես կառավարության խորհրդակցական մարմին¹⁷²: Այս մարմնի գործառույթներն են՝ քաղաքականության մշակման և իրականացման գործում հասարակության տարբեր շերտերի շահերը ներկայացնելը, պետական կառավարման գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցությանը նպաստելը, հանրային նշանակություն ունեցող հարցերի, այդ թվում՝ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի, պետական ծրագրերի, ռազմավարությունների, հայեցակարգերի և դրանց նախագծերի վերաբերյալ հասարակական կարծիքը բացահայտելը¹⁷³: «Հանրային խորհրդի մասին» օրենքը սահմանում է խորհրդի անդամակցության և գործունեության հիմնական սկզբունքները: Հանրային խորհուրդը կազմված է 45 անդամից, որոնցից 15-ը նշանակվում է կառավարության կողմից, իսկ 15-ը հավաքագրվում են տարբեր կառույցներից՝ վարկանիշային ընտրության միջոցով: Հետագայում այդ 30 անդամներն առաջադրում և ընտրում են մնացած 15 անդամներին: Հանրային խորհրդի նախագահին ընտրում է վարչապետը¹⁷⁴: 2018 թվականին Հանրային խորհրդի կազմը փոփոխվել է: 2020 թվականի և 2021 թվականի առաջին կեսի ընթացքում խորհրդի կողմից իրականացված մի շարք հանդիպումների և հայտարարություններ վերաբերյալ հրապարակային տեղեկատվություն կարելի է գտնել: Սակայն Հանրային խորհրդի նախագահի՝ 2021 թվականի հունիսի հրաժարականից հետո այս մարմնի գործունեության մասին տեղեկություններ չկան¹⁷⁵: Հետագոտությանը մասնակցած ՔՀԿ-ները և փորձագետները կասկածի տակ են դնում այս կառույցի ֆունկցիոնալությունը և արդյունավետությունը:

Նախարարությունների խնդիրների և գործառույթների իրականացմանը քաղաքացիական հասարակության մասնակցությունն ապահովելու նպատակով 2016 թվականին ստեղծվեցին նախարարներին կից հասարակական խորհուրդներ¹⁷⁶: Կառավարության որոշման հիման վրա հասարակական խորհուրդներին վերաբերող դրույթը 2018 թվականին նորից ներառվեց պետական կառավարման համակարգի մարմինների կանոնադրության օրինակելի ձևի մեջ¹⁷⁷: Ըստ նախարարությունների կողմից ընդունված աշխատակարգերի, որտեղ սահմանված են հասարակական խորհրդի անդամների

¹⁷² Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 05.07.1995, փոփ. 06.12.2015, հոդված 161:

¹⁷³ ՀՀ օրենքը «Հանրային խորհրդի մասին», 07.03.2018, վերջին փոփ. 11.02.2021, հոդված 2, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=150514>:

¹⁷⁴ ՀՀ օրենքը «Հանրային խորհրդի մասին», 07.03.2018, հոդված 5:

¹⁷⁵ Հայաստանի Հանրապետության Հանրային խորհուրդ, <https://publiccouncil.am/>:

¹⁷⁶ ՀՀ կառավարության թիվ 337-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», 31.03.2016, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=104665>:

¹⁷⁷ ՀՀ կառավարության թիվ 1552-Լ որոշումը «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 22-ի թիվ 624-Լ որոշման մեջ լրացում կատարելու մասին», 27.12.2018, <https://www.e-gov.am/gov-decrees/item/31320/>:

ընտրության, հանդիպումների պարբերականության և գործունեության թափանցիկության սկզբունքները, խորհուրդները պետք է կազմավորվեն թափանցիկ ձևով և նիստեր գումարեն առնվազն եռամսյակը մեկ անգամ: Գործնականում նախարարություններից և ոչ մեկը վերջին տարում սահմանված պարբերությամբ նիստեր չի անցկացրել, թեև որոշ նախարարություններ 2021 թվականին վերսկսեցին նիստերի կազմակերպումը և խորհուրդների նոր կազմ հավաքագրեցին բաց հայտարարության միջոցով: Ոչ բոլոր նախարարություններն են օրենքով սահմանված կարգով հրապարակում նիստերի արձանագրությունները և հասարակական խորհուրդների գործունեության տարեկան հաշվետվությունները: Հասարակական խորհուրդներին ՔՀԿ-ների մասնակցությունը սահմանափակող հիմնական խնդիրը մարզային կազմակերպությունների մասնակցության դժվարությունն է, քանի որ նիստերն անցկացվում են Երևանում՝ առանց առցանց միանալու հնարավորության և ճանապարհաձախսի փոխհատուցման: Հետազոտությանը մասնակցած ՔՀԿ-ները հիմնականում գտնում են, որ խորհուրդները տեղեկատվության փոխանակման և երկխոսության օգտակար մեխանիզմ են, սակայն միաժամանակ կարծում են, որ շատ դեպքերում նախարարություններն այդ մարմիններին վերաբերվում են որպես ձևականության և լուրջ ուշադրություն չեն դարձնում ՔՀԿ-ների կարծիքներին և առաջարկներին:

Վարչապետի որոշումներով, ինչպես նաև նախարարությունների և այլ պետական գերատեսչությունների կողմից ձևավորվել են նաև այլ ոլորտային խորհուրդներ և հանձնաժողովներ, այդ թվում՝ Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդը, Կանանց հարցերով խորհուրդը, Ազգային փոքրամասնությունների հարցերով խորհուրդը, Երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովը և այլն: Բացի դրանից, ստեղծվել են նաև տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններին կից խորհրդակցական մարմիններ: Այս կառույցների մեծ մասի դեպքում անդամների ընտրության և գործունեության սկզբունքները թափանցիկ չեն: Գործնականում դրանց գործունակությունը և արդյունավետությունը տարբեր են՝ կախված տվյալ մարմնից և ՔՀԿ-ներին ներգրավելու և նրանց առաջարկները ներառելու քաղաքական կամքից: Ընդհանուր առմամբ, ՔՀԿ-ները նշել են, որ հանդիպումների պարբերականությունը նվազել է, իսկ պաշտոնյաները ավելի քիչ են շահագրգռված բովանդակային մասնակցության հնարավորություններ ընձեռելու հարցում¹⁷⁸:

Մասնակցային գործելակերպի հանձնառությունն ապահովելու նպատակով բազմաշահառու աշխատանքային խմբեր են ստեղծվել միջազգային տարբեր նախաձեռնությունների, օրինակ՝ «Բաց կառավարման գործընկերության»¹⁷⁹ և «Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության»¹⁸⁰ շրջանակում: Արդարադատության նախարարության ներքո գործող դիտորդական խումբը քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն է իրականացնում՝ ըստ «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի պահանջի¹⁸¹ և Արդարադատության նախարարի հրամանով

¹⁷⁸ Փորձագիտական հարցազրույցներ և ֆոկուս-խմբային քննարկումներ, հոկտեմբեր 2021 թ.:

¹⁷⁹ ԲԿԳ հայաստանյան չորրորդ գործողությունների ծրագրի աշխատանքները համակարգող աշխատանքային խումբ, «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնություն – Հայաստան, <https://www.ogp.am/en/working-group/>:

¹⁸⁰ ԱՃԹՆ բազմաշահառու խումբը, ՀՀ կառավարություն, <https://www.gov.am/en/eitimsg/>:

¹⁸¹ ՀՀ օրենքը «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին», 06.02.2002, վերջին փոփ. 11.09.2019, հոդված 47, <https://www.arlis.am/documentView.aspx?docid=43743>:

սահմանված կարգի¹⁸²: Գործում են նաև այլ դիտորդական խմբեր, որոնք մոնիտորինգ են իրականացնում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց բուժման և խնամքի ծառայություններ մատուցող¹⁸³ և երեխաներին, տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայություններ մատուցող¹⁸⁴ կազմակերպություններում: Համատեղ խմբերի ձևաչափը արդյունավետ է համարվում ՔՀԿ-ների կողմից, քանի որ այն ապահովում է մասնակցության ավելի բարձր՝ համագործակցային մակարդակ (ի տարբերություն հասարակական խորհուրդների խորհրդակցական կարգավիճակի), և այդպիսով հնարավորություն է տալիս ավելի նշանակալի ներդրում ունենալ քաղաքականության մշակման, իրականացման և մշտադիտարկման գործում:

Ոլորտի կոնկրետ առաջարկությունները հետևյալն են.

- Կառավարությանը և մասնավորապես Արդարադատության նախարարությանը՝ ՔՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների հետ համատեղ մշակել և իրականացնել քաղաքացիական հասարակության հատվածի զարգացման համապարփակ ռազմավարություն (հայեցակարգ, ճանապարհային քարտեզ), որն ուղղված կլինի ՔՀԿ-ների համար ավելի բարենպաստ միջավայրի ապահովմանը:
- Պետական մարմիններին՝ լիարժեք և արդյունավետ կերպով օգտագործել խորհրդակցական մարմինների ներուժը, մասնավորապես՝ նիստեր կազմակերպել օրենքով նախատեսված պարբերականությամբ, հեռավար մասնակցության հնարավորություն ընձեռել և ջանքեր գործադրել ՔՀԿ-ների բովանդակալից մասնակցության ուղղությամբ՝ նրանց ներգրավելով քաղաքականության մշակման վաղ փուլերում և հնարավորինս ներառելով ներկայացված առաջարկները:
- Կառավարությանը և խորհրդարանին՝ ավելի հաճախ օգտագործել համատեղ աշխատանքային խմբերի ձևաչափը, որը քաղաքականության մասնակցային մշակման և իրականացման արդյունավետ գործիք է հանդիսանում:

3.11 Թվային իրավունքներ

Ոլորտի ընդհանուր գնահատական՝ 4,2/7

Իրավական դաշտ՝ 4,9/7	Գործնական դաշտ՝ 3,5/7
-------------------------	--------------------------

Թվային իրավունքների պաշտպանությունը արտացոլված է խոսքի ազատության, մասնավոր կյանքի, տեղեկատվության ազատության և այլ օրենսդրական կարգավորումներում: Առցանց հարթակներում մարդու իրավունքների իրացման

¹⁸² ՀՀ արդարադատության նախարարի թիվ 126-Ն հրաման, 20.03.2020, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=140628>
¹⁸³ ՀՀ առողջապահության նախարարի թիվ 3757-Ս հրաման, 28.12.2017, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=140628>
¹⁸⁴ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի թիվ 112-Ս/1 հրաման, 16.10.2018, <https://www.mlsa.am/wp-content/uploads/2017/05/112-A-1-hraman.pdf>

խնդիրները կապված են լայնատարած ապատեղեկատվության և ասելության խոսքի հետ, իսկ իշխանությունների՝ այս խնդիրների լուծմանն ուղղված ջանքերը գոհացուցիչ չեն և հիմնականում պատժիչ բնույթ են կրում: Հսկողության նպատակներով տեխնոլոգիաների օգտագործումը պատշաճ կերպով կարգավորվում է օրենքով և սահմանափակված է նպատակների նեղ շրջանակի համար: Այդուհանդերձ, ՔՀԿ-ները կասկածներ ունեն, որ գործնականում տեղի է ունենում հեռախոսային և էլեկտրոնային հաղորդակցության ապօրինի հսկողություն:

Չափորոշիչ 1. Թվային իրավունքները պաշտպանված են, իսկ թվային տեխնոլոգիաները համապատասխանում են մարդու իրավունքների ստանդարտներին

Հաշվի առնելով, որ թվային իրավունքները թվային տարածքում իրացվող մարդու իրավունքներն են, կարելի է ասել, որ Հայաստանի օրենսդրությունը թվային իրավունքների պաշտպանության մեխանիզմներ է նախատեսում մարդու իրավունքներին առնչվող օրենքների միջոցով: Խոսքի ազատության, տեղեկատվության ազատության, մասնավոր կյանքի իրավունքի, անձնական տվյալների պաշտպանության, կիրքերի անցագործությունների և այլ առնչվող հարցերի վերաբերյալ կարգավորումներ կան Սահմանադրության մեջ, տարբեր օրենքներում և այլ իրավական ակտերում: Սահմանադրությունը համաչափության և որոշակիության սկզբունքներ է նախատեսում իրավունքների և ազատությունների սահմանափակումների նկատմամբ, ինչպես նաև թույլ է տալիս որոշակի իրավունքներ և ազատություններ սահմանափակել արտակարգ կամ ռազմական դրության պայմաններում¹⁸⁵:

Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի ազատության և գաղտնիության իրավունքը երաշխավորվում է Սահմանադրությամբ: Այս իրավունքի սահմանափակումները կարող են նախատեսվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Հաղորդակցության գաղտնիությունը կարող է սահմանափակվել միայն դատարանի որոշմամբ, բացառությամբ, երբ դա անհրաժեշտ է պետական անվտանգության պաշտպանության համար և պայմանավորված է հաղորդակցվողների՝ օրենքով սահմանված առանձնահատուկ կարգավիճակով¹⁸⁶:

2006 թվականին Հայաստանը միացել է Եվրոպայի խորհրդի «Կիրքերի անցագործությունների մասին կոնվենցիային», և կոնվենցիայում հռչակված սկզբունքների համաձայն՝ կիրքերի անցագործությունները քրեականացվել են ՀՀ քրեական օրենսգրքով¹⁸⁷: Պոռնոկագրական նյութեր, ասելություն տարածելը և պետական իշխանությունը զավթելու կամ սահմանադրական կարգը ուժով փոխելու կոչերը որակվում են որպես քրեական հանցագործություններ: Ապօրինի նյութեր կամ հեղինակային իրավունքով պաշտպանված հրապարակումներ ներբեռնելը քրեական հետապնդման ենթակա չէ, եթե մեղադրող կողմը չի կարողանում ապացուցել, որ բովանդակությունը պահպանվել է տարածելու նպատակով: Ինչպես նշված է Ոլորտ 6-ում, բռնության և հայրենասիրի հրապարակային կոչերը, այդ թվում՝ առցանց հարթակներում, քրեականացվել են:

¹⁸⁵ ՀՀ Սահմանադրություն, փոփ. 06.12.2015, հոդվածներ 76-79:

¹⁸⁶ ՀՀ Սահմանադրություն, փոփ. 06.12.2015, հոդված 33:

¹⁸⁷ ՀՀ քրեական օրենսգրք, 18.04.2003, հոդվածներ 251-257:

Էլեկտրոնային հաղորդակության հսկողությունը կարող է իրականացվել միայն դատարանի որոշմամբ, բացառությամբ այն անհետաձգելի դեպքերի, երբ հապաղումը կարող է հանգեցնել ահաբեկչական գործողությունների կամ սպառնալ պետական անվտանգությանը: Նման դեպքում ԱԱԾ-ն կարող է հսկողություն իրականացնել մինչև 48 ժամվա ընթացքում՝ նախքան դատարանի որոշման տրամադրումը¹⁸⁸: Իրավապահ մարմինների կողմից թվային տեխնոլոգիաների օգտագործումը կանոնակարգվում է օպերատիվ-հետախուզական միջոցառումների համար տեխնիկական միջոցների օգտագործման վերաբերյալ դրույթներով, որոնք երաշխիքներ են պարունակում մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքի խախտման դեմ: Արհեստական բանականության համակարգերին վերաբերող հատուկ կարգավորում չկա: Կառավարության որոշման համաձայն, թույլատրվում է մշակել տեխնիկական, այդ թվում՝ ծրագրային միջոցներ, որոնք հատուկ նախատեսված են համակարգչային ցանցերում և համակարգերում պահվող տեղեկատվությունը կորզելու և ինտերնետային հաղորդակցության բոլոր ձևերի, ներառյալ տեքստի, ձայնային և մուլտիմեդիա բովանդակության գաղտնի վերահսկման, գաղտնալսման և ձայնագրաման համար¹⁸⁹: Օրենքով նախատեսված դեպքերում և կարգով բոլոր օպերատորները և ծառայություն մատուցողները պարտավոր են ապահովել իրավապահ և ազգային անվտանգության աշխատակիցների հասանելիությունը հաղորդակցության սարքավորումներին և նմանատիպ այլ սարքերին՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացմանն աջակցելու նպատակով¹⁹⁰: Ինչ վերաբերում է գործնական դաշտին, առանձին ՔՀԿ-ներ և փորձագետներ նշել են, որ չեն բացառում իրավապահների և ԱԱԾ-ի կողմից ապօրինի հսկողության հնարավորությունը, հատկապես հաշվի առնելով վերջին տարիներին հրապարակված բարձրաստիճան պաշտոնյաների հեռախոսների գաղտնալսման մի շարք ձայնագրությունները: Վերջերս հրապարակված հետաքննության համաձայն, Հայաստանը որպես պետություն հայտնվել է այն երկրների ցանկում, որտեղ լրտեսական ծրագրեր ստեղծող Cytrox ընկերության հաճախորդներ կան¹⁹¹:

Հայաստանում սոցիալական ցանցերն ազատորեն գործում են: Այս ոլորտում հատուկ իրավակարգավորումներ չկան, որոնք քաղաքացիներին թույլ կտային սոցիալական ցանցերում իրենց իրավունքների խախտման դեպքում դիմել պետության պաշտպանությանը: Արցախյան պատերազմի ժամանակ Ֆեյսբուքն արգելափակեց շարք լրատվամիջոցների և անհատների հաշիվները՝ Ադրբեյջանի և Թուրքիայի օգտատերերի զանգվածային հաղորդումների հիման վրա: Նույն ժամանակահատվածում բազմաթիվ պետական կայքեր «կոտրվեցին», և կառավարությունը կասեցրեց ֆիզիկական և իրավաբանական անձանց տվյալների շտեմարաններ պարունակող մի քանի պետական կայքերի գործունեությունը: Ադրբեյջանական և թուրքական տիրույթներով (դոմեյն) կայքերն արգելափակվել էին, թեև օպերատորների կամ կառավարության կողմից

¹⁸⁸ ՀՀ օրենքը «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին», 22.10.2007, հոդվածներ 32 և 34:

¹⁸⁹ ՀՀ կառավարության թիվ 810-Ն որոշումը «Օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում օգտագործվող հատուկ (մշակված, ծրագրված, հարմարեցված) տեխնիկական միջոցների ցանկը հաստատելու մասին», 31.07.2008, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=45845>:

¹⁹⁰ ՀՀ օրենքը «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», 08.07.2005, վերջին փոփ. 03.03.2021, հոդված 50, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152672>:

¹⁹¹ Threat Report on the Surveillance-for-Hire Industry (Զեկույց «վարձու հսկողության» արդյունաբերության սպառնալիքների վերաբերյալ), Mike Dvilyanski, David Agranovich, Nathaniel Gleicher, 16.12.2021, <https://about.fb.com/wp-content/uploads/2021/12/Threat-Report-on-the-Surveillance-for-Hire-Industry.pdf>:

արգելափակման փաստը այդպես էլ պաշտոնապես չընդունվեց¹⁹²: Մի քանի օր օգտատերերի համար հասանելի չէր ԹիկԹոկ սոցիալական ցանցի հավելվածը: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը հայտարարություն էր տարածել, որ սոցիալական ցանցերում թուրքական ու ադրբեջանական աղբյուրներից տարածվում է ագրեսիվ բովանդակություն՝ ատելության և բռնության կոչեր, ընդգծելով, որ այդ խնդիրները հասկապես մտահոգիչ են ԹիկԹոկի դեպքում, որն ունի բովանդակության վերահսկման ավելի փոքր հնարավորություն և լայնորեն օգտագործվում է երեխաների կողմից¹⁹³:

Ռազմական դրության ժամանակ բազմաթիվ առցանց հրապարակումներ հեռացվեցին իրավապահ մարմինների պահանջով, որոշ դեպքերում էլ լրատվամիջոցները տուգանվեցին՝ ռազմական դրության մասին որոշմամբ սահմանված խոսքի ազատության սահմանափակումները խախտելու հիմքով (տե՛ս նաև Ոլորտ 6՝ «Խոսքի ազատություն»):

Չափորոշիչ 2. Պետությունը պայմաններ է ստեղծում թվային իրավունքների իրացման համար

2021 թվականի փետրվարին կառավարությունն ընդունեց 2021-2025 թթ. Հայաստանի թվայնացման ռազմավարությունը և ռազմավարության միջոցառումների ծրագիրը¹⁹⁴: Ռազմավարությունը նախատեսում է իրականացնել ՀՀ կառավարության, տնտեսության և հասարակության թվային փոխակերպումը (թվայնացումը)՝ նորարարական տեխնոլոգիաների, կիրառական գիտության, տվյալների քաղաքականության, էլեկտրոնային ծառայությունների և էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման և զարգացման, թվայնացման գործընթացների համակարգման, միասնական ստանդարտների և թվայնացված միջավայրի ստեղծման, ինչպես նաև տնտեսության մասնավոր հատվածում թվային տեխնոլոգիաների կիրառմանը նպաստող նախաձեռնությունների և հասարակության կողմից էլեկտրոնային գործիքների օգտագործումը խթանող ծրագրերի մշակման և իրականացման միջոցով: Ռազմավարությունը նպատակ ունի բարելավել անձնական տվյալների և հեղինակային իրավունքների պաշտպանությունը: Նախքան ընդունվելը՝ ռազմավարությունը հրապարակվել է e-draft հարթակում՝ հանրային քննարկման նպատակով, սակայն բուն փաստաթղթի մշակման գործընթացում ոլորտային ՔՀԿ-ների մասնակցությունը չի ապահովվել¹⁹⁵:

Հայաստանում գործում են մի շարք թվային հարթակներ, որոնք դյուրացնում են պետական մարմինների կողմից տնօրինվող տեղեկությունների հասանելիությունը՝ մասնակցության և բողոքներ ներկայացնելու էլեկտրոնային հնարավորություններ ընձեռելով: Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության էլեկտրոնային հարթակը (e-rights.am), որը վարում է Արդարադատության նախարարությունը, տեղեկատվություն է

¹⁹² Freedom on the Net 2021: Armenia (Ազատությունը համացանցում 2021, Հայաստան), Freedom House, <https://freedomhouse.org/country/armenia/freedom-net/2021>

¹⁹³ «Արցախի, այդ թվում՝ խաղաղ բնակչության նկատմամբ Ադրբեջանի նախաձեռնած ռազմաօդային և հրթիռային ագրեսիվ հարձակումներն ուղեկցվում են էթնիկ հայերի նկատմամբ մեծ ծավալի ատելության խոսքով. Արման Թաթոյան», Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպան, 28.09.2020, <https://ombuds.am/am/site/ViewNews/1311>:

¹⁹⁴ ՀՀ կառավարության թիվ 183-Լ որոշումը «Հայաստանի թվայնացման ռազմավարությանը, ռազմավարության միջոցառումների ծրագրին և արդյունքային ցուցանիշներին հավանություն տալու մասին», 11.02.2021, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=149957>

¹⁹⁵ «Հայաստանի թվայնացման ռազմավարությանը հավանություն տալու մասին», Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, քննարկվել է 08.06.2020 - 24.06.2020, <https://www.e-draft.am/projects/2524>

ներկայացնում տվյալ ռազմավարության և դրա շրջանակում իրականացված գործողությունների վերաբերյալ: 2020 թվականից հանրագիր.հայ կայքում գործում է հանրագրերի ներկայացման միասնական հարթակը, որի միջոցով կարելի է պետական մարմիններին հանրագրեր ներկայացնել և պարտադիր կերպով ստանալ այդ հանրագրի պատասխանը: Թե՛ հանրագիրը, թե՛ պատասխանը կարող են լինել հրապարակային՝ ըստ դիմողի ցանկության: Թվայնացման ռազմավարությամբ նախատեսվում են նոր էլեկտրոնային համակարգեր՝ դյուրացնելու սոցիալական ծառայությունների, կրթության հասանելիությունը, հաշմանդամություն ունեցող անձանց ինտեգրումը, խթանելու կիրքերանվտանգության վերաբերյալ գրագիտությունը:

Հայաստանի օրենսդրությունը չի կարգավորում ցանցի չեզոքության սկզբունքը, թեև ազգային կարգավորող մարմինը՝ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, մի քանի հայտարարություն է արել՝ նշելով, որ տեխնոլոգիաների չեզոքությունը կարգավորման կարևոր սկզբունք է¹⁹⁶: Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշման համաձայն՝ հեռահաղորդակցության օպերատորները և ծառայություններ մատուցողները պետք է հրապարակեն և տեղեկացնեն բաժանորդներին, եթե համացանցում չեն սատարում որոշակի արձանագրություններ կամ առավելություն են տալիս որևէ արձանագրությանը: Որոշումը նաև ամրագրում է, որ ծառայությունների մատուցման սակագները և պայմանները պետք է ամբողջապես հասանելի լինեն հանրությանը՝ բացառելով դրանց ներկայացման նկատմամբ որևէ խտրական կամ հայեցողական մոտեցում¹⁹⁷: Թվային օրակարգի իրականացման հիմնարար պայմաններից է Հայաստանի ողջ տարածքում համացանցի լայն հասանելիությունը, այդ թվում՝ հեռավոր շրջաններում¹⁹⁸: Գործնականում համացանցը լայնորեն տարածված է Հայաստանում, և բնակչության մեծամասնությունը համացանցի հասանելիություն ունի ֆիքսված ցանցերի կամ շարժական կապի օպերատորների միջոցով¹⁹⁹:

Հայաստանի օրենսդրությունը թույլ է տալիս պաշտպանել խախտված իրավունքները ինչպես անցանց, այնպես էլ առցանց միջավայրում, որի համար անհրաժեշտ է հայց, բողոք կամ դիմում ներկայացնել դատարան, իրավապահ մարմիններին, պատասխանողի վերադասին, կամ մասնագիտացված հաստատություններ, օրինակ՝ Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ և այլն: Ըստ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի՝ եթե որևէ մեկը համարում է, որ իր անձնական տվյալները մշակվել են օրենքի պահանջների կամ իր իրավունքների և ազատությունների խախտմամբ, կարող է դիմել անձնական

¹⁹⁶ «Թվային իրավունքները և դրանց կարևորությունը ինֆորմացիոն հասարակության համար», Դավիթ Սանդուխյան, «Թվային իրավունքների հետ կապված մարտահրավերները Հայաստանում», Մամվել Մարտիրոսյան, Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ, Երևան 2021, https://mdi.am/wp-content/uploads/2021/10/digital_human_rights_research_and_articles.pdf:

¹⁹⁷ ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի թիվ 471-Ն որոշումը տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման սակագների և պայմանների հրապարակման կարգը հաստատելու մասին», 03.09.2008, վերջին փոփ. 25.07.2012, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=77489>

¹⁹⁸ ՀՀ կառավարության թիվ 183-Լ որոշումը «Հայաստանի թվայնացման ռազմավարությանը, ռազմավարության միջոցառումների ծրագրին և արդյունքային ցուցանիշներին հավանություն տալու մասին», 11.02.2021

¹⁹⁹ DIGITAL 2021: ARMENIA, DataReportal, 11.02.2021, <https://datareportal.com/reports/digital-2021-armenia>

տվյալների պաշտպանության լիազոր մարմինն կամ դատարան և վնասի հատուցում պահանջել²⁰⁰:

Թվային իրավունքների վերաբերյալ կրթության և մեդիա գրագիտության առաջնագծում հիմնականում ՔՀԿ-ներն են՝ իրենց նախաձեռնություններով և նախագծերով, նպատակ ունենալով լրացնել այս ոլորտում առկա բացը, ինչը խիստ անհրաժեշտ է՝ հատկապես հաշվի առնելով ապատեղեկատվության աճող խնդիրը: ՔՀԿ-ները հաճախ գործակցում են պետական մարմինների հետ: 2021 թվականի մարտին Հանրային հեռուստաընկերությունը մեկնարկ տվեց «Մեդիագրագիտություն» պարբերաբար հեռարձակվող հաղորդմանը, որը լուսաբանում է այնպիսի թեմաներ, ինչպիսիք են կեղծ լուրերը, առցանց անվտանգությունը, խարդախությունը, սոցիալական ցանցերի օգտագործումը և այլն²⁰¹: 2017 թվականից Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը համագործակցում է «Մեդիա նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի հետ՝ մեդիագրագիտության ոլորտում ջանքերը համատեղելու նպատակով: Համագործակցության դրսևորումներից են ամենամյա «Մեդիագրագիտության շաբաթի» կազմակերպումը և մեդիա գրագիտության բաղադրիչի ներառումը նոր կրթական չափանիշներում և ծրագրերում²⁰²: Մեդիա դաշտում գործող տեղական մի ՔՀԿ Ֆեյսբուք հարթակի հետ համատեղ փաստերի ստուգման նախաձեռնություն իրականացրեց, որն օգնեց նվազեցնել կեղծ լուրերի տարածումը և որպես հաջողված օրինակ ծառայեց ապատեղեկատվության դեմ պայքարում²⁰³: Այնուամենայնիվ, պետությունը նախաձեռնողական մոտեցում չի դրսևորում ապատեղեկատվության խնդրի լուծման հարցում:

Ոլորտի կոնկրետ առաջարկությունները հետևյալն են.

- Իրավապահ մարմինները պետք է ապահովեն հսկողության տեխնոլոգիաների իրավաչափ օգտագործում և անձնական տվյալների արտահոսքի պատշաճ վերահսկողություն և քննություն:
- Կառավարությունը ոլորտային կազմակերպությունների հետ միասին պետք է նախաձեռնողական քայլեր ձեռնարկի ինչպես պետական ծառայողների, այնպես էլ հանրության շրջանում թվային գրագիտության և թվային գործիքների օգտագործման բարելավման ուղղությամբ, այդ թվում՝ ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության միջոցով և ոլորտային ՔՀԿ-ների ներգրավմամբ:

²⁰⁰ ՀՀ օրենքը «Անձնական տվյալների պաշտպանության մասին», 18.05.2015, վերջին փոփ. 09.07.2019, հոդված 17, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=132745>

²⁰¹ Մեդիա գրագիտություն, Հայաստանի հանրային հեռուստատեսություն, <https://www.ltv.am/hy/program/videos/Մեդիագրագիտություն>:

²⁰² Մեդիա գրագիտություն, Մեդիա նախաձեռնությունների կենտրոն, <https://mediainitiatives.am/medialiteracy-2/>

²⁰³ «Ֆեյսբուք»-ն ապատեղեկատվությունը կանխելու նպատակով ուժեղացնում է փաստերի ստուգումը հայկական տիրույթում, Մեդիա նախաձեռնությունների կենտրոն, 01.06.2021, <https://mediainitiatives.am/ֆեյսբուք-ն-ապատեղեկատվությունը-կան/>:

IV. ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդհանուր առմամբ, Հայաստանում «ՔՀԿ չափիչ» ոլորտների մեծ մասը դրական է գնահատվում իրավական կարգավորումների տեսանկյունից, մինչդեռ ամենամեծ մարտահրավերները գործնական դաշտում են:

Հիմնական իրավական բացերը կապված են ՔՀԿ-ների ֆինանսական կայունության խնդիրների, դատարանում ՔՀԿ-ների կողմից հանրային շահերի ներկայացման բարդ նախապայմանների, ՔՀԿ հատվածի զարգացման քաղաքականության բացակայության, ինչպես նաև ատելության խոսքի և թվային իրավունքների վերաբերյալ կարգավորումների բացակայության հետ: Ինչ վերաբերում է գործնական դաշտին՝ հետընթաց է գրանցվել մասնակցության, խոսքի ազատության և պետության կողմից պաշտպանության ոլորտներում: Մյուս կողմից, միավորումներ գրանցելու, տարբեր աղբյուրներից ֆինանսավորում հայթայթելու, հավաքներ կազմակերպելու և դրանց մասնակցելու գործնական հնարավորությունները բավականին դրական են գնահատվում:

«ՔՀԿ չափիչ» 2019 թվականի զեկույցի հրապարակումից հետո լիարժեք իրականացվել է մեկ առաջարկություն, այն է՝ վերացնել հիմնադրամների տարեկան հաշվետվություններում աշխատակիցների անունները հրապարակելու պահանջը: Երեք առաջարկություն՝ հանրային աղբյուրներից ֆինանսավորում ստացած հասարակական կազմակերպությունների համար պարտադիր աուդիտի պահանջի վերացումը, ՔՀԿ-ների պետական ֆինանսավորման մրցակցայնության և թափանցիկության բարելավումը և երրորդ կողմի հարձակումներից և ատելության խոսքից պաշտպանությունը մասնակիորեն իրականացվել են որոշակի օրենսդրական փոփոխությունների միջոցով: «ՔՀԿ չափիչ» 2019 թվականի զեկույցի առաջարկությունների մեծ մասը վերահաստատվել է ընթացիկ զեկույցում, ավելին՝ դրանք էլ ավելի մեծ կարևորություն են ձեռք բերել վերջին տարվա ընթացքում տեղի ունեցած բացասական զարգացումների համատեքստում:

ՔՀԿ-ների ֆինանսական կայունությունը և մասնակցությունը քաղաքականության մշակմանն ու իրականացմանը շարունակում են մնալ ՔՀԿ միջավայրի բարելավման առաջնահերթ ոլորտները՝ առցանց հարթակներում ՔՀԿ-ներին և առնչվող անձանց թիրախավորող ատելության խոսքի և ապատեղեկատվության դեմ պայքարի անհրաժեշտության հետ միասին:

Ստորև թվարկված առաջարկությունները ուրվագծում են նշված ոլորտներում բարելավման հնարավոր ուղղությունները: Այս առաջարկությունների մեծ մասը, մասնավորապես օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի հետ կապված առաջարկները, կարող են ներառվել որևէ ռազմավարական փաստաթղթում, օրինակ՝ ճանապարհային քարտեզում, որտեղ կներկայացվեն ՔՀԿ միջավայրի զարգացման հիմնական ուղղությունները՝ այդպիսով հիմք ծառայելով պետության կողմից առավել բարենպաստ միջավայր ստեղծելու ուղղությամբ ձեռնարկվող քաղաքականությունների և ջանքերի համար:

Ընդհանուր առաջարկ

1. Կառավարությանը և մասնավորապես Արդարադատության նախարարությանը՝ ՔՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների հետ համատեղ մշակել և

իրականացնել քաղաքացիական հասարակության հատվածի զարգացման համապարփակ ռազմավարություն (հայեցակարգ, ճանապարհային քարտեզ), որն ուղղված կլինի ՔՀԿ-ների համար ավելի բարենպաստ միջավայրի ապահովմանը:

ՔՀԿ-ների թիրախավորում և անձնական տվյալների պաշտպանություն

2. Պետությանը՝ պատշաճ պաշտպանություն ապահովել ՔՀԿ-ներին ուղղված ատելության խոսքից և ապատեղեկատվությունից, այդ թվում՝ խտրականության դեմ պայքարի վերաբերյալ կարգավորումների, հրապարակային հայտարարությունների և ՔՀԿ-ների ու ակտիվիստների դեմ հարձակումների ողջամիտ ժամկետում պատշաճ քննության միջոցով:
3. Պետությանը՝ մշակել ատելության խոսքի և ապատեղեկատվության դեմ պայքարի՝ միջազգային չափորոշիչներին համապատասխանող մեխանիզմներ, որոնք մասնավորապես կկենտրոնանան մեղիագրագիտության և էթիկական ստանդարտների տարածման ուղղությամբ և կընդլայնեն պետության կողմից տրամադրվող ստուգված և վստահելի տեղեկությունների շրջանակը:
4. Անձնական տվյալների պաշտպանության գործակալությանը՝ անձնական տվյալների պաշտպանության ոլորտում կարողությունների զարգացման միջոցառումներ իրականացնել պետական ծառայողների, ՔՀԿ-ների և այլ շահագրգռված անձանց համար, ՔՀԿ-ների և ոլորտային մասնագետների համագործակցությամբ մշակել անհրաժեշտ ընթացակարգերը և իրականացնել հանրային իրազեկման միջոցառումներ:

Ֆինանսական կայունության զարգացում

5. Կառավարությանը՝ ընդլայնել ՔՀԿ-ներին տրամադրվող պետական ֆինանսավորման շրջանակը, մասնավորապես՝ ավելացնել պետական ֆինանսավորում տրամադրող պետական մարմինների քանակը, դրամաշնորհների ֆինանսավորման և ծառայությունների պատվիրակման ծավալներն ու գործելակերպը. ապահովել ֆինանսավորման թափանցիկ, մրցակցային և հաշվետու հատկացում ինչպես պետական, այնպես էլ տեղական մակարդակներում, այդ թվում՝ պետական դրամաշնորհների տրամադրման վերաբերյալ արդյունավետ և դյուրօգտագործելի էլեկտրոնային հարթակի և տեղական բյուջեներից թափանցիկ և մրցակցային հատկացումներ պարտադրող կանոնակարգերի ընդունման միջոցով, ինչպես նաև բարելավել համապատասխան պետական ծառայողների՝ դրամաշնորհների կառավարման և մշտադիտարկման կարողությունները:
6. Կառավարությանը, մասնավորապես Ֆինանսների նախարարությանը, ինչպես նաև խորհրդարանին՝ ՔՀԿ-ների համար ավելի բարենպաստ հարկային միջավայր ստեղծել, որը կօգնի բարելավել տարբեր աղբյուրներից, այդ թվում՝ անհատների և տնտեսվարող սուբյեկտների նվիրատվություններից և ուղղակի ձեռնարկատիրական գործունեությունից ֆինանսավորում և բնաիրային աջակցություն հայթայթելու հնարավորությունները: Մասնավորապես.
 - a. դյուրինացնել բարեգործական գործունեությունը հարկերից ազատելու ընթացակարգերը՝ հնարավորություն ընձեռելով ժամանակին և

արդյունավետ գործարքներ կատարել բարեգործական նպատակների համար,

- b. տնտեսական գործունեությամբ զբաղվող ՔՀԿ-ների համար ավելի բարենպաստ հարկային ռեժիմ ապահովել՝ խրախուսելու ինքնաֆինանսավորման հասնելու նրանց ջանքերը,
 - c. հաշվի առնել միջազգային առաջատար փորձը, որը կօգնի խթանել ՔՀԿ-ների գործունեությունը ավելի բարենպաստ հարկային ընթացակարգերի, օրինակ՝ 1% եկամտահարկի հատկացման օրենքի միջոցով,
 - d. ավելի զգալի հարկային արտոնություններ տրամադրել անհատների և ընկերությունների նվիրատվությունների համար և գրոյական դարձնել ՔՀԿ-ներին տրամադրվող բնափրային նվիրատվությունների ԱԱՀ հարկը:
7. Աշխատանքի և սոցիալական հարցերով նախարարությանը՝ կամավորական գործունեության վերաբերյալ առկա օրենսդրական բացերը լրացնող կարգավորումներ ընդունել՝ ՔՀԿ-ների և մասնավորապես մեծաքանակ կամավորների հետ աշխատող կազմակերպությունների հետ խորհրդակցությամբ:

Մասնակցություն որոշումների կայացմանը

8. Պետությանը՝ օգտագործել մասնակցության առկա ինստիտուցիոնալ մեխանիզմները և ապահովել բովանդակալից մասնակցություն, այդ թվում՝ ներգրավել ՔՀԿ-ներին քաղաքականության մշակման վաղ փուլերում, պարտադիր քննարկումներ իրականացնել բոլոր, ներառյալ՝ խորհրդարանի կողմից մշակված օրենսդրական նախագծերի վերաբերյալ, բավարար ժամանակ տրամադրել խորհրդակցությունների համար,
- հնարավորինս հաշվի առնել և ներառել ՔՀԿ-ների առաջարկությունները, ինչպես նաև իրական շահագրգռվածություն և հետևողականություն ցուցաբերել քաղաքացիական հասարակության և հանրության կողմից առաջարկներ հայցելիս:
9. Պետական մարմիններին՝ լիարժեք և արդյունավետ կերպով օգտագործել խորհրդակցական մարմինների ներուժը, մասնավորապես՝ նիստեր կազմակերպել օրենքով նախատեսված պարբերականությամբ, հեռավար մասնակցության հնարավորություն ընձեռել և ջանքեր գործադրել ՔՀԿ-ների բովանդակալից մասնակցության ուղղությամբ՝ նրանց ներգրավելով քաղաքականության մշակման վաղ փուլերում և հնարավորինս ներառելով ներկայացված առաջարկները:
10. Կառավարությանը՝ ընդլայնել ՔՀԿ մասնակցությունը քաղաքականության իրականացման և մշտադիտարկման փուլերում՝ սահմանելով համապատասխան ինստիտուցիոնալ մեխանիզմներ և ապահովելով մասնակցությունը նաև օրենքների, քաղաքականությունների և ռազմավարությունների ընդունումից հետո:

V. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

«ՔՀԿ չափիչը» մի գործիք է, որը մշակվել է Արևելյան գործընկերության (ԱլԳ) երկրներում գործող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) միջավայրի կանոնավոր ու հետևողական մոնիտորինգին աջակցելու նպատակով: Այն բաղկացած է 11 տարբեր ոլորտների չափորոշիչներից և ցուցանիշներից, որոնք օգտագործվում են իրավական և գործնական միջավայրի գնահատման նպատակով: Գործիքի մշակման հիմք են հանդիսացել միջազգային չափորոշիչները և ոլորտի առաջատար փորձը: «ՔՀԿ չափիչը» մշակվել է ECNL-ի և ԱլԳ վեց երկրների գործընկեր կազմակերպությունների փորձագետների հիմնական խմբի կողմից:

2020 թվականից սկսած՝ ECNL-ը համագործակցել է RESIS կազմակերպության մեթոդաբանության փորձագետների հետ՝ արդյունքում «ՔՀԿ չափիչի» մեթոդաբանությունը ձևափոխելով այնպես, որ հնարավոր լինի նպաստավոր միջավայրի տարբեր ոլորտների համար ինչպես որակական, այնպես էլ քանակական համեմատություն իրականացնել ԱլԳ երկրների և տարիների միջև: Գնահատման մոդելի նախագիծը քննարկվել և փորձարկվել է տարածաշրջանի ընդլայնված փորձագիտական խմբի հետ՝ էլեկտրոնային փոստի և առցանց հանդիպման միջոցով: Համեմատության այս նոր մոդելի միջոցով մենք նպատակ ունենք՝ (1) գնահատել քաղաքացիական հասարակության միջավայրը 11 ոլորտներից յուրաքանչյուրում, (2) հետևել տարիների ընթացքում յուրաքանչյուր երկրի զարգացումներին/առաջընթացին և (3) համեմատել ՔՀԿ միջավայրի գնահատականները տարածաշրջանի մակարդակով:

Տվյալ զեկույցը ներառում է 2020 թվականի սեպտեմբերից 2021 թվականի դեկտեմբեր ընկած ժամանակահատվածը:

Մոնիտորինգի գործընթացը

Մոնիտորինգն իրականացվել է որակական մեթոդներով, այն է՝ փաստաթղթերի վերլուծություն, հարցազրույցներ և ֆոկուս-խմբային քննարկումներ: Փաստաթղթերի վերլուծության ընթացքում ուսումնասիրվել են համապատասխան իրավական ակտերը, ոլորտային զեկույցները, ՁԼՄ-ների և ՔՀԿ-ների հրապարակումները, պետական մարմիններին ուղարկված հարցումների պատասխանները: Հարցազրույցներ են իրականացվել ինը փորձագետի, այդ թվում՝ երկու պետական մարմնի, երեք միջազգային կազմակերպությունների և չորս տեղական ՔՀԿ-ների ներկայացուցիչների հետ:

Կազմակերպվել է երկու դեմադեմ և մեկ առցանց ֆոկուս-խմբային քննարկում՝ երևանյան և մարզային 31 ՔՀԿ-ների մասնակցությամբ, որոնք գործունեություն են ծավալում սոցիալական, կրթական, երիտասարդական, բնապահպանական, իրավապաշտպան, կարողությունների զարգացման, համայնքային զարգացման, լրատվության, սպորտի և այլ ոլորտներում: Հետազոտությանը մասնակցած փորձագետների և ՔՀԿ-ների կողմից ներկայացված կարծիքները ներկայացուցչական չեն և չեն կարող ներառել ՔՀԿ միջավայրում առկա բոլոր մարտահրավերներն ու ձեռքբերումները: Այնուհանդերձ, մոնիտորինգի մասնակիցների կողմից ներկայացված խնդիրներն արտացոլել են Հայաստանի ՔՀԿ միջավայրի հիմնական զարգացումները և հնարավորինս լրացվել են տարբեր զեկույցների և վերլուծությունների օգնությամբ:

«ՔՀԿ չափիչ 2021» Հայաստանի զեկույցի նախագիծը ուսումնասիրվել է Հայաստանի Խորհրդատվական խմբի անդամների կողմից՝ էլեկտրոնային հաղորդակցության միջոցով, և քննարկվել 2021 թվականի դեկտեմբերի 20-ին կայացած դեմատղեմ հանդիպման ժամանակ: Խորհրդատվական խմբի անդամների առաջարկությունների հիման վրա զեկույցի վերջնական տարբերակում վերանայվել և լրացվել են զեկույցի հիմնական բացահայտումները և առաջարկները: Ձեկույցի հիմնական բացահայտումները ներկայացվել են 2022 թվականի ապրիլի միջոցառմանը, որի ընթացքում մասնակիցները քննարկեցին զեկույցի հիմնական բացահայտումներն ու վերահաստատեցին հիմնական առաջարկները, այնուհետև լրացուցիչ առաջարկները ներառվեցին զեկույցի վերջնական տարբերակում:

Գնահատման գործընթացը

Հայաստանի Խորհրդատվական խմբի անդամները գնահատել են «ՔՀԿ չափիչ» գործիքի 11 ոլորտների բոլոր չափորոշիչները՝ օրենսդրական և գործնական դաշտում: Գնահատման ընթացակարգի համար օգտագործվել է 7 բալանոց սանդղակ: Սանդղակի ծայրահեղ արժեքները համարվում են ծայրահեղ կամ իդեալական իրավիճակներ կամ միջավայր: Օրինակ, 1-ը ՔՀԿ-ների համար չափազանց անբարենպաստ (ավտորիտար) միջավայր է նշանակում, իսկ 7-ը՝ ծայրահեղ բարենպաստ (իդեալական ժողովրդավարական) միջավայր: «ՔՀԿ չափիչ» գործիքի, գնահատման գործընթացի և հաշվարկի մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք <https://csometer.info/>: 2021 թվականի այս զեկույցում ներկայացված միավորները կծառայեն որպես ելակետային միավորներ, և առաջիկա տարիների առաջընթացը կչափվի դրանց համեմատ:

VI. ՀՂՈՒՄՆԵՐ

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 05.07.1995, փոփ. 06.12.2015, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510>
- ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք, վերջին փոփ. 30.07.2021, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=155146>
- ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 05.05.1998, վերջին փոփ. 20.05.2021, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=74658>
- Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, 06.12.1985, վերջին փոփ. 30.07.2021, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=73129>
- ՀՀ քրեական օրենսգիրք, 18.04.2003, վերջին փոփ. 30.07.2021, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=155365>
- ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 01.07.1998, վերջին փոփ. 30.06.2021, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=68011>
- ՀՀ դատական օրենսգիրք, 07.02.2018, վերջին փոփ. 03.02.2021, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=119531>:

- ՀՀ հարկային օրենսգիրք, 04.10.2016, վերջին փոփ. 27.05.2021, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=155468>
- ՀՀ «Ազգային Ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենք, 16.12.2016, վերջին փոփ. 24.03.2021, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=151845>
- ՀՀ Սահմանադրական օրենքը «Կուսակցությունների մասին», 16.12.2016, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=153100>
- ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», 26.12.2002, վերջին փոփ. 19.01.2021, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=150035>
- ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, վերջին փոփ. 05.05.2021, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=152972>
- ՀՀ օրենքը «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին», 06.02.2002, վերջին փոփ. 11.09.2019, <https://www.arlis.am/documentView.aspx?docid=43743>
- ՀՀ օրենքը «Տեսալսողական մեդիայի մասին», 16.07.2020, վերջին փոփ. 29.12.2020, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=149258>
- ՀՀ օրենքը «Բարեգործության մասին», 08.10.2002, վերջին փոփ. 21.06.2018, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=123353>
- ՀՀ օրենքը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին», 26.05.2008, վերջին փոփ. 03.06.2021, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=64606>
- ՀՀ օրենքը «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», 08.07.2005, վերջին փոփ. 03.03.2021, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152672>
- ՀՀ օրենքը «Հավաքների ազատության մասին», 14.04.2011, վերջին փոփ. 25.10.2017, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=117173>
- ՀՀ օրենքը «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին», 17.06.1991, վերջին փոփ. 14.04.2011, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=67169>
- ՀՀ օրենքը «Տեղեկատվության ազատության մասին», 23.09.2003, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=1372>
- ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին», 07.05.2002, խմբ. 16.12.2016, վերջին փոփ. 24.09.2021, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=156523>
- ՀՀ օրենքը «Զանգվածային լրատվության մասին», 13.12.2003, վերջին փոփ. 06.03.2020, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=140685>
- ՀՀ օրենքը «Նորմատիվ իրավական ակտերի մասին», 21.03.2018, վերջին փոփ. 19.04.2021, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152139>
- ՀՀ օրենքը «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին», 22.10.2007, վերջին փոփ. 03.03.2021, <https://www.arlis.am/documentView.aspx?docid=152666>
- ՀՀ օրենքը «Ոստիկանության մասին», 16.04.2001, վերջին փոփ. 18.06.2020, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=146074>
- ՀՀ օրենքը «Հանրային խորհրդի մասին», 07.03.2018, վերջին փոփ. 11.02.2021, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=150514>

- ՀՀ օրենքը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին», 03.04.2001, վերջին փոփ. 26.05.2021, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=154021>
- ՀՀ օրենքը «Անձնական տվյալների պաշտպանության մասին», 18.05.2015, վերջին փոփ. 09.07.2019, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=132745>
- ՀՀ օրենքը «Արհեստակցական միությունների մասին», 05.12.2000, վերջին փոփ. 19.01.2021, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=150020>
- ՀՀ օրենքը «Ազդարարման համակարգի մասին», 09.06.2017, վերջին փոփ. 12.07.2018, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=123969>
- ՀՀ օրենքը «Պետական տուրքի մասին», 27.12.1997, վերջին փոփ. 15.07.2021, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=156928>
- ՀՀ կառավարության թիվ 810-Ն որոշումը «Օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում օգտագործվող հատուկ (մշակված, ծրագրված, հարմարեցված) տեխնիկական միջոցների ցանկը հաստատելու մասին», 31.07.2008, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=45845>
- ՀՀ կառավարության թիվ 66-Ն որոշումը «Բարեգործական ծրագրերի մասին», 16.01.2003, վերջին փոփ. 31.01.2019, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=128100>
- ՀՀ կառավարության թիվ 1204-Ն որոշումը «Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին», 15.10.2015, վերջին փոփ. 26.11.2020, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=147567>
- ՀՀ կառավարության թիվ 1146-Ն որոշումը «Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 25-ի թիվ 296-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», 10.10.2018, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126002>
- ՀՀ կառավարության թիվ 298-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին», 16.03.2020, փոփ. 19.03.2020, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=145261>
- ՀՀ կառավարության թիվ 1586-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին», 27.09.2020, փոփ. 10.12.2020, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=146652>
- ՀՀ կառավարության թիվ 1937-Ն որոշումը «ՀՀ պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին», 24.12.2003, վերջին փոփ. 06.08.2021, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=155096>
- ՀՀ կառավարության թիվ 183-Լ որոշումը «Հայաստանի թվայնացման ռազմավարությանը, ռազմավարության միջոցառումների ծրագրին և

արդյունքային ցուցանիշներին հավանություն տալու մասին», 11.02.2021, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=149957>

- ՀՀ կառավարության թիվ 1552-Լ որոշումը «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 22-ի թիվ 624-Լ որոշման մեջ լրացում կատարելու մասին», 27.12.2018, <https://www.e-gov.am/gov-decrees/item/31320/>
- ՀՀ կառավարության թիվ 337-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», 31.03.2016, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=104665>
- ՀՀ կառավարության նիստի թիվ 40-42 արձանագրային որոշում «Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների հայեցակարգը հաստատելու մասին», 25.09.2014, https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2104/09/40-42.pdf
- ՀՀ կառավարության թիվ 1978-Լ որոշումը «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին», 26.12.2019, վերջին փոփ. 24.06.2021, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=154217>
- ՀՀ արդարադատության նախարարի թիվ 126-Ն հրաման, 20.03.2020, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=140628>
- ՀՀ վարչապետի օգոստոսի 2018 թվականի օգոստոսի 21-ի թիվ 1111-Ա որոշումը «Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի կանոնադրությունն ու կազմը հաստատելու և ՀՀ վարչապետի 2001 թվականի մարտի 14-ի թիվ 205 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», 21.08.2018, վերջին փոփ. 02.09.2021, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=155651>
- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրամանը հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության օրինակելի ձևը, հրապարակման և ներկայացման կարգը հաստատելու և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2019 թվականի փետրվարի 15-ի թիվ 102-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին», 27. 05. 2020, վերջին փոփ. 16.06.2021, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=153840>
- ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի թիվ 471-Ն որոշումը տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման սակագների և պայմանների հրապարակման կարգը հաստատելու մասին», 03.09.2008, վերջին փոփ. 25.07.2012, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=77489>
- Պետական գրանցման/հաշվառման/ համար անհրաժեշտ փաստաթղթեր, տուրքերի դրույքաչափեր և ժամկետներ, <https://www.e-register.am/am/docs/49>
- «Անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի նախագիծ, ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի առաջին ընթերցմամբ՝ 2021 թ. ապրիլի 19-ին, <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=11761&Reading=0>

- ՀՀ օրենքի նախագիծ «Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին», Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, <https://www.e-draft.am/projects/2516>

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԶԵԿՈՒՅՑՆԵՐ

- «Ապատեղեկատվությունն ու կեղծ տեղեկատվությունը Հայաստանում. դիմակայելով կեղծ պատմություններին», հունիս 2021 թ., Freedom House, https://freedomhouse.org/sites/default/files/2021-07/Disinformation-in-Armenia_Am-final.pdf
- «Թվային իրավունքները և դրանց կարևորությունը ինֆորմացիոն հասարակության համար», Դավիթ Սանդուխյան, «Թվային իրավունքների հետ կապված մարտահրավերները Հայաստանում», Մամվել Մարտիրոսյան, Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ, Երևան 2021, <https://mdi.am/wp-content/uploads/2021/10/digital-human-rights-research-and-articles.pdf>
- «Խաղաղ հավաքների ազատության մշտադիտարկում» (հոկտեմբեր-դեկտեմբեր 2020 թ.), Զեկույց, Հայաստանի Հելսինկյան կոմիտե, Երևան, 2021 թ., <http://armhels.com/publications/խաղաղ-հավաքների-ազատության-մշտադիտարկում-2/>
- «Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի 2021 թ. հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների դիտորդական առաքելության ամփոփիչ զեկույց», «Ականատես» դիտորդական նախաձեռնություն, <https://transparency.am/hy/news/view/3363>
- «Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ՋԼՄ-ների իրավունքների խախտումների մասին 2020 թ. տարեկան զեկույց», Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 26.01.2021, <https://khosq.am/reports/հայաստանում-խոսքի-ազատության-վիճակի-24/>
- «Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ՋԼՄ-ների իրավունքների խախտումների մասին 2021 թ. երկրորդ եռամսյակային զեկույց (ապրիլ-հունիս, 2021)», 23.07.2021, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, <https://khosq.am/reports/հայաստանում-խոսքի-ազատության-վիճակի-26/>
- «Հայաստանում հանրային մասնակցության հարթակների և հնարավորությունների քարտեզագրում. Հետազոտության զեկույց», Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, Երևան, 2021 թ., <https://transparency.am/hy/publications/view/409>
- «Տարեկան հաղորդում 2020 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին», ՀՀ մարդու իրավունքների պաշտպան, <https://ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf>
- Freedom on the Net 2021: Armenia (Ազատությունը համացանցում 2021. Հայաստան), Freedom House, <https://freedomhouse.org/country/armenia/freedom-net/2021>
- Philanthropy in Armenia, "NGO Center" Civil Society Development NGO, («Բարեգործությունը Հայաստանում», «ՀԿ կենտրոն» քաղաքացիական

հասարակության զարգացման հիմնադրամ ՀԿ), https://ngoc.am/wp-content/uploads/2021/01/Reseach-Final-Report_Nov-2020.pdf

VII. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

«ՔՀԿ ՉԱՓԻՉ» ՓՈՐՉԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐ

- Արփինե Հակոբյան, «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական զարգացման ՀԿ նախագահ
- Դավիթ Ամիրյան, Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի փոխտնօրեն
- Գայանե Մկրտչյան, ծրագրերի տնօրեն, Լիլիթ Արզոյան, ծրագրերի ղեկավար, Եվրասիա համագործակցություն հիմնադրամ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐ

- Անահիտ Չիլինգարյան, իրավաբան
- Արփինե Հակոբյան, «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական զարգացման ՀԿ
- Բրունո Մոնտարիոլ և Տաթևիկ Դավթյան, ԵՄ պատվիրակություն Հայաստանում
- Դավիթ Ամիրյան, Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան
- Լիլիթ Արզոյան, Եվրասիա համագործակցություն հիմնադրամ
- Լուսինե Հակոբյան, ԱՄՆ ՄԶԳ
- Նունե Պեպանյան, ՔՀԿ փորձագետ, «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամ
- Օլյա Ազատյան, Հումանիտար գիտությունների հայկական հետազոտական կենտրոն
- Սամվել Մարտիրոսյան, CyberHUB
- Շուշան Դոյդոյան, Ինֆորմացիայի ազատության կենտրոն

ՓՈՐՉԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

- Արաքս Մելքոնյան, «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ նախագահ
- Արթուր Պապյան, «Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտի» տնօրեն
- Արման Ղազարյան, Պետական եկամուտների կոմիտեի ոչ առևտրային կազմակերպությունների հսկողության բաժնի ղեկավար
- Գեղամ Վարդանյան, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի media.am կայքի գլխավոր խմբագիր
- Լուսինե Հակոբյան, ԱՄՆ ՄԶԳ «Տեղական լուծումներ» ծրագրի ղեկավար

- Նաիրա Սուլթանյան, ՄԱԶԾ խաղաղության և զարգացման գծով խորհրդական
- Մելան Մարտիրոսյան, Սախարովի անվան մարդու իրավունքների կենտրոնի Շիրակի մասնաճյուղի նախագահ
- Տաթև Մկրտչյան, Պետական ռեզիստրի գործակալության պետ
- Տաթևիկ Դավթյան, Հայաստանում Եվրամիության պատվիրակության միջազգային աջակցության և համագործակցության գծով ծրագրի ղեկավար

ՖՈԿՈՒՍ-ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

- Անահիտ Միմնյան, Մարդու իրավունքների հետազոտական կենտրոն
- Անդրանիկ Երվանդյան «Մարապատ» համայնքային զարգացման ՀԿ
- Արմինե Թուխիկյան, «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամ
- Արսեն Արսենյան, Երեխաների աջակցության հիմնադրամ
- Արփինե Սերոբյան, «Լուսաստղ» ՀԿ
- Գայանե Աղաբալյան, Մանկական զարգացման հիմնադրամ
- Գևորգ Քոթանջյան, «Ուղղակի ժողովրդավարություն» ՀԿ
- Ելենա Հարությունյան, ՄԻՏՔ կրթական-երիտասարդական նախաձեռնություն ՀԿ
- Թենի Ավագյան, «Հայ աղջիկները ֆուտբոլում» ՀԿ
- Ժաննա Ալեքսանյան, «Լրագրողներ հանուն մարդու իրավունքների» ՀԿ
- Հասմիկ Գաբրիելյան, Սոցիալ-տնտեսական քաղաքականության տարածաշրջանային հետազոտությունների ինստիտուտ ՀԿ
- Հասմիկ Մխիթարյան, «Գյումրու առաջընթաց» քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոն ՀԿ
- Հերմինե Կարապետյան, «Գտնված երագ» ստեղծարար միջավայրերի ձևավորման նախաձեռնություն
- Ղարիբ Հարությունյան, «Կոմպասս գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» ՀԿ
- Մամիկոն Հովսեփյան, «Փինք» իրավապաշտպան ՀԿ
- Մանուշ Մարալյան, «Երիտասարդ Տավուշ» ՀԿ
- Մարինե Ադուլյան, «Բարի մամա» ՀԿ
- Մարինե Եգորյան, «Երեխայի և ընտանիքի զարգացման կենտրոն» բարեգործական ՀԿ
- Մարո Մաթոսյան, Կանանց աջակցության կենտրոն
- Մերի Ղուլոյան, «Արժանապատիվ սերունդ» ՀԿ
- Մհեր Կարապյոզյան, «Հանրային վերահսկողություն» ՀԿ

- Նվարդ Բոցինյան, «Պրոգրես» երիտասարդական ՀԿ
- Նվարդ Փիլիպոսյան, Կանանց ռեսուրսային կենտրոն
- Շուշանիկ Սահակյան, «Երիտասարդական գաղափարներ» երիտասարդական ՀԿ
- Ռիմա Գրիգորյան, Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ
- Ռուզան Ղազարյան, «Աշխատանք և հայրենիք» ՀԿ
- Սուսաննա Շահնազարյան, Գործիսի մամուլի ակումբ
- Վարդիթեր Համբարձումյան, Վարդենիսի ԵՄՔԱ
- Օլեգ Դուլգարյան, «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ

